Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2009-2012 թթ. ընթացքում

Այլընտրանքային զեկույց

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2009-2012 ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

Այլընտրանքային զեկույց

ԵՐԵՎԱՆ - 2014

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Համալսարանական կրթությամբ
կանանց ասոցիացիա

ՀՏԴ 396 (042.3)
ԳՄԴ 66.74
Կ 200

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին
Կ 200 ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում
2009-2012 թթ. ընթացքում: Այլընտրանքային զեկույց.- Եր.: Ասողիկ, 2014.- 118 էջ:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին
ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում
2009-2012 թթ. ընթացքում»
այլընտրանքային զեկույցը
պատրաստվել է
Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փորձագետների կողմից
**«Կանանց քաղաքական մասնակցությունը և քաղաքացիական նախաձեռնությունները.
գենդերային հավասարության հասնելու հեռանկարները Հայաստանում»**
ծրագրի շրջանակներում
Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի աջակցությամբ:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փորձագետները
երախտագիտություն են հայտնում հանրապետության նախարարություններին,
քաղաքական կուսակցություններին և հասարակական կազմակերպությունների
ղեկավարներին ու ակտիվիստներին կլոր սեղանին և ֆոկուս խմբերին
մասնակցելու համար, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր տրամադրել են
նյութեր և վիճակագրական տվյալներ

ՀՏԴ 396 (042.3)
ԳՄԴ 66.74

ISBN 978-9939-50-268-7

**© Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2014 թ.
նյութերի օգտագործման դեպքում հղումը պարտադիր է**

Զեկույցը պատրաստել է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի հետևյալ փորձագետների խումբը.

Զեմմա Հասրաթյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Թամարա Հովնաթանյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի վարչության անդամ, «Նովոյե վրեմյա» թերթի քաղաքական մեկնաբան, «Կինը և քաղաքականությունը» թերթի գլխավոր խմբագիր

Լիլիթ Զաքարյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Գայանե Արմաղանովա

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փոխնախագահ, Հայաստանի առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միության նախագահ

Հարություն Մարզպանյան

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Բովանդակություն

Ներածություն 5
Երկրի համառոտ բնութագիրը 12
Զեկույցի ամփոփ նկարագիրը 13

ՄԱՍ 1
Առանցքային հիմնախնդիրների վերլուծություն 19

Հոդված 1. *«Խտրականություն» հասկացությունը* 19
Հոդված 2. *Պետության՝ խտրականության վերացման քաղաքականություն վարելու պարտավորությունները* 24
Հոդված 3. *Կանանց առաջընթացի ապահովմանն ուղղված միջոցների համակարգը* 30
Հոդված 4. *Ժամանակավոր հատուկ միջոցները* 35
Հոդված 5. *Տղամարդկանց և կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելների փոփոխում* 40
Հոդված 6. *Կանանց առևտրի և մարմնավաճառության շահագործման բոլոր տեսակների կանխումը* 46

ՄԱՍ 2
Հոդված 7. *Կանանց նկատմամբ խտրականության վերացումը երկրի քաղաքական և հասարակական կյանքում* 51
Հոդված 9. *Քաղաքացիության ձեռքբերման, փոփոխման կամ պահպանման կապակցությամբ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները* 62

ՄԱՍ 3.
Հոդված 10. Խտրականության վերացումը կրթության ոլորտում 63
Հոդված 11. Զբաղվածության ոլորտում կանանց նկատմամբ խտրականության վերացումը 69
Հոդված 12. Խտրականության վերացումը առողջապահության ոլորտում 75
Հոդված 13. Սոցիալական և տնտեսական նպաստներ 84
Հոդված 14. Գյուղաբնակ կանանց նկատմամբ խտրականության վերացումը 88
Հոդված 15. Տղամարդկանց և կանանց հավասարությունն օրենքի առջև 95
Հոդված 16. Կանանց նկատմամբ խտրականության վերացումը ամուսնության և ընտանեկան հարաբերություններին վերաբերող հարցերում 98

ՄԱՍ 4.
Բռնությունը կանանց նկատմամբ 101
Եզրակացություն 109
Հավելվածներ 111

Ներածություն

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (ԿՆԽՎԿ/CEDAW)՝ ընդունված 1979 թ. դեկտեմբերի 18-ին, համակողմանի փաստաթուղթ է, որն ամփոփում է ՄԱԿ-ի բազմամյա ջանքերը կանանց իրավունքների պաշտպանության միջազգային իրավաբանական չափորոշիչների համակարգման ուղղությամբ:

Հայաստանը Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան վավերացրել է 1993 թ. հունիսի 3-ին՝ ստանձնելով մի շարք պարտավորություններ, որոնք նախատեսում են խտրականության բացառմանը և քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային ոլորտներում կանանց համակողմանի զարգացման և առաջնթացի ապահովմանն ուղղված համալիր գործողություններ:

Տվյալ կոնվենցիայի յուրահատկություններից մեկն այն է, որ պետությանը պարտավորեցնում է համապատասխան քայլեր ձեռնարկել մարդկանց գիտակցության խորքային մակարդակների բարեփոխման, տղամարդկանց և կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելների փոփոխման համար:

Կոնվենցիային միանալը նշանակում է նաև, որ պետությունը ոչ միայն հռչակում է հարգանքը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների նկատմամբ, այլև պարտավորություն է ստանձնում ապահովել հավասար հնարավորություններ դրանց իրականացման համար:

Կոնվենցիայի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նախատեսում է պետության ստանձնած պարտավորությունների կատարման մշտադիտարկում (մոնիթորինգ): Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ որպես կոնվենցիայում նախատեսված մշտադիտարկման համակարգը համադասող փորձագիտական մարմնի առկայությունը, անշուշտ, բարձրացնում է դրա արդյունավետությունը գենդերային հավասարություն հռչակող այլ փաստաթղթերի համեմատությամբ: Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությունն արտացոլված է, փաստորեն, գենդերային հավասարությանը նվիրված բոլոր հետագա փաստաթղթերում, մասնավորապես՝ Պեկինի գործողությունների ծրագրում և Հազարամյակի զարգացման նպատակներում, որոնց նույնպես Հայաստանը միացել է:

Վավերացումից հետո անցած ժամանակաշրջանում Հայաստանը կոնվենցիայի կոմիտե է ներկայացրել չորս զեկույց. առաջինը՝ 1996 թ., երկրորդը (պարբերական)՝ 1999-ին և համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցը՝ 2008 թ.:

Համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի կապակցությամբ Կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի կառավարությանն են ուղարկվել 2009 թ.:

Այսպիսով, կառավարության հերթական զեկույցն ընդգրկում է 2009 - 2012 թթ. ժամանակահատվածը:

Համաձայն ձևավորված գործելակերպի՝ կառավարությունները հերթական պարբերական զեկույցի նախապատրաստման ընթացքում կողմնորոշվում են ըստ նախորդ զեկույցի վերաբերյալ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումների և հանձնարարականների: Այդ մոտեցումն է կիրառվել սույն այլընտրանքային զեկույցը կազմելիս:

Հայաստանի 2009 թ. զեկույցի կապակցությամբ Կոմիտեի հանձնարարականներում մտահոգություն է արտահայտվել հետևյալ հարցերի առնչությամբ.

- *գենդերային քաղաքականության և օրենսդրության գենդերային փորձաքննության բացակայության, պետության կողմից կանանց նկատմամբ խտրական գործելակերպի հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցների անբավարարություն,*
- *սեռերի իրավահավասարությունն ամրագրող օրենսդրության և գենդերային տեսանկյունից չեզոք քաղաքականության հետևանքով ստեղծված իրական վիճակի էական տարբերություններ,*
- *կոնվենցիայի և գենդերային հավասարության քաղաքականության մասին բնակչության լայն խավերի և պաշտոնատար անձանց ցածր իրազեկություն, «կանանց նկատմամբ խտրականության» չգիտակցման և գենդերային հավասարության գաղափարների վարկաբեկման փորձեր,*
- *օրենսդիր իշխանությունում գենդերային անհավասարակշռության հաղթահարման նպատակով ձեռնարկվող հատուկ ժամանակավոր միջոցների անարդյունավետություն,*
- *Ազգային ժողովում և տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ցածր ներկայացվածություն,*
- *գործադիր իշխանության բոլոր ճյուղերում որոշումների ընդունման մակարդակում կանանց ցածր ներկայացվածություն, պետության քաղաքականության և հասարակական-քաղաքական կյանքում կատարվող գործընթացների վրա կանանց սահմանափակ ազդեցություն,*
- *ազգային մեխանիզմի՝ որպես կանանց նկատմամբ խտրականության հաղթահարման գործիքի բացակայություն,*
- *հասարակության մեջ գենդերային կարծրատիպերի լայն տարածվածություն և դրանց հաղթահարմանն ուղղված պետական միջոցների բացակայություն,*
- *ԶԼՄ-ներում կնոջ կերպարի կարծրատիպային պատկերացումների վերարտադրություն և գենդերային հավասարության գաղափարի չընդունում,*
- *զբաղվածության ոլորտում և աշխատաշուկայում հորիզոնական և ուղղահայաց գենդերային խտրազատման և տղամարդկանց համեմատ՝ կանանց փաստացի մի՛ջին աշխատավարձի էապես ցածր մակարդակ,*
- *պաշտոնապես գրանցված գործազուրկների շրջանում կանանց էական բարձր մասնաբաժին, կանանց համար վարկերի և ռեսուրսների սահմանափակ մատչելիություն,*
- *գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքի և կենցաղի անբարենպաստ պայմաններ,*
- *կրթության ոլորտում զգայուն գենդերային քաղաքականության բացակայություն, կրթության համակարգում աղջիկների ընդգրկվածության նվազման վտանգի առկայություն, կրթական քաղաքականության մշակման վրա կանանց թույլ ազդեցություն,*

- *առողջապահության ոլորտի պետական ֆինանսավորման ցածր մակարդակի, կանանց համար որակյալ բժշկական ընդհանուր ծառայությունների սահմանափակ հասանելիություն,*
- *կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի պետական միջոցների անբավարարություն, բռնության զոհերի իրավական և սոցիալական անպաշտպանվածություն, հասարակության մեջ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի հանդեպ անհանդուրժողականության բացակայություն,*
- *գենդերային հավասարության քարոզչության ուղղությամբ հասարակայնության հետ պետական կառույցների աշխատանքի համակարգի բացակայություն:*

Սույն զեկույցը պատրաստելիս նշված հիմնախնդիրներին հատուկ ուշադրություն է հատկացվել:

Կոմիտեն ՀՀ կառավարության ուշադրությունն է հրավիրել նաև Հայաստանում Եզրափակիչ դիտարկումների և գենդերային հավասարության ձեռքբերմանն ուղղված այլ միջազգային փաստաթղթերի լայն տարածման անհրաժեշտության վրա:

Սակայն Կոմիտեի մեկնաբանություններն ու հանձնարարականները հրապարակային լուրջ քննարկման առարկա չեն դարձել, չեն քննարկվել խորհրդարանում և ՀՀ կառավարությունում, չեն արժանացել հասարակական կազմակերպությունների պատշաճ ուշադրությանը և չեն դարձել հասարակության լայն խավերի սեփականությունը:

Հազվադեպ քննարկումները սահմանափակվել են կա՛մ փվյալ հարցում շահագրգիռ կանանց կազմակերպությունների նեղ շրջանի նախաձեռնություններով, կա՛մ հաշվետու զեկույցների համար պատասխանատու նախարարությունների կողմից կազմակերպված ձևական քննարկումներով՝ այդ նույն կազմակերպությունների ներգրավմամբ:

Հայաստանում Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ այլընտրանքային զեկույցը, որ ներկայացվում է ստորև, պատրաստել է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենտրոնի և Ժողովրդավարության և խաղաղության կենտրոնի փորձագետների ու հետազոտողների խումբը Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության աջակցությամբ իրականացվող ***«Կանանց քաղաքական մասնակցությունը և քաղաքացիական նախաձեռնությունները. գենդերային հավասարությանը հասնելու հեռանկարները Հայաստանում»*** ծրագրի շրջանակներում:

Զեկույցն ընդգրկում է համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցից հետո ընկած ժամանակահատվածը՝ 2009-2012 թվականները (առանձին դեպքերում ներկայացված է հիմնախնդիրների շարժընթացը՝ ներառելով նաև ավելի վաղ ժամանակաշրջաններ):

Զեկույցի նպատակները.

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման անկախ գնահատում բոլոր առանցքային ոլորտների և պարտավորությունների առնչությամբ,
- Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիայի իրականացումը խոչընդոտող խնդիրների բացահայտում,
- հիմնախնդիրների լուծման հնարավոր ուղիների կանխորոշում՝ ՀՀ խորհրդարանին, ՀՀ կառավարությանը, իշխանական այլ կառույցներին, քաղաքական կուսակցություն-

ներին և հասարակական կազմակերպություններին ուղղված առաջարկություններով օրենսդրական գործելակերպում գենդերային հիմնախնդիրների նկատառման և գենդերային հավասարության առաջմղման համար ՀՀ կառավարության ծրագրերում գենդերային բաղադրիչի ինտեգրման նպատակով,

- քաղաքացիական հասարակության ինստիտուտներին ներկայացվելիք երաշխավորությունների մշակում գենդերային հավասարության առաջմղմանն ու կանանց քաղաքական մասնակցության խթանմանն ուղղված գործունեության ակտիվացման ուղղությամբ:

Ակնկալվող արդյունքները

Այլընտրանքային զեկույցի պատրաստումը և լայն քննարկումը հնարավորություն կտա՝

- *բացահայտելու հայ հասարակությունում կանանց վիճակի և երկրի հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու նրանց իրավունքի պաշտպանության հետ կապված իրադրությունը,*
- *բարձրացնելու իշխանական կառույցների պատասխանատվությունը պետական գենդերային քաղաքականության իրականացման և կառավարման համակարգում քաղաքական որոշումների ընդունման մակարդակում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության նվաճման համար,*
- *ներկայացնելու երաշխավորություններ, որոնք կօգնեն խուսափել կանանց վիճակի հետ կապված իրադրության միակողմանի մեկնաբանությունից և կնպաստեն հրաժարմանը կանանց նկատմամբ խտրականության վերացման ոլորտում իմիտացիոն միջոցներից,*
- *քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների և լայն հասարակության ուշադրությունը սևեռելու Հայաստանի՝ կոնվենցիայի իրականացման կապակցությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վրա,*
- *հանրապետության հասարակական, առաջին հերթին կանանց կազմակերպություններին տրամադրելու փաստական նյութեր և գործիքներ կանանց շահերի առաջմղման և իրավունքների պաշտպանության համար,*
- *խթանելու սոցիալական գործընկերությունը իշխանական կառույցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև խտրական գործելակերպի հաղթահարման, գենդերային հավասարության առաջմղման և երկրում ժողովրդավարության խորացման համար:*

Զեկույցի ձևաչափը

Այլընտրանքային զեկույցի նախապատրաստումն իրականացվել է ԿՆԽՎ/CEDAW կոմիտեի ղեկավար սկզբունքների և պարբերական ու այլընտրանքային զեկույցների կազմման վերաբերյալ հատուկ ուղեցույցների[1] հիման վրա: Փորձագետներն ուսումնասիրել են մի շարք երկրների այլընտրանքային զեկույցների մշակման փորձը: Կիրառվող բազմաթիվ ձևերից և մոտեցումներից ընտրված և Հայաստանի իրավիճակի առանձնահատկության նկատառմամբ փոփոխված ձևաչափը համապատասխանում է այլընտրանքային զեկույցների վերաբերյալ ընդհանուր հանձնարարականներին և ներառում է երեք հիմնական բաժին.

1. *Ներածություն: Երկրի համառոտ բնութագիրը:*
2. *Զեկույցի ամփոփ նկարագիրը:*
3. *Ըստ հոդվածների վերլուծություն՝ յուրաքանչյուր հոդվածում հիմնահիմնդրային բնագավառների և իշխանության կառույցներին հասցեագրված երաշխավորությունների առանձնացմամբ, ուղղված զեկույցում դիտարկված խտրական գործելակերպի հաղթահարմանը:*

Կոնվենցիայում չկա հատուկ հոդված բռնության վերաբերյալ, սակայն հեղինակները կարևոր և նպատակահարմար են գտել ներկայացնել նաև կանանց նկատմամբ բռնության հիմնախնդիրը:

Զեկույցի պատրաստման մեթոդաբանությունը

Մեթոդաբանության ընտրության հարցում փորձագետների խումբն առաջնորդվել է ԿՆԽՎ կոմիտեի ղեկավար սկզբունքներով և պարբերական ու այլընտրանքային պաշտոնական զեկույցների կազմման հատուկ ձեռնարկներով: Ընտրված մեթոդիկան հիմնված է երեք բաղադրիչների՝ իրավիճակի գնահատման, ըստ հոդվածների վերլուծության և թեմատիկ մոտեցման վրա՝ երկրի համար առավել կարևոր հիմնախնդիրների շեշտադրմամբ:

ԿՆԽՎ կոմիտե ներկայացվելիք այլընտրանքային զեկույցը պատրաստելիս փորձագետները նպատակահարմար են գտել խորությամբ վերլուծել կոնվենցիայի իրականացման ոչ բոլոր, այլ միայն երկրների առանցքային պարտավորությունները: Նման մոտեցումը հնարավորություն է տվել վերլուծելու իրավիճակը բոլոր հիմնախնդրային ոլորտներում և ներկայացնելու այդ ոլորտներում բացասական գործելակերպի հաղթահարման երաշխավորությունները:

Փորձագետների խումբը հաշվի է առել ԿՆԽՎ կոմիտեի դիտողությունները և հանձնարարականները ՀՀ կառավարության նախորդ չորս զեկույցների առնչությամբ, հիմնվել է հաշվետու ժամանակաշրջանում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կատարած մի շարք հետազոտությունների, ինչպես նաև այլ հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետազոտությունների արդյունքների վրա:

ԿՆԽՎ կոմիտեի հանձնարարականների տեսանկյունից ըստ հոդվածների վերլուծության են ենթարկվել հետևյալ հիմնահիմնդիրները.

1. INTERNATIONAL WOMEN'S RIGHTS ACTION WATCH կազմակերպության հանձնարարականները այլընտրանքային զեկույցների նախապատրաստման վերաբերյալ:

- *«խտրականություն» հասկացությունը,*
- *պետության՝ խտրականության վերացման քաղաքականություն վարելու պարտավորությունները,*
- *կանանց առաջընթացի ապահովմանն ուղղված միջոցների համակարգը,*
- *ժամանակավոր հատուկ միջոցները,*
- *տղամարդկանց և կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելների փոփոխումը,*
- *կանանց առևտրի և մարմնավաճառության շահագործման բոլոր տեսակների կանխումը,*
- *կանանց նկատմամբ խտրականության վերացումը երկրի քաղաքական և հասարակական կյանքում,*
- *քաղաքացիության ձեռքբերման, փոփոխման կամ պահպանման կապակցությամբ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները,*
- *խտրականության վերացումը կրթության ոլորտում,*
- *զբաղվածության ոլորտում կանանց նկատմամբ խտրականության վերացումը,*
- *խտրականության վերացումը առողջապահության ոլորտում,*
- *սոցիալական և տնտեսական նպաստները,*
- *գյուղաբնակ կանանց նկատմամբ խտրականության վերացումը,*
- *տղամարդկանց և կանանց հավասարությունն օրենքի առջև,*
- *կանանց նկատմամբ խտրականության վերացումը ամուսնության և ընտանեկան հարաբերություններին վերաբերող հարցերում,*
- *բոնությունը կանանց նկատմամբ:*

Առավել մանրամասն վերլուծություն է արվել հետևյալ համակարգաստեղծ հիմնախնդիրների վերաբերյալ.

- *ազգային մեխանիզմը՝ որպես կոնվենցիայի իրագործման վերահսկողության և պետական քաղաքականության մեջ գենդերային բաղադրիչի ներդրման անհրաժեշտ և պարտադիր պայման,*
- *կանանց քաղաքական մասնակցությունը՝ որպես օրենսդիր և գործադիր իշխանություններում, քաղաքական որոշումների ընդունման մակարդակում կանանց անբավարար ներկայացվածության հիմնախնդիր, ինչը նվազագույնի է հասցնում կանանց՝ պետական քաղաքականության վրա ազդելու հնարավորությունները և հանգեցնում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում խտրական գործելակերպի ամրապնդման,*
- *աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում կանանց նկատմամբ խտրականության, կանանց շրջանում գործազրկության և աղքատության չափազանց դանդաղ նվազում, տնտեսական կառույցների ղեկավարման գործում և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց օտարում ակտիվ մասնակցությունից:*

Զեկույցը կազմելիս փորձագետներն օգտագործել են 2008-2012 թթ. ժամանակաշրջանում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենտրոնի և Ժողովրդավարության և խաղաղության կենտրոնի կատարած մի շարք հետազոտությունների, սոցիոլոգիական հարցումների նյութերն ու տվյալները, որոնց անցկացման ու վերլուծության անմիջական մասնակիցն են եղել: Այդ հետազոտությունները կատարվել են հետևյալ ծրագրերի շրջանակներում.

- *«Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն», 2009-2012 թթ.,*
- *«Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում», 2008-2010 թթ.,*
- *«ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ որպես օրենսդիր իշխանությունում և տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային հավասարակշռության հասնելու գործիք», 2011 թ.,*
- *«Համայնքային և տնտեսական զարգացում Հայաստանում» ծրագրի գենդերային տեսանկյունները», 2011 թ.,*
- *«Կանանց քաղաքական մասնակցությունը և քաղաքացիական նախաձեռնությունները. գենդերային հավասարությանը հասնելու հեռանկարները Հայաստանում», 2012-2013 թթ.,*
- *«Կանանց քաղաքական մասնակցությունը 2012 թ. խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին», 2012-2013 թթ.,*
- *«Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում կանանց արդյունավետ մասնակցության կարողությունների հզորացում», 2012-2014 թթ.*[2]*:*

Փորձագետներն օգտվել են նաև Ազգային վիճակագրական ծառայության, Քաղաքացիական ծառայության խորհրդի տվյալներից և նույն ժամանակաշրջանում միջազգային կազմակերպությունների ու հանրապետության այլ հասարակական կազմակերպությունների անցկացրած մի շարք հատուկ հետազոտությունների և սոցիոլոգիական հարցումների արդյունքներից, այդ թվում. «Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ» («Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն), «Որոշումների կայացման մակարդակում կանանց թերներկայացվածության պատճառները» (Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ), «Գենդերային հիմնախնդիրների լուսաբանումը ԶԼՄ-ներում» և «Կնոջ կերպարը լրատվամիջոցների ներկայացմամբ: Մոնիթորինգի վերլուծական հաշվետվություն» («Պրոմեդիա-Գենդեր» ՀԿ), «Կնոջ կերպարը հայկական գովազդում» («Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստան» կազմակերպության կրթաթոշակառուների հետազոտական խումբ), «Կնոջ կերպարը հայկական սերիալներում» (ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի խումբ), «Հեռու մնա կարծրատիպերից» («Հասարակություն առանց բռնության» ՀԿ), «Կանանց պատկերացումները մարդու իրավունքների վերաբերյալ և վարքը դրանց պաշտպանության հարցում» («Կանայք հանուն ժողովրդավարության, «Շահիսաթուն» ՀԿ), «Կանայք Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ» (Կովկասի ինստիտուտ):

2. Նշված ծրագրերի շրջանակներում հրատարակվել են հետևյալ գրքերը. «Հասարակական շարժումը երրորդ հազարամյակի հեռանկարում. նոր մարտահրավերներ, առաջնայնություններ և ռազմավարություն (համաժողովի նյութեր)», 2009, «Գենդերային հավասարության հասնելու հեռանկարները Հայաստանում. քաղաքական և իրավական հայեցակետերը (միջազգային խորհրդաժողովի նյութեր)», 2010, «Կանանց նկատմամբ խտրականության հաղթահարումը՝ որպես քաղաքական հիմնախնդիր և ժողովրդավարական հասարակության կայացման նախադրյալ (համաժողովի նյութեր)», 2010, Զաքարյան Լ., Հարությունյան Ա. «Գենդեր և լրագրություն», 2010, «Մարդու իրավունքները՝ որպես համամարդկային և բարոյական արժեք (համաժողովի նյութեր)», 2011, «Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին: Վերլուծական տեսություն», 2012, «Կանանց մասնակցությունը Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների 2012-2013 թվականների ընտրություններին: Վերլուծական տեսություն», 2013:

Երկրի համառոտ բնութագիրը

Պաշտոնական անվանումը՝ Հայաստանի Հանրապետություն:

Տարածքը՝ 29,74 հազար քկմ:

Բնակչությունը՝ 3,018 մլն մարդ (ըստ 2011 թ. մարդահամարի նախնական արդյունքների), այդ թվում՝ 52%-ը կանայք, 48%-ը՝ տղամարդիկ: Բնակչության 37% -ն ապրում է գյուղական, իսկ 63%-ը՝ քաղաքային բնակավայրերում, ընդ որում ավելի քան 35%-ը՝ միայն մայրաքաղաք Երևանում:

Էթնիկական կազմը. 97%-ը՝ հայեր, 3%-ը՝ ազգային փոքրամասնություններ՝ եզդիներ, ռուսներ, քրդեր, ասորիներ, հույներ, ուկրաինացիներ, հրեաներ և այլն:

1991 թ. անկախության հռչակումից հետո երկրում սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական ընդհանուր վիճակը պայմանավորվեց շուկայական տնտեսությանը և ժողովրդավարական պետության կայացմանը միտված համակարգային վերափոխումներով, որոնք առ այսօր իրականացվում են ղարաբաղյան հակամարտության հետևանքով ձևավորված «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» անբարենպաստ իրադրության պայմաններում: «Շոկային թերապիայի» սկզբունքով իրականացված բարեփոխումները շատ բարձր սոցիալական գին ունեցան, ինչի դրսևորումներից են զանգվածային գործազրկության, բնակչության աղքատության կտրուկ աճը, անաշխատ եկամուտների և կոռուպցիայի մասշտաբների աննախադեպ ընդլայնումը, բնակչության սոցիալական շերտավորման խորացումը, ի վերջո, երկրի ժողովրդագրական հաշվեկշռի սրընթաց վատթարացումը: Անցանկալի փոփոխությունների սոցիալական բեռն առաջին հերթին ընկավ բնակչության առավել խոցելի շերտերի, այդ թվում՝ կանանց ուսերին:

2008 թ. նախորդած տասնամյակը բնութագրվեց երկրի մակրոտնտեսական ցուցանիշների շոշափելի բարելավմամբ, տարեկան միջինը շուրջ 10%-անոց տնտեսական աճով, բնակչության կենսամակարդակի ու կյանքի որակի բարձրացման համար անհրաժեշտ մի շարք նախադրյալների ստեղծմամբ, թեպետ սոցիալ-տնտեսական վերափոխումներն ընդհանուր առմամբ տեղի էին ունենում «աճ առանց զարգացման» սցենարով: Այդ տասնամյակի ընթացքում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն յոթնապատիկ ավելացավ (1999 թ.՝ 503 ԱՄՆ դոլար, 2008 թ.՝ 3684 ԱՄՆ դոլար), իսկ աղքատության մակարդակը կրճատվեց ավելի քան երկու անգամ (1999 թ.՝ 55%, 2008 թ.՝ 27%), այդուհանդերձ տնտեսական աճի պտուղները համեմատաբար ավելի մեծ չափով բաժին էին ընկնում քաղաքացիների առավել ապահովված խավերին:

2008-2012 թթ. ընթացքում մակրոտնտեսական կայունացման դրական միտումները չպահպանվեցին՝ պայմանավորված հիմնականում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ և երկրի տնտեսության ցածր մրցունակությամբ. տնտեսական լճացման և բարձր գնաճի պայմաններում նվազեց վարձու աշխատողների իրական աշխատավարձը, շուրջ 10 տոկոսային կետով՝ 24%-ից մինչև 34% բարձրացավ աղքատության մակարդակը: 2012 թ. երկրում նվազագույն աշխատավարձը կազմել է 32500 դրամ (մոտ 80 ԱՄՆ դոլար), իսկ նվազագույն կենսաթոշակը՝ 10500 դրամ (26 ԱՄՆ դոլար), այն դեպքում, երբ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը գնահատվում է ավելի քան 50 հազար դրամ: Սոցիալական անապահովության բարձր մակարդակը՝ զուգակցված երկրում մեծածավալ ստվերային տնտեսության, ազգային արժույթի փոխարժեքի տատանումների, եկամուտների բաշխման անհամաչափության անընդունելիորեն բարձր մակարդակի, համակարգային կոռուպցիայի, սոցիալական մեկուսացման, լայնամասշտաբ արտագաղթի և այլ բացասական երևույթների հետ, լուրջ խոչընդոտներ են ստեղծել Հայաստանի սոցիալ-տնտեսական համալիր զարգացման ճանապարհին:

Վերջին շրջանում Հայաստանում ծավալվում են մի շարք կարևոր հասարակական-քաղաքական իրադարձություններ, որոնք կարող են բախտորոշ նշանակություն ունենալ երկրի հետագա զարգացման համար: Մի կողմից՝ Եվրասիական միության հետ համագործակցության ընդլայնման նպատակով նախատեսվում է Հայաստանի անդամակցումը Մաքսային միությանը, մյուս կողմից՝ եվրոպական «Նոր հարևանության քաղաքականություն» ծրագրի շրջանակում ավարտական փուլ են թևակոխել Եվրամիությանն ասոցացման պաշտոնական բանակցությունները, որոնցով հստակեցվել են նաև նրա հետ համագործակցության ձևաչափերը: Հայաստանի ստանձնած պարտավորությունների համաձայն՝ սկսվել են երկրի օրենսդրական, իրավապաշտպան, կրթական և այլ համակարգերի բարեփոխման գործընթացները՝ դրանք եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակադրմամբ:

2010 թ. փետրվարին ՀՀ կառավարությունը հաստատեց Գենդերային քաղաքականության հայեցակարգը, իսկ 2013 թ. մայիսին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը: Այդպիսով երկրում որոշակի ինստիտուցիոնալ նախադրյալներ առաջացան կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման և կանանց վիճակի բարելավման ազգային մեխանիզմի ձևավորման համար:

Ըստ ՄԱԿ-ի Մարդկային զարգացման համաթվի (HDI)՝ 2012 թ. Հայաստանն աշխարհի 186 երկրների շարքում զբաղեցնում է 87-րդ տեղը, իսկ ըստ Գենդերային անհավասարության համաթվի (GII, որը հաշվի չի առնում եկամտի գործոնը)՝ 59-րդ տեղը[3], ինչն ընդհանուր առմամբ դրական է բնութագրում գենդերային իրավիճակը Հայաստանում, սակայն մի շարք կարևոր առումներով չի արտացոլում իրերի իսկական դրությունը:

Զեկույցի ամփոփ նկարագիրը

2009-2012 թթ. ընթացքում ՀՀ կառավարությունը նախաձեռնել է մի շարք միջոցառումներ Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման, գենդերային քաղաքականության իրականացման և հանրապետությունում գենդերային իրավիճակի բարելավման ուղղությամբ:

2010 թ. փետրվարին ՀՀ կառավարությունը հաստատել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը, իսկ 2011 թ. մայիսի 20-ին ընդունել է թիվ 19 արձանագրային որոշումը «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին», որը նախատեսում է գենդերային մոտեցման ներդրում պետության ծրագրերում և քաղաքականության մեջ:

Համաձայն այդ որոշման՝ բոլոր նախարարություններում և հանրապետության բոլոր մարզերում ստեղծվել են գենդերային քաղաքականության հայեցակարգի իրականացման և գենդերային հավասարության հանձնաժողովներ փոխնախարարների և փոխմարզպետների ղեկավարությամբ, որոնց կազմում ընդգրկվել են նախարարությունների և մարզպետարանների աշխատակիցներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2012 թ. դեկտեմբերին ՀՀ կառավարությունը փոփոխություն է կատարել ՀՀ վարչապետին առընթեր կանանց խորհրդի կանոնադրությունում և առաջարկել է դիտել այն որպես գենդերային հավասարության ազգային մեխանիզմ:

3. Մարդկային զարգացման զեկույց, 2013 թ.:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի հանձնարարականների համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովը 2013 թ. մայիսին ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, իսկ հունիսին ՀՀ նախագահը ստորագրել է օրենքը, և այն ուժի մեջ է մտել:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը մի փաստաթուղթ է, որն առավելագույնս ներառել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի մի շարք պահանջներ: Օրենքը, մասնավորապես, ամրագրում է «գենդերային խտրականություն» հասկացությունը, կարգավորում է քաղաքականության, պետական կառավարման, աշխատանքի և զբաղվածության, ձեռնարկատիրական գործունեության, առողջապահության, կրթության ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման խնդիրը, նախատեսում է սեռի հատկանիշով խտրականության դրսևորումներից քաղաքացիների պաշտպանության հնարավորությունը և կարգը, ինչպես նաև պատասխանատվություն խտրական գործելակերպի համար:

ՄԱԿ-ի կոմիտեի հանձնարարականներին համապատասխան՝ ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություն է կատարվել, և գենդերային քվոտան ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների քաղաքական կուսակցությունների ցուցակներում ավելացել է 15%-ից մինչև 20%: 20-տոկոսանոց քվոտա է ամրագրվել նաև Երևան քաղաքի ավագանու ընտրություններում քաղաքական կուսակցությունների ցուցակների համար:

Քաղաքական և հասարակական գործելակերպում գենդերային բաղադրիչի ներդրման և գենդերային իրազեկության բարձրացման նպատակով պետության և հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվում են մի շարք մրցույթներ՝ ուղղված գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը և ԶԼՄ-ներում կանանց ոչ կարծրատիպային կերպարի քարոզչությանը: ՀՀ կառավարությունը վերջին տարիներին անցկացնում է ամենամյա մրցույթներ վարչապետի մրցանակի համար («Լավագույն քաղաքային և գյուղական համայնք գենդերային քաղաքականության իրականացման ուղղությամբ», «Լավագույն կին ձեռնարկատեր», «Լավագույն ԶԼՄ գենդերային խնդիրների լուսաբանման ուղղությամբ»):

Ձեռնարկված միջոցների շնորհիվ երկրում ստեղծվել են որոշակի նախադրյալներ կանանց նկատմամբ խտրականության վերացման և գենդերային հավասարության հասնելու նպատակով ազգային մեխանիզմ ձևավորելու ուղղությամբ:

Այսուհանդերձ Հայաստանի կառավարությունը պատշաճ չի կատարել միացյալ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները մի շարք կարևոր հոդվածների և գործունեության ոլորտների վերաբերյալ:

2011 թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից կատարված փոփոխությունը ՀՀ ընտրական օրենսգրքի 108-րդ հոդվածում՝ ուղղված խորհրդարանական ընտրություններում քաղաքական կուսակցությունների թեկնածուների առաջադրման համամասնական ցուցակներում գենդերային քվոտայի ավելացմանը, որոշակի խտրական մոտեցում է բովանդակում: Խորհրդարանական ընտրությունների ընթացքում բացահայտվեց նման ձևակերպմամբ քվոտայի ներդրման անարդյունավետությունը. առաջադրված ինը կուսակցություններից ոչ մեկն իր ցուցակի առաջին հնգյակում կնոջ թեկնածություն չներկայացրեց:

Քաղաքական կուսակցությունների նախընտրական ցուցակներում ներկայացված էին միջինը 22,8% կանայք, սակայն ընտրությունների արդյունքներով կանանց ներկայացվածությունը ՀՀ Ազգային ժողովում կազմեց ընդամենը 10,67%՝ 2007 թ. ընտրությունների 9,2%-ի դիմաց:

ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված 20-տոկոսանոց քվոտան որոշ չափով համահարթվեց ընտրություններից հետո կանանց ինքնաբացարկների պատճառով:

Գենդերապես անհավասարակշռված է մնում իշխանությունը տեղական ժողովրդավարության մակարդակում: Տեղական ինքնակառավարման մարմինների 2012 թ. ընտրությունները բացահայտեցին կանանց խիստ ցածր մասնակցությունը դրանց. 638 գյուղական համայնքների ղեկավարների 1237 թեկնածուների թվում ընդամենը 43-ն էին կին կամ 3,5%-ը:

Կանայք կազմում են ավագանու անդամների 8,6%-ը, այսինքն՝ նախորդ 2008 թ. ընտրությունների համեմատ՝ կանանց ներկայացվածությունն ավելացել է ընդամենը 2,4%-ով:

Կանանց ներկայացվածությունը որոշ չափով ավելացել է երկրի մայրաքաղաքի ավագանու կազմում. 2013 թ. ընտրությունների արդյունքում ընտրվել է 10 կին, ինչը կազմել է 15%:

Նախորդ ընտրությունների համեմատ՝ նվազել է կանանց ներկայացվածությունը գյուղական համայնքների ղեկավարների մակարդակում: Կանայք ղեկավարում են 866 գյուղական համայնքներից միայն 20-ը կամ ընդամենը 2,3%-ը: Հանրապետության 48 քաղաքապետների ընտրովի պաշտոնում կին չկա:

Գենդերային անհավասարակշռությունը պահպանվում է գործադիր իշխանության բարձր մակարդակներում: 2013 թ. գործադիր իշխանության քաղաքական պաշտոններում, որոնք մասնակցում են քաղաքական որոշումների ընդունմանը, 19 նախարարներից միայն երկուսն են կին՝ ՀՀ մշակույթի նախարարը և ՀՀ սփյուռքի նախարարը: Փոխնախարարի 62 հայեցողական պաշտոններում, որոնք որոշակի ազդեցություն ունեն քաղաքական որոշումների վրա, ներկայացված է ընդամենը 7 կին, որ կազմում է 11,2%: Տարածքային կառավարման կառույցներում 22 մարզպետի տեղակալներից 2-ն են կին և 10 մարզպետարաններից միայն երկուսում են աշխատակազմի ղեկավարի պաշտոնը կանայք զբաղեցնում:

Չնայած 2007 թ. համեմատ՝ 2013 թ. քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում կանանց թիվը 10,4%-ից աճել է մինչև 14%, կանայք բացակայում են ՀՀ նախագահի խորհրդականների կազմում, իսկ ՀՀ վարչապետի 6 խորհրդականներից միայն մեկն է կին: Կանայք մեծամասնություն են գործադիր իշխանության ստորին մակարդակներում՝ ցածր վարձատրվող պետծառայողների թվում:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը չի կատարել Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի հանձնարարականը, այն է՝ վերանայել բոլոր դպրոցական դասագրքերը գենդերային կարծրատիպերը վերացնելու նպատակով և իրականացնել ծրագրեր, որոնք կնպաստեն աղջիկների կողմից ոչ ավանդական առարկաների ընտրությանը:

Թեև գենդերային կրթության ինստիտուցիոնալացումը պետության գենդերային քաղաքականության առաջնահերթություններից է, այդ գործընթացի զարգացումը դանդաղ է կատարվում և ներառում է սովորողների սոսկ փոքր մասը: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը չի շարունակել 2005-2008 թթ. ընթացքում կուտակված փորձը հանրակրթական և բարձրագույն դպրոցներում գենդերային կրթության ինստիտուցիոնալացման ուղղությամբ:

Գենդերային մոտեցումը հաշվի չի առնվում հանրակրթական դպրոցների դաստիարակչական աշխատանքներում, ինչը հետևանք է նաև այն իրողության, որ մանկավարժական կադրերի վերապատրաստման համակարգում կրթության և դաստիարակության գենդերային հիմնախնդիրներին պատշաճ տեղ չի հատկացվում: Կրթական համակարգը նպատակաուղղված չէ սովորողների և ուսանողների՝ գենդերային հավասարության նորմերի և սկզբունքների ընկալմանը և քաղաքացիական պատասխանատվության ձևավորմանը:

2013 թ. պետական բուհերում ուսման վարձի բարձրացումը կհանգեցնի անապահով ընտանիքներից երիտասարդների՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունների նվազման:

Չնայած կանայք կազմում են տվյալ համակարգի աշխատողների ընդհանուր թվի 70%-ը, նրանց ցածր ներկայացվածությունը պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարության կազմում հանգեցնում է կրթական քաղաքականության մշակման և իրականացման վրա նրանց ազդեցության նվազման:

Թեև ՀՀ Սահմանադրությամբ, աշխատանքային օրենսգրքով և «Աշխատանքի պետական տեսչության մասին» օրենքով ամրագրված է հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը, և արգելված է սեռի հատկանիշով տարաբաժանումը աշխատաշուկայում և զբաղվածության ոլորտում, դե ֆակտո գործունեության բոլոր բնագավառներում, անկախ զբաղվածության բնույթից կամ կարգավիճակից, տղամարդկանց վաստակած միջին ամսական զուտ եկամուտն էապես գերազանցում է կանանց վաստակածը: 2012 թ. հանրապետության մասշտաբով կանանց միջին ամսական զուտ եկամուտը կազմել է տղամարդկանց եկամտի 59%-ը, իսկ միջին ամսական աշխատավարձը՝ տղամարդկանց աշխատավարձի 64,4%-ը:

Նույնիսկ «կնոջ դեմք ունեցող» ճյուղերում, տղամարդկանց համեմատ, կանանց միջին աշխատավարձը էապես ցածր է, չնայած նրանց կրթական մակարդակը կամ մասնագիտական որակավորումն ավելի բարձր են: Աշխատավարձի գենդերային խզումը հետևանք է կանանց խտացման ցածր վարձատրությամբ աշխատատեղերում կամ ոլորտներում (առողջապահություն, կրթություն, գիտություն, մշակույթ):

2012 թ. դրությամբ երկրում տնտեսապես ակտիվ է կանանց 55,2%-ը, տղամարդկանց՝ 72,1%-ը: Զբաղվածների ընդհանուր թվում կանայք կազմում են 48%, տղամարդիկ՝ 52%[4]:

2013 թ. տարեսկզբին հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազուրկների թվում կանայք կազմել են 71%:

Երկրում պատշաճ և հետևողական միջոցառումներ չեն ձեռնարկվել կանանց նկատմամբ խտրականության հիմնախնդիրների և գենդերային հավասարության հասնելու անհրաժեշտության վերաբերյալ բնակչության, ինչպես նաև գործադիր իշխանության բոլոր մակարդակների, դատական իշխանության ներկայացուցիչների, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարների և ակտիվիստների իրազեկության բարձրացման ուղղությամբ:

Թեև հասարակությունն ընդհանուր առմամբ դրական ընկալեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, ուժի մեջ մտնելուց հետո կարճ ժամանակ անց այն բախվեց խիստ պահպանողական

4. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ, Երևան, 2013, էջ 107-108:

տրամադրված շրջանների հակազդեցությանը, որոնք տպագիր ԶԼՄ-ների էջերում, սոցիալական ցանցերի և հեռուստահաղորդումների միջոցով այդ օրենքի դեմ վարկաբեկիչ քարոզարշավ իրականացրին՝ միտումնավոր խեղաթյուրված ներկայացնելով «գենդեր» հասկացությունը, այն մեկնաբանելով որպես սեռափոխության քարոզչություն և սեռական այլասերվածության աջակցություն՝ ուղղված ընտանիքի՝ որպես ավանդական ազգային արժեքի քայքայմանը:

Հասարակության լայն շերտերի շրջանում տեղեկատվական-բացատրական աշխատանքի բացակայության հետևանքով բնակչության մի մասն ընդունված օրենքի մասին ապատեղեկատվությունն ընկալեց որպես ճշմարտություն: Ավելին, կանանց ոչ բավարար իրազեկությունը կոնվենցիայում ամրագրված ու «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում նախատեսված իրավունքների մասին հանգեցրեց այն իրավիճակին, որ օրենքի դեմ հանդես եկող անձանց թվում հայտնվեցին ոչ միայն շարքային կանայք, այլև կին պատգամավորներ և քաղաքական կուսակցությունների ակտիվիստ կանայք ու լրագրողներ, որոնք կասկածի տակ առան գենդերային հավասարության մասին օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

Ստեղծված իրավիճակը մեղմելու նպատակով ՀՀ կառավարությունը օրենքից որոշ գենդերային սահմանումներ հանելու առաջարկություն ներկայացրեց Ազգային ժողով, ինչն ավելի ոգևորեց «հակագենդերային խմբին», որը պահանջեց առհասարակ հետ կանչել օրենքը: ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, քննարկելով առաջարկությունը, որոշում կայացրեց անդրադառնալ ներկայացված առաջարկություններին մեկ տարվա ընթացքում:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի դեմ ծավալված արշավը և «գենդեր», «գենդերային հավասարություն» ու հարակից եզրույթների առնչությամբ հասարակական կարծիքի աղճատման փորձը ցույց տվեցին, որ ***կանանց նկատմամբ խտրականության գիտակցման հիմնախնդիրը Հայաստանում դեռևս արդիական է***, և ակներև է երկրում գենդերային հավասարության հասնելու համար պետության կողմից կանանց նկատմամբ խտրականության հաղթահարման ուղղությամբ անհապաղ միջոցների ձեռնարկման, ինչպես նաև ստանձնած միջազգային պարտավորությունների, այդ թվում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման անհրաժեշտությունը:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն, Հայաստանի բոլոր չորս զեկույցների առնչությամբ մատնանշելով գենդերային հավասարության ազգային մեխանիզմի բացակայությունը երկրում, ուշադրություն է հրավիրել դրա ստեղծման անհրաժեշտության վրա: Հայաստանում ազգային մեխանիզմի ստեղծման հիմնախնդիրն արտացոլված է նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում և «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրում»: Այդուհանդերձ, մինչ օրս երկրում ազգային մեխանիզմ չի ձևավորվել, որը համապատասխաներ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 6 Ընդհանուր հանձնարարականին և Պեկինի գործողությունների ծրագրին:

Ազգային մեխանիզմի բացակայության հետևանքով «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի» կատարման և գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմների գործունեության համակարգման արդյունավետությունը ցածր է, քաղաքական գործելակերպում գենդերային բաղադրիչի

ինտեգրման ռազմավարությունը լիարժեք չի իրականացվում, երկրի ղեկավար մարմիններում և որոշումների ընդունման մակարդակում գենդերային անհավասարության և սեռի հատկանիշով խտրականության խորացում է տեղի ունենում, ցածր է մնում կանանց ներկայացվածությունը օրենսդիր իշխանությունում և տեղական ինքնակառավարման մարմիններում: ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին և այլ կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները երկրում լիարժեք չեն կատարվում:

ՄԱՍ 1

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը՝ ըստ հոդվածների

Հոդված 1.

«Խտրականություն» հասկացությունը

Հիմնախնդիրները.

- *«Կանանց նկատմամբ խտրականությունը» չգիտակցելը (հասկացողության բացակայությունը) և գենդերային հավասարության գաղափարների վարկաբեկման փորձերը:*
- *Կոնվենցիայի մասին բնակչության լայն խավերի և պաշտոնատար անձանց ցածր իրազեկությունը:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[5]

Կոմիտեն կոնվենցիայի 1-ին հոդվածի առնչությամբ ափսոսանք է հայտնում մասնակից պետության օրենսդրության մեջ կանանց նկատմամբ թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի խտրականության հստակ և համապարփակ սահմանման բացակայության կապակցությամբ:

Կոմիտեն շարունակում է մտահոգություն հայտնել, որ կոնվենցիայի և դրան կից կամընտիր արձանագրության դրույթների, ինչպես նաև կոմիտեի Ընդհանուր հանձնարարականների, անհատական դիմումների ու հարցումների վերաբերյալ արտահայտված կարծիքների մասին կառավարության բոլոր ճյուղերը (այդ թվում նաև արդարադատության), իրավապահ մարմիններն ու հենց իրենք, կանայք բավարար չափով տեղեկացված չեն:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[6]

- Ընդունել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող համապատասխան ազգային օրենսդրություն՝ կոնվենցիայի 1-ին և 2(բ) հոդվածներին համապատասխան, որը ներառի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խտրականությունը:
- Ապահովել անուղղակի խտրականության բնույթի և «փաստացի հավասարություն» հասկացության վերաբերյալ ուսուցողական-բացատրական աշխատանքներ կառավարության պաշտոնյաների, դատական իշխանության և հասարակության շրջանում:

5. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները /43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 10 և 12:
6. Նույն տեղում, կետ 11 և 13:

- Նպաստել կոնվենցիայի և գենդերային հավասարության վերաբերյալ գիտելիքների տարածմանը և ըմբռնման խորացմանը կոնվենցիային և դրան կից կամընտիր արձանագրությանը, ինչպես նաև կոմիտեի Ընդհանուր հանձնարարականներին, անհատական դիմումներին ու հարցումներին նվիրված ուսուցողական ծրագրերի միջոցով՝ ուղղված դատական իշխանության ներկայացուցիչներին, իրավաբաններին, ոստիկանության և այլ իրավապահ մարմինների ներկայացուցիչներին, ինչպես նաև կառավարության պաշտոնատար անձանց և քաղաքական կուսակցությունների անդամներին:
- Մշակել և իրականացնել ուսուցողական-բացատրական աշխատանք կանանց շրջանում՝ նպատակ ունենալով բարձրացնել իրազեկության մակարդակը կոնվենցիայից բխող իրենց իրավունքների, ինչպես նաև կամընտիր արձանագրությամբ նախատեսված անհատական դիմումների և հարցումների ընթացակարգի վերաբերյալ՝ դրանով իսկ մեծացնելով նրանց կարողություններն իրենց իրավունքների պաշտպանության գործում:
- Ապահովել Եզրափակիչ դիտարկումների ամենալայն տարածումը, որպեսզի մարդիկ, ներառյալ պետական պաշտոնյաները, քաղաքական գործիչները, խորհրդարանականները, կանանց և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները տեղեկանան այն քայլերի մասին, որոնք ձեռնարկվել են կանանց իրավական և փաստացի հավասարությունն ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև այն հետագա քայլերի մասին, որոնք անհրաժեշտ են այդ առնչությամբ:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականը, կոնվենցիայի 1-ին և 2(բ) հոդվածներին համապատասխան, այն է՝ արգելել կանանց նկատմամբ ուղղակի և անուղղակի խտրականությունը, արտացոլում է գտել 2013 թ. մայիսի 22-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում, որը ՀՀ նախագահը ստորագրել է 2013 թ. հունիսի 11-ին:

Օրենքը, մասնավորապես, ամրագրում է «գենդերային խտրականություն» հասկացությունը, այդ թվում՝ ուղղակի և անուղղակի խտրականությունը, սահմանում է խտրականության արգելումը, նախատեսում է սեռի հատկանիշով խտրականության դրևորումներից քաղաքացիների պաշտպանության հնարավորությունը և կարգը, ինչպես նաև պատասխանատվությունը խտրականության համար:

Սակայն օրենքի ընդունումից հետո հանրապետությունում ծավալված «հակագենդերային արշավը», որն ուղղված էր գենդերային հավասարության գաղափարի վարկաբեկմանը և դրսևորվեց օրենքի վերաբերյալ ապատեղեկատվության տարածմամբ, բացահայտեց, որ ՀՀ կառավարությունը փաստորեն չի կատարել Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի հանձնարարականը 2009 թ. Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ կոմիտեի Եզրափակիչ դիտարկումների տեքստը լայնորեն տարածելու մասին: Այդ դիտարկումները ներառում են մի շարք հանձնարարականներ, որոնք նախատեսում են կանանց նկատմամբ խտրականության հիմնախնդիրների

և գենդերային հավասարության հարցերի վերաբերյալ բոլոր մակարդակների գործադիր իշխանության պաշտոնյաների, դատական իշխանության ներկայացուցիչների, քաղաքական կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների ղեկավարների ու ակտիվիստների իրազեկության բարձրացում: Հասարակությունը, ներառյալ՝ խորհրդարանականները, պետական պաշտոնյաները և քաղաքական գործիչները, տեղեկացված չէր կանանց իրավական և փաստացի հավասարության ապահովման համար երկրում ձեռնարկվող քայլերի, ինչպես նաև այդ կապակցությամբ հետագա անհրաժեշտ քայլերի մասին: Հասարակայնությունը տեղեկացված չէ նաև իր քաղաքացիական իրավունքների պաշտպանության լրացուցիչ հնարավորությունների մասին, որոնք ընձեռվում են կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ:

Հասարակության լայն շերտերի շրջանում տեղեկատվական-բացատրական աշխատանքի բացակայության հետևանքով բնակչության որոշ մասն ընդունված օրենքի մասին ապատեղեկատվությունն ընկալեց որպես ճշմարտություն: Ավելին, կանանց ոչ բավարար իրազեկությունը կոնվենցիայում ամրագրված ու «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում նախատեսված իրավունքների մասին հանգեցրեց այն իրավիճակին, որ օրենքի դեմ հանդես եկող անձանց թվում հայտնվեցին ոչ միայն շարքային, այլև քաղաքական կուսակցությունների ակտիվիստ կանայք և լրագրողներ, որոնք կասկածի տակ առան գենդերային հավասարության մասին օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

Օրենքի շուրջ ստեղծված իրավիճակը վկայում է, որ կանանց նկատմամբ խտրականության գիտակցման հիմնախնդիրը Հայաստանում շարունակում է արդիական մնալ: Վերջին տարիներին անցկացված հասարակական կարծիքի հարցախույզները հաստատում են այն թեզը, որ հասարակության լայն շերտերը, հաճախ նաև պետական պաշտոնյաները չեն ընդունում կանանց խտրականության առկայությունը, այն չի գիտակցվում նաև կանանց մի հատվածի կողմից:

2011 թ. անցկացված սոցիոլոգիական հարցումները[7] ցույց են տալիս, որ հարցվողների 46,6%-ն ընդունում է Հայաստանում կանանց նկատմամբ խտրականության առկայությունը, 41,1%-ը համարում է, որ կանանց նկատմամբ խտրականություն չկա, իսկ 12,5%-ը դժվարացել է պատասանել: Այն անձանց տեսակարար կշիռը, որոնք համարում են, որ խտրականություն կա, կանանց շրջանում ակնհայտորեն ավելի բարձր է, քան տղամարդկանց շրջանում. համապատասխանաբար՝ 49,1% և 43,3%: Ըստ փորձագետների գնահատականների՝ սեռը տվյալ հարցի պատասխանը միանշանակ կանխորոշող գործոն չէ[8], քանի որ կանանց և տղամարդկանց պատասխանների տարբերությունները շատ էական չեն (ընդամենը մոտ 6-7%):

Խտրականությունը որպես հիմնախնդիր չգիտակցելը հասարակության ոչ բավարար մակարդակի իրավական գրագիտության և մշակույթի հետևանք է: Պատասխանելով այն հարցին, թե որ ոլորտներում է առավել չափով դրսևորվում կանանց նկատմամբ խտրականությունը, հարցվողները նշել են քաղաքական ընտրությունների համակարգը՝ 23,8%, պետական կառավարման ոլորտը՝ 23,7%, քաղաքական կուսակցությունները՝ 13,6%, աշխատանքային հարաբերությունները՝ 11,6%, մյուս բոլոր ոլորտները՝ 11,4%:

7. Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ/«Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն: Երևան, 2011:.
8. Նույն տեղում:

Ավելի վաղ անցկացված հետազոտություններում[9] ստացվել են նույնատիպ արդյունքներ այն ոլորտների առնչությամբ, որտեղ խտրականությունն առավել տեսանելի է: Համեմատությունը ցույց է տալիս, որ անցած 8 տարիների ընթացքում նկատվում է որոշ դրական շարժընթաց կանանց խտրականության առկայությունն ընդունող հարցվողների թվի աճի առումով:

Ըստ փորձագետների՝ վերջին հարցումների տվյալները վկայում են, որ հասարակական կարծիքում առկա է հասարակության մեջ կանանց նկատմամբ խտրականության առկայության և այդ հիմնախնդիրը լուծելու անհրաժեշտության հստակ ընկալում[10]: Ավելին, հասարակության մեծ մասը պատրաստ է՝ և՛ հոգեբանորեն, և՛ «գաղափարապես» անխտրականության սկզբունքի հետևողական կենսագործմանը[11]:

Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

- *ապահովել միջոցառումներ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների և Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի հանձնարարականների մասին պաշտոնատար անձանց և պետական ծառայողների իրազեկության բարձրացման ուղղությամբ,*
- *ձեռնարկել միջոցառումներ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաև գենդերային հավասարության և երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության հասկացմանն ուղղված պետական Գենդերային քաղաքականության հայեցակարգի հիմնական դրույթները մեկնաբանող հանրամատչելի գրականության հրատարակման ուղղությամբ,*
- *մշակել և ձեռնարկել միջոցառումներ բնակչության իրավական լուսավորության, մասնավորապես՝ Հայաստանի վավերացրած միջազգային իրավական փաստաթղթերին և գենդերային հավասարությանը հասնելու ոլորտում միջազգային պարտավորություններին ծանոթացնելու ուղղությամբ,*
- *կրթության և պետական ծառայողների վերապատրաստման համակարգերի, ՔԼՄ-ների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով իրականացնել միջոցառումներ՝ ուղղված լայնամասշտաբ բացատրական աշխատանքին «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի էության վերաբերյալ, որը միտված է հասարակությունում զուգակշռված ժողովրդավարության և գենդերային հավասարության ձևավորմանը, սոցիալական արդարության և հանդուրժողականության հաստատմանը՝ նպատակ ունենալով հաղթահարել սոցիալական ցանցերում և ՔԼՄ-ներում որոշ անձանց կողմից շահարկվող ակներևաբար սխալ պատկերացումները գենդերի և գենդերային հարաբերությունների մասին,*

9. Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. գենդերային հավասարության չափումը / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2006:
10. Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ /«Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն: Երևան, 2011:
11. Նույն տեղում:

- *նպաստել հասարակական կազմակերպությունների գործունեությանը կանանց իրավական գրագիտության բարձրացման ոլորտում խտրական գործելակերպի գիտակցման և սեփական իրավունքները պաշտպանելու հմտությունների ձևավորման նպատակով:*

ՀՀ Ազգային ժողովին.

- *նախաձեռնել տեղեկատվական-բացատրական արշավի անցկացում «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նպատակների և խնդիրների մասին,*
- *գործելակերպ դարձնել մշտական հանձնաժողովներում ՀՀ կառավարության պարբերական հաշվետվությունները գենդերային հավասարության և կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ Հայաստանի վավերացրած միջազգային իրավական փաստաթղթերի դրույթների և հանձնարարականների իրականացման մասին,*
- *ընդլայնել և կանոնակարգել հասարակական հատվածի ներկայացուցիչների հետ պարբերական հանդիպումները օրենսդրական ապահովում պահանջող առավել արդիական հիմնախնդիրների քննարկման նպատակով,*
- *անցկացնել պարբերական հանդիպումներ և քննարկումներ քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ գենդերային քաղաքականության և գենդերային հավասարության հասնելու արդիական հիմնախնդիրների, կանանց հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլանման ուղիների շուրջ:*

Հասարակական կազմակերպություններին.

- *փորձագիտական և կազմակերպչական աջակցություն ցույց տալ կառավարությանը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նպատակների և խնդիրների մասին տեղեկատվական-բացատրական արշավի անցկացման գործում,*
- *ընդլայնել համագործակցությունը ԶԼՄ-ների հետ պետության գենդերային քաղաքականության նպատակները և խնդիրները բացատրելու հարցերում:*

Հոդված 2

Պետության՝ խտրականության վերացման քաղաքականություն վարելու պարտավորությունները

Հիմնախնդիրները

- *Բնակչության լայն շերտերի և պաշտոնատար անձանց ցածր տեղեկացվածությունը գենդերային հավասարության քաղաքականության մասին:*
- *Պետության կողմից կանանց նկատմամբ խտրական գործելակերպի հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցների անբավարարությունը:*
- *Էական տարբերությունը սեռերի հավասարություն երաշխավորող ամրագրված իրավական նորմերի և դրանց իրականացման միջև:*
- *Օրենսդրության գենդերային փորձաքննության բացակայությունը, իրավական փաստաթղթերում և ծրագրերում չեզոք գենդերային ձևակերպումների գերակայությունը:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[12]

Կոմիտեն մտահոգված է, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածի (ա) կետով սահմանված կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքը մասնակից պետության օրենսդրության մեջ հստակ ամրագրված չէ:

Կոմիտեն անհանգստություն է հայտնում կանանց նկատմամբ խտրականությունն արգելող հստակ և համակողմանի օրենսդրական դրույթների բացակայության առնչությամբ, ինչպես նաև այն կապակցությամբ, որ մասնակից պետությունը նախապատվություն է տալիս չեզոք գենդերային քաղաքականությանը և ծրագրերին:

Կոմիտեն մտահոգված է կոնվենցիայի նախադեպային կիրառման բացակայությամբ:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[13]

Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը.

- արագացնել գենդերային հավասարության մասին օրենքի ընդունումը և տղամարդկանց ու կանանց հավասարության սկզբունքն ամրագրել գենդերային հավասարության մասին օրենքում՝ կոնվենցիայի 2 (ա) հոդվածին համապատասխան,
- քաղաքականության մեջ և ծրագրերում որդեգրել գենդերային ձևակերպումների տեսանկյունից որոշակի մոտեցում,
- ապահովել կանոնավոր խորհրդակցությունների անցկացման և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շարունակական գործընթաց կոնվենցիայի կատարմանը վերաբերող հարցերով, ինչպես նաև այն հարցերի շուրջ, որոնք վերաբերում են գենդերային հավասարության առաջմղմանը, ինչպես նաև կոմիտեի Եզրափակիչ դիտարկումների ուղղությամբ ձեռնարկված քայլերին և հաջորդ զեկույցների պատրաստմանը,

12. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 10, 12, 13, 38-42:
13. Նույն տեղում, կետ 11, 13:

- վավերացնել այն պայմանագրերը, որոնց դեռևս չի միացել, մասնավորապես՝ Բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան, Հաշմանդամների իրավունքների մասին կոնվենցիան և Բոլոր մարդկանց բռնի անհետացումից պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

2009-2013 թթ. ժամանակահատվածում ՀՀ կառավարությունը ձեռնարկել է մի շարք միջոցառումներ հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման վերաբերյալ կոմիտեի հանձնարարականների կատարման ուղղությամբ:

2010 թ. փետրվարին ՀՀ կառավարությունը հաստատել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը:

2011 թ. մայիսի 20-ին ՀՀ կառավարությունն ընդունել է թիվ 19 արձանագրային որոշումը «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին», որը նախատեսում է գենդերային մոտեցման ներդրում (գենդերային մեյնստրիմինգ) ծրագրերում և քաղաքականության մեջ:

Սկսած 2011 թվականից ՀՀ կառավարությունը հաստատում է ՀՀ գենդերային քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների տարեկան ծրագրերը և հրապարակում հաշվետվությունները նախորդ ծրագրերի կատարման մասին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը պետական ապարատի աշխատողների որակավորման բարձրացման շրջանակներում անցկացնում է միջին և վերին օղակի պետական պաշտոնյաների գենդերային ուսուցում:

2012 թ. հոկտեմբերին ՀՀ կառավարությունը հրապարակել է «Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ» մեթոդական ձեռնարկը:

Ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակում է ըստ սեռերի տարանջատված տվյալների ժողովածու՝ «Հայաստանի կանայք և տղամարդիկ»:

Ի կատարումն Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի հանձնարարականների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2009 թ. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ ձևավորել է փորձագետների խումբ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակելու համար, որի կազմում էին ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, իրավական վարչության փորձագետներ և պետի տեղակալը, ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական հարաբերությունների վարչության ղեկավարը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի բաժնի վարիչ և փորձագետներ ոչ կառավարական կազմակերպություններից:

Օրինագիծը քննարկվել է հանրապետության 10 մարզերում և Երևանում հասարակության բոլոր շերտերի լայն ընդգրկմամբ, ՀՀ բոլոր նախարարություններում, անցկացվել են խորհրդարանական լսումներ հասարակության սոցիալական բոլոր խմբերի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կանանց հասարակական կազմակերպությունները մի քանի տարի ակտիվորեն իրականացրել են տվյալ օրենքի ընդունման անհրաժեշտության լոբինգը, մեծ շահագրգռվածություն և ակտիվություն ցուցաբերել դրա քննարկման ընթացքում՝ իրենց առաջարկություններն ու փոփոխությունները մտցնելով օրենքի նախագծում: «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծն անցել է նաև միջազգային փորձաքննություն:

Չնայած ՀՀ կառավարության կողմից նախագծի տեքստում կատարված մի շարք փոփոխությունները թուլացրել են օրինագիծը գենդերային հավասարության ապահովման մեխանիզմների տեսանկյունից, իսկ առաջին ընթերցումից հետո հասարակական կազմակերպությունների առաջարկությունները մերժվել են, այդուհանդերձ դրա ընդունումը պետք է կարևոր քայլ դառնար երկրում գենդերային հավասարության հասնելու գործում:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը կառավարության կողմից ներկայացվել է Ազգային ժողով 2011 թ. վերջում, այնտեղ անցել քննարկման բոլոր երեք փուլերը և ընդունվել 2013 թ. մայիսին: 2013 թ. հունիսի 11-ին ՀՀ նախագահը ստորագրել է օրենքը:

Օրենքը մի փաստաթուղթ է, որն առավելագույնս ներառել է կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ, հաշվի է առել նախորդ զեկույցի կապակցությամբ կոմիտեի դիտարկումները և արտացոլում է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի մի շարք պահանջները, մասնավորապես.

- օրենսդրորեն ամրագրում է «գենդերային խտրականություն» հասկացությունը,
- արգելում է խտրականությունը սեռի հատկանիշով,
- օրենսդրության մեջ սահմանում է «ուղղակի և անուղղակի խտրականություն» հասկացությունները,
- նախատեսում է սեռի հատկանիշով խտրականության դրսևորումներից քաղաքացիների պաշտպանության հնարավորությունը և կարգը,
- նախատեսում է պատասխանատվություն խտրականություն ցուցաբերած լիազոր անձանց և գործատուների համար,
- նպաստում է գենդերային հավասարության մշակույթի ձևավորմանը և խտրական գործելակերպի հիմքում ընկած գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը,
- սահմանում է գենդերային անհավասարակշռության հաղթահարմանն ուղղված հատուկ ժամանակավոր միջոցների կիրառման ոլորտները, շրջանակը և ժամկետները,
- ամրագրում է գենդերային հավասարության ապահովման ազգային մեխանիզմի ձևավորման անհրաժեշտությունը,
- նախատեսում է գենդերային քաղաքականության իրականացման մշտադիտարկման և հաշվետվողականության մեխանիզմ:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է քաղաքականության, պետական կառավարման, աշխատանքի և զբաղվածության, ձեռնարկատիրական գործունեության, առողջապահության, կրթության և այլ ոլորտներում տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հիմնախնդիրը:

Հասարակությունն ընդհանուր առմամբ դրական ընկալեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, սակայն ուժի մեջ մտնելուց հետո կարճ ժամանակ անց այն բախվեց պահպանողական տրամադրված արմատական շրջանների որոշակի հակազդեցությանը, որոնք անհիմն կերպով «գենդեր» եզրույթում տեսնում էին սեռափոխության և սեռական այլասերվածության քարոզչություն և պահանջում էին հետ կանչել օրենքը:

Օրենքի դեմ ծավալված արշավը, «գենդեր», «գենդերային հավասարություն» և հարակից եզրույթների կապակցությամբ հասարակական կարծիքի աղճատման փորձը բացահայտեցին ոչ միայն լայն հասարակայնության, այլև ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և պետական պաշտոնյաների, քաղաքական և հասարակական գործիչների ոչ բավարար իրազեկությունը հիմնախնդրի էության և կանանց նկատմամբ խտրականության հաղթահարման, երկրում գենդերային հավասարության հասնելու, ինչպես նաև պետության կողմից միջազգային պարտավորությունների, այդ թվում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման անհրաժեշտության մասին:

Հասարակության ոչ բավարար իրազեկությունը պետության գենդերային քաղաքականության նպատակների, Հայաստանի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի և հաստատված ծրագրերի վերաբերյալ հարվածի տակ դրեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը և հող ստեղծեց ապատեղեկատվության տարածման համար՝ խոչընդոտելով դրա կիրարկումը: Այսպես կոչված «Համահայկական ծնողական կոմիտեի» շրջանակում ստեղծված «Հակագենդեր» խումբը սոցիալական ցանցերում և որոշ ՁԼՄ-ների էջերից սկսեց նյութեր տարածել, որոնք վարկաբեկում էին ինչպես օրենքը, այնպես էլ տարիներ շարունակ գենդերային հիմնախնդիրներով և գենդերային կրթությամբ, բնակչության գենդերային իրազեկության բարձրացմամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ղեկավարներին: «Համահայկական ծնողական կոմիտեի» մանիֆեստում «Հակագենդեր» խումբը սպառնում էր ոչ միայն ՁԼՄ-ների էջերում նրանց գործունեության մերկացմամբ, այլև ֆիզիկական հաշվեհարդարով:

Քննադատության հարվածի տակ հայտնվեցին կանանց հասարակական կազմակերպությունները և դրանց ղեկավարները, որոնք ակտիվորեն իրականացրել են «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունման լոբինգը, տարածել հասարակության մեջ Գենդերային քաղաքականության հայեցակարգը և առաջ մղել դրա իրականացումը:

Պետական կառույցները, այդ թվում՝ իրավապահ, որոնք պարտավոր են կանխել հասարակական կազմակերպությունների ղեկավարների հասցեին հնչող սպառնալիքները, հասարակական և մասնավորապես կանանց կազմակերպությունների ղեկավարների արժանապատվության ակներև վարկաբեկումը, «Հակագենդեր» խմբի գործունեությունը կանխելու միջոցներ չէին ձեռնարկում, որը տպագիր և էլեկտրոնային ՁԼՄ-ների էջերում և հեռուստահաղորդումների միջոցով ՀՀ օրենքի դեմ վարկաբեկող քարոզարշավ էր իրականացնում՝ «գենդեր» հասկացությունը ներկայացնելով որպես սեռական այլասերվածության աջակցում՝ ուղղված ընտանիքի՝ որպես ավանդական ազգային արժեքի քայքայմանը:

Իրավիճակն ավելի բարդացրեց այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը որպես փոխզիջումային տարբերակ առաջարկություն ներկայացրեց ՀՀ Ազգային ժողով «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի տեքստից «գենդեր», «գենդերային»[14] սահմանումները հանելու մասին, ինչը ոչ միայն չհանգուցալուծեց խնդիրը, այլև հակառակը՝ ավելի խորացրեց այն, քանի որ հնարավորություն տվեց ընդդիմադիր տրամադրված խմբին աճպարարություն անել տարբեր ոչ պաշտոնական փաստաթղթերով և պահանջել արդեն չեղյալ հայտարարել օրենքը:

Ստեղծված իրավիճակը բացահայտեց, որ գենդերային քաղաքականության ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից ընդունված փաստաթղթերի մասին իրազեկ է դրանց իրականացման համար պատասխանատու պետական պաշտոնյաների, փորձագետների և կանանց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների նեղ շրջանակը:

Կանանց կազմակերպությունների մի մասի կարծիքով՝ ՀՀ կառավարության որոշումը հապճեպ էր և չէր վերացնում «գենդեր» եզրույթը բացատրելու, բնակչությանը գենդերային քաղաքականությանը ծանոթացնելու, գենդերային հավասարության՝ որպես կայուն զարգացման նախադրյալի և գենդերային խտրականության հաղթահարման անհրաժեշտությունը պարզաբանելու խնդիրը:

Հայաստանի խորհրդարանի պատգամավորները և գենդերային քաղաքականության իրականացման համար պատասխանատու պետական պաշտոնյաները պատրաստ չգտնվեցին պարզաբանելու պետության գենդերային քաղաքականությունը:

Չնայած ՀՀ կառավարության կողմից նախատեսված է օրենսդրության գենդերային փորձաքննության ինստիտուտի ներդրում, ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող ոչ բոլոր օրենքներն են նախնական գենդերային փորձաքննություն անցնում: Զարգացման ծրագրերի և օրենքների մշակման համար պատասխանատու պետական պաշտոնյաները բավարար չափով չեն տիրապետում քաղաքական գործելակերպում և օրենսդրության մեջ գենդերային մոտեցումների ինտեգրման մեթոդաբանությանը:

Կանանց՝ իրավական նորմերում ամրագրված լայն իրավունքները տարբերվում են իրական գործելակերպից: Իրավունքների և հնարավորությունների անհամաչափությունը հիմնական խոչընդոտն է կանանց իրավահավասարության և խտրական գործելակերպից պաշտպանության ճանապարհին:

Նախորդ զեկուցումների առնչությամբ կոմիտեի դիտարկումներում նշվում է հանրապետության դատական պրակտիկայում կանանց իրավունքների պաշտպանության նպատակով կոնվենցիայի դրույթները կիրառելու նախադեպերի բացակայությունը, սակայն դատական իշխանության կառույցների ղեկավարների կողմից այդ ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել: Հաշվետու ժամանակաշրջանում դատական պրակտիկայում չեն հաստատվել կոնվենցիային և այլ միջազգային իրավական փաստաթղթերին համապատասխան մարդու իրավունքները խտրականությունից պաշտպանելու նախադեպեր:

Հատկանիշների լայն շրջանակով, այդ թվում նաև սեռի հատկանիշով խտրական գործողությունների համար պատասխանատվություն է նախատեսվում ՀՀ քրեական օրենսգրքի «Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ

14.գենդեր, գենդերային՝ տարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական հայեցակետ, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը:

ուղղված հանցագործությունները» բաժնում՝ 143-րդ հոդվածում («Մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելը»)՝ տուգանքներ կամ մինչև երկու տարի, իսկ պաշտոնատար անձանց համար երկուսից մինչև հինգ տարի ազատազրկում:

Քննչական և դատական պրակտիկայում փաստացի բացակայում են խտրականության հետևանքով կանանց իրավունքների խախտման մասին գործերը, այդ հարցում իրավական մշակույթ չի ձևավորվել: Բացառություն են կազմում միայն ընտանեկան բռնության զոհերի առողջությանը ծանր վնաս հասցնելու կամ մահվան հետ կապված գործերը:

Լրացնելով բնակչության իրավական իրազեկության բացերը՝ կանանց հասարակական կազմակերպությունները որոշ չափով կանանց իրավաբանական աջակցություն են ցույց տալիս: Փորձը ցույց է տալիս, որ կանայք իրավաբանական օգնության են դիմում հիմնականում ընտանեկան հարաբերությունների (ամուսնալուծություն, ալիմենտների նշանակում և այլն), սեփականության իրավունքների ճանաչման, աշխատանքային հարաբերությունների, թոշակների հաշվարկման հարցերով:

Երաշխավորություններ.

ՀՀ Ազգային ժողովին.

- *քննարկել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի այն փոփոխությունների մերժման հնարավորությունը, որոնք գենդերային քաղաքականությունը և գենդերային եզրույթները վարկաբեկելու նպատակ ունեն,*
- *նախաձեռնել միջոցառումներ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նպատակների և ինդիրների պարզաբանման ուղղությամբ:*

ՀՀ կառավարությանը և ՀՀ Ազգային ժողովին.

- *ձևավորել փորձագիտական խմբեր՝ օրինագծերի մշակման փուլում գենդերային փորձաքննության, ինչպես նաև ընդունվող միջնաժամկետ հեռանկարային զարգացման ծրագրերում գենդերային բաղադրիչի ներդրման նպատակով,*
- *աջակցել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ներդրմանն ուղղված տեղեկատվական-բացատրական հատուկ արշավների անցկացմանը,*
- *ձեռնարկել միջոցներ պետության գենդերային քաղաքականության և գենդերային հավասարության գաղափարախոսության մասին բոլոր մակարդակների պետական պաշտոնյաների իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ:*

Հանրապետության դատական մարմիններին.

- *դատական պրակտիկայում սեռի հատկանիշով խտրականության հետ կապված հայցերը քննելիս ձևավորել Կոնվենցիայի դրույթների օգտագործման նախադեպեր:*

Հոդված 3.
Կանանց առաջընթացի ապահովմանն ուղղված միջոցների համակարգը

Հիմնախնդիրը.

- *Ազգային մեխանիզմի՝ որպես կանանց նկատմամբ խտրականության հաղթահարման գործիքի բացակայությունը:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[15]

– Ողջունելով 2002 թվականին (աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում) կանանց, ընտանիքի և երեխաների հարցերի վարչության ստեղծումը՝ Կոմիտեն ափսոսանքով նշում է, որ մասնակից պետության մեջ բացակայում է ազգային մեխանիզմը՝ կանանց առաջընթացի ապահովման համապատասխան կառույցը:

– Կոմիտեն մտահոգված է նաև այն իրողությամբ, որ կանանց, ընտանիքի և երեխաների հարցերի վարչությունը տեսանելիություն և քաղաքական ճանաչում չի ստացել և, մասնավորապես, սահմանափակ կարողություններ ունի ազգային գենդերային հավասարության ծրագրերի և քաղաքականության արդյունավետ առաջմղման, համակարգման, մշտադիտարկման և գնահատման համար:

– Կոմիտեն մտահոգությամբ է նշում նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում չկա գենդերային հավասարության հարցերով զբաղվող առանձին բաժին:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[16]

Կոմիտեն, իր նախորդ հանձնարարականների համաձայն (A/57/38), հիշեցնում է.

- Մասնակից պետության պարտավորությունն ի կատարումն Կոնվենցիայի, այն է՝ լիովին ապահովել կառավարության հաշվետվողականությունը գենդերային հավասարության և կանանց կողմից իրենց իրավունքներից օգտվելու հարցերում:
- Կոմիտեի թիվ 6 Ընդհանուր մեկնաբանությունում և Պեկինի գործողությունների ծրագրում ներառված ուղենիշները կանանց առաջընթացի համար ազգային մեխանիզմի վերաբերյալ և հորդորում է մասնակից պետությանը գենդերային հավասարության մասին օրենք ընդունել, որով կհիմնադրվի կանանց առաջընթացի համար ազգային մեխանիզմ՝ անհրաժեշտ ֆինանսական և կադրային ռեսուրսներով, Կոնվենցիայի, «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի» կատարման համակարգման, ինչպես նաև պետական քաղաքականության բոլոր ոլորտներում, այդ թվում նաև Սահմանադրական դատարանի կողմից բոլոր նոր օրենքների վերանայման և բյուջետային գործընթացի շրջանակներում գենդերային ռազմավարության արդյունավետ իրականացման նպատակով:
- Կոմիտեն նաև մասնակից պետությանը կոչ է անում մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում գենդերային հավասարության ապահովման հարցերով զբաղվելու նպատակով հատուկ պաշտոն ստեղծել:

15. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 18:
16. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 19:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի երաշխավորությունների կատարման համատեքստում

Կոմիտեի հանձնարարականներին համապատասխան՝ մարդու իրավունքների պաշտպանի վարչությունում սահմանվել է մարդու իրավունքների պաշտպանի գենդերային հավասարության ապահովման հարցերով խորհրդականի պաշտոն, ինչը կանանց խտրականության դրսևորումներից և ընտանեկան բռնությունից պաշտպանելու լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում:

Հայաստանում ազգային մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունն արտացոլված է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում և «Գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրում»:

Համաձայն 2010 թ. փետրվարին ՀՀ կառավարության ընդունած արձանագրային որոշման Գենդերային քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին՝ հանրապետությունում գենդերային քաղաքականության համակարգման լիազորությունը վերապահվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին:

Կառավարության 2011 թ. մայիսի 20-ի որոշման համաձայն՝ հանրապետության բոլոր մարզերում ստեղծվել են Գենդերային քաղաքականության հայեցակարգի իրականացման և գենդերային հավասարության մշտապես գործող հանձնաժողովներ մարզպետների տեղակալների ղեկավարությամբ, որոնց կազմում ընդգրկվել են մարզպետարանների աշխատակիցներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ներկայումս տեղի է ունենում մարզերում ստեղծված գենդերային հանձնաժողովների աշխատանքների ակտիվացման, դրանց լիազորությունների շրջանակի ճշտման գործընթաց: Այդ հանձնաժողովների անդամների գենդերային գիտելիքների մակարդակի բարձրացման անհրաժեշտություն կա, և այդ նպատակով միջազգային հիմնադրամների, մասնավորապես ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ կատարվում է այդ կառույցների գործունեության գնահատում, բացի այդ, նախատեսվում է նրանց համար հատուկ կրթական ծրագրեր իրականացնել՝ ներգրավելով գենդերային փորձագետներ հասարակական հատվածից:

2012 թ. դեկտեմբերին ՀՀ կառավարությունը փոփոխություն է կատարել ՀՀ վարչապետին առընթեր Կանանց խորհրդի կանոնադրությունում և առաջարկել է դիտել այն որպես գենդերային հավասարության ազգային մեխանիզմ:

Սակայն դեռևս 2001 թ. ստեղծված Կանանց խորհուրդը չի համապատասխանում ազգային մեխանիզմի չափանիշներին, որոնք շարադրված են ինչպես Կանանց խտրականության վերացման կոմիտեի թիվ 6 Ընդհանուր հանձնարարականում[17], այնպես էլ Պեկինի գործողությունների ծրագրում[18]: Կանանց խորհրդի լիազորությունների շրջանակը բավականին

17. Համաձայն *հանձնարարականի*՝ ազգային մեխանիզմը պետք է ա) խորհրդատվություն իրականացնի կանանց վրա պետական քաղաքականության ազդեցության հարցերով, բ) իրականացնի կանանց վիճակի համակողմանի մշտադիտարկում և գ) մշակի ու ներդնի խտրականության վերացմանն ուղղված քաղաքականություն, ծրագիր և միջոցներ: Տես CEDAW Committee. *General Recommendation No. 6* "**Effective National Machinery and Publicity"** (seventh session, 1988): http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/index.html.
18. Ազգային մեխանիզմը սահմանվում է որպես «քաղաքականության համակարգման կենտրոնական ենթաբաժին կառավարության շրջանակներում»: Այն պետք է գտնվի կառավարությունում հնարավորինս բարձր մակարդակում և ղեկավարվի կաբինետի անդամ նախարարի կողմից: Այդ մեխանիզմը պետք է ունենա համապատասխան իշխանական լիազորություններ և իրավազորություն, ներառյալ «բոլոր ոլորտներում կառավարության քաղաքականության իրականացման վրա ազդեցություն գործելու հնարավորությունը»: Տես Պեկինի գործողությունների ծրագիր, կետ 201, հատկապես (a) և (d) ենթակետերը:

նեղ է ազգային մեխանիզմի գործառույթներն արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև գենդերային քաղաքականության իրականացման հետ կապված մեկնաբանություններ պահանջող հասարակական-քաղաքական առանձին գործընթացներին ճկուն և ժամանակին արձագանքելու համար:

Այսպես, 2013 թ. հուլիսից հանրապետությունում ծայր առած հակագենդերային քարոզարշավի ընթացքում, որն ուղղված էր 2013 թ. մայիսին ՀՀ խորհրդարանի կողմից «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի վարկաբեկմանը, Կանանց խորհուրդը ժամանակին գնահատական չտվեց անձանց անօրինական գործողություններին, հարձակումներին ու գենդերային եզրույթների հետ կապված շահարկումներին և չընդունեց հայտարարություն ի պաշտպանություն օրենքի, չձեռնարկեց միջոցներ գենդերային հավասարության օրենքի հակառակորդների կողմից քննադատության և սպառնալիքների հարվածի տակ հայտնված կանանց հասարակական կազմակերպությունների ղեկավարների և նրանց ղեկավարած ՀԿ-ների իրավունքները պաշտպանելու համար: Միայն նոյեմբերին Կանանց խորհուրդն ընդունեց օրենքը պաշտպանող հայտարարություն, որում նաև գնահատական էր տրված որոշ հասարակական և քաղաքական գործիչների անօրինաչափ գործողություններին:

Հայաստանում դեռևս որոշակի թյուրըմբռնում կա, թե ինչ է ազգային մեխանիզմը, հստակ սահմանազատում չի դրվում ազգային և ինստիտուցիոնալ մեխանիզմների միջև:

Ներկայումս Հայաստանում գոյություն ունեցող մեխանիզմները՝ ո՛չ առանձին, ո՛չ էլ համալիր, չեն համապատասխանում այն չափանիշներին, որոնց պետք է բավարարեն ազգային և ինստիտուցիոնալ մեխանիզմները: Գոյություն ունեցող կառույցներից որևէ մեկը լիարժեք չի մշակում և չի ներդնում պետության գենդերային քաղաքականությունը, չի հետևում և չի համակարգում տվյալ ոլորտում ստեղծված տարածքային մարմինների գործողությունները և գնահատական չի տալիս գենդերային հավասարության հաստատմանը, քաղաքական գործելակերպում և օրենսդրությունում գենդերային բաղադրիչի ինտեգրմանն ուղղված նրանց աշխատանքին, չի իրականացնում նախաձեռնողական հակախտրական աշխատանք:

Ազգային մեխանիզմի բացակայության հետևանքով՝

ա) լիարժեք չեն կատարվում ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին և այլ կոնվենցիաներ,

բ) ժամանակին չի նախաձեռնվում համապատասխան օրենքների մշակումը և միջազգային փաստաթղթերի ներկայացումը վավերացման համար,

գ) տեղի է ունենում ղեկավար մարմիններում և որոշումների ընդունման մակարդակում գենդերային անհավասարության և սեռի հատկանիշով խտրականության խորացում,

դ) խիստ ցածր է կանանց ներկայացվածությունը տեղական ժողովրդավարության մարմիններում,

ե) «Գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի» իրականացումը ցածր արդյունավետությամբ է ընթանում,

զ) լիարժեք չի իրականացվում օրենսդրությունում և քաղաքական գործելակերպում գենդերային բաղադրիչի ինտեգրման ռազմավարությունը,

է) գենդերային շարժընթացը չի ուսումնասիրվում և չեն արձանագրվում խնդրահարույց իրավիճակների դրսևորումները,

ը) չի հաջողվում արդյունավետորեն օգտագործել անկախ և պետական հետազոտական կենտրոնների, բուհերի, ՀԿ-ների փորձագիտական ներուժը գենդերային քաղաքականության մշակման և իրականացման գործում,

թ) գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմների գործունեության համակարգումը ցածր արդյունավետությամբ է իրականացվում:

Երկրում գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմները բախվում են այնպիսի լուրջ հիմնախնդիրների, ինչպիսիք են՝

- *մեխանիզմների ուղղվածությունը միայն մայրության, կանանց առողջության և սոցիալական ապահովման հիմնախնդիրների վրա՝ պատշաճ ուշադրություն չդարձնելով քաղաքական և տնտեսական ոլորտներում իշխանության և որոշումների կայացման վերահսկման մակարդակում նրանց մասնակցության հարցերին,*
- *ինստիտուտների մարգինալացումը պետական կառույցների ընդհանուր սխեմայում և դիրքավորման մեջ. դրանք «գետտոյացված են» սոցիալական ոլորտում և սոցիալական ապահովման ոլորտում, դրանք դեպի որոշում կայացնող կենտրոնական կառույցները տեղափոխելու միտում չի նկատվում,*
- *որոշում կայացնող պետական չինովնիկների մի մասի կողմից գենդերային հավասարության նշանակալիության և կարևորության ճանաչման բացակայությունը,*
- *գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմների ոչ հստակ մանդատն ու գործառույթները, ինստիտուցիոնալ մեխանիզմների փոխարինումը իմիտացիոն մեխանիզմներով,*
- *հետազոտությունների, մշտադիտարկման և լիարժեք գենդերային փորձաքննության անցկացման համար համապատասխան ներուժի և ռեսուրսների բացակայությունը,*
- *ֆինանսական և մարդկային ռեսուրսների անհամապատասխանությունը, ինչը հանգեցնում է որոշակի կախվածության միջազգային դոնորների տեխնիկական, ֆինանսական և ծրագրային օգնությունից,*
- *գոյություն ունեցող մեխանիզմների թույլ կապը հասարակական կազմակերպությունների հետ:*

Ներկայումս Հայաստանում ինստիտուցիոնալ մեխանիզմների գործունեության ուսումնասիրության արդյունքները, որը իրականացվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ, փորձագետների խմբի կողմից, հնարավորություն կտան մշակելու առաջարկություններ գենդերային հավասարության ազգային և ինստիտուցիոնալ մեխանիզմների կառուցվածքի և աշխատանքի կատարելագործման ուղղությամբ:

Երաշխավորություններ

- *Հարց բարձրացնել ՀՀ նախագահի առջև՝ քննարկել գենդերային քաղաքականության և գենդերային հավասարության ապահովման հարցերով ՀՀ նախագահի խորհրդականի պաշտոն սահմանելու հարցը:*
- *ՀՀ նախագահին առընթեր Հանրային խորհրդում ստեղծել գենդերային քաղաքականության և երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման հարցերի հանձնաժողով՝ ժողովրդագրական հարցերն առանձնացնելով առանձին հանձնաժողովում:*

ՀՀ Ազգային ժողովին.

- *քննարկել ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովում գենդերային հավասարության և օրենսդրության գենդերային փորձաքննության ենթահանձնաժողով ստեղծելու հնարավորությունը,*
- *«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելիս առաջարկել քաղաքային և գյուղական ինքնակառավարման մարմիններում ստեղծել գենդերային հիմնախնդիրների և զարգացման ծրագրերում գենդերային բաղադրիչի ինտեգրման հանձնաժողովներ,*
- *«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գենդերային հավասարության ապահովման հարցերով տեղակալի պաշտոն սահմանելու մասին (կանանց հարցերով խորհրդականի փոխարեն):*

ՀՀ կառավարությանը.

- *ՀՀ կառավարության կառուցվածքում ստեղծել արդյունավետ ազգային մեխանիզմ, որը դառնա կենտրոնական կառույց գենդերային քաղաքականության մշակման և իրականացման գործում և համակարգի բոլոր ինստիտուցիոնալ մեխանիզմների գործունեությունը,*
- *սահմանել գենդերային քաղաքականության և գենդերային հավասարության ապահովման հարցերով ՀՀ վարչապետի խորհրդականի պաշտոն,*
- *ուժեղացնել Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վերահսկողությունը,*
- *բոլոր նախարարություններում և պետական կոմիտեներում ձևավորել գենդերային քաղաքականության հարցերի հանձնաժողովներ աշխատակազմի ղեկավարի կամ նախարարի տեղակալներից մեկի (կամ Պետական կոմիտեի նախագահի տեղակալի) գլխավորությամբ,*
- *մարզպետարաններում ձևավորել գենդերային քաղաքականության հարցերի հանձնաժողով մարզպետի տեղակալներից մեկի գլխավորությամբ, հանձնաժողովների աշխատանքի արդյունավետության ապահովման նպատակով սահմանել հանձնաժողովի ազատված քարտուղարի պաշտոն,*
- *երաշխավորել տեղական ինքնակառավարման բոլոր քաղաքային մարմիններում գենդերային քաղաքականության հարցերի հանձնաժողովների ստեղծումը՝ հանձնաժողովի նախագահի պարտականությունները վերապահելով քաղաքապետարանների աշխատակազմի քարտուղարին:*
- *ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում, որպես անկախ կառույց, ստեղծել գենդերային հավասարության հարցերի հետազոտական կենտրոն՝ օրենսդրության մեջ և քաղաքական գործելակերպում գենդերային բաղադրիչի ներդրման հետ կապված հիմնախնդիրները մշակելու և մշտադիտարկում իրականացնելու համար:*

Հոդված 4
Ժամանակավոր հատուկ միջոցները

Հիմնախնդիրները.

- *Օրենսդիր իշխանությունում գենդերային անհավասարակշռության հաղթահարման նպատակով հանրապետությունում ձեռնարկված հատուկ ժամանակավոր միջոցների անարդյունավետությունն ու սահմանափակությունը:*
- *Գործադիր և տեղական իշխանության, քաղաքացիական ծառայության համակարգի որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածությունը բարձրացնելու նպատակով հատուկ ժամանակավոր միջոցների մեխանիզմի բացակայությունը:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[19]

– Կոմիտեն մտահոգված է այն իրողությամբ, որ ընտրական օրենսգրքում կանանց համար նախատեսված 15-տոկոսանոց քվոտան ապարդյուն է:

– Կոմիտեն մտահոգված է նաև, որ մասնակից պետությունը ոչ մի այլ ժամանակավոր հատուկ միջոց չի օգտագործել որպես ընդհանուր քաղաքականություն՝ կոնվենցիայում ընդգրկված բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության ապահովումն արագացնելու կամ կանանց իրավունքների ոլորտում, մասնավորապես՝ աշխատավայրում և քաղաքականության մեջ կանանց վիճակի բարելավման նպատակով:

– Կոմիտեն նաև մտահոգված է ժամանակավոր հատուկ միջոցների հասկացության հստակ ըմբռնման բացակայությամբ, ինչը սահմանված է կոնվենցիայի 4 (1) հոդվածում և լրացուցիչ բացատրված Կոմիտեի թիվ 25 Ընդհանուր հանձնարարականում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[20]

Կոմիտեն խրախուսում է մասնակից պետությանը.

– կոնվենցիայի 4(1) հոդվածին և Կոմիտեի թիվ 25 Ընդհանուր հանձնարարականին համապատասխան՝ ընդունել ժամանակավոր հատուկ միջոցների կիրառման համար հատուկ օրենսդրություն՝ բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց փաստացի հավասարության հասնելու գործընթացն արագացնելու նպատակով,

– արագացնել ընտրական օրենսգրքում 15-տոկոսանոց քվոտան բարձրացնելու վերաբերյալ փոփոխություններ կատարելու գործընթացը և քննարկել այն առաջարկված 20 տոկոսից վեր բարձրացնելու հնարավորությունը:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

19. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներ / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 16:
20. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներ / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 17:

2013 թ. մայիսին ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքն ամրագրում է գենդերային հավասարության ապահովման համար իրավական և կազմակերպչական միջոցների, ինչպես նաև ժամանակավոր հատուկ միջոցների կիրառման անհրաժեշտությունը:

Կանանց հասարակական կազմակերպությունների առաջարկությունները նշված մեխանիզմների որոշակիացման և գործադիր ու տեղական իշխանության, քաղաքացիական ծառայության ոլորտներում քվոտավորման սկզբունքի կիրառման վերաբերյալ մերժվեցին օրենքի քննարկման փուլում, ինչը, անշուշտ, կդժվարացնի օրենքում ամրագրված դրույթների իրականացումը: Այդ կապակցությամբ վաղ է համարել, որ կոմիտեի հանձնարարականը կոնվենցիայում ընդգրկված բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց փաստացի հավասարության ապահովումն արագացնելու համար ժամանակավոր հատուկ միջոցների՝ որպես ընդհանուր քաղաքականության օրենսդրական ամրագրման մասին հանձնարարականը լիովին իրագործվել է:

Գործադիր ու տեղական իշխանության, քաղաքացիական ծառայության ոլորտներում՝ որոշումների կայացման մակարդակում, կանանց ներկայացվածության բարձրացման համար որոշակի միջոցների ներդրման հիմնախնդիրը լուծում չի ստացել օրենսդրական տեսանկյունից: Դա մեկ անգամ ևս հաստատում է Կոմիտեի դիտարկումը ժամանակավոր հատուկ միջոցների հայեցակարգի լիարժեք ըմբռնման բացակայության մասին[21], որի համատեքստում պետությունը չի ներկայացնում պատշաճ պարզաբանումներ՝ արդարացնելով իր մոտեցումները մասնավոր սեկտորին, մասնավոր կազմակերպություններին կամ քաղաքական կուսակցություններին բնորոշ շուկայական կամ քաղաքական գործոնների գերակայությամբ:

Պետությունը դեռևս հստակ տարբերություն չի դնում կանանց փաստացի կամ հիմնարար հավասարության հաստատման որոշակի նպատակին հասնելու գործընթացի արագացմանն ուղղված հատուկ ժամանակավոր միջոցների և կանանց ու աղջիկների վիճակի բարելավման համար ընդունված և իրականացվող այլ ընդհանուր սոցիալական ռազմավարությունների միջև[22]:

Հատուկ արտոնությունները, որոնք տրամադրում է ազգային օրենսդրությունը հղի կանանց և մայրերին աշխատանքի ոլորտում և ազատազրկման վայրերում պատիժ կրող կանանց, չեն կարող դիտվել որպես ժամանակավոր հատուկ միջոցներ, քանի որ մշտական բնույթ են կրում:

Տեղական ընտրություններում և գործադիր իշխանության պաշտոններում կանանց մասնակցության բարձրացումը կարգավորող մեխանիզմներ չեն մշակվել: «ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը» հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց ներկայացվածության բարձրացման անհրաժեշտության մասին դրույթ է բովանդակում, սակայն այդ նպատակով երաշխավորված միջոցները սահմանափակվում են սոսկ կանանց լիդերության աջակցմանն ուղղված կրթական և տեղեկատվական միջոցառումներով, ինչն անհրաժեշտ, բայց ոչ բավարար միջոց է փաստացի արդյունքի հասնելու համար: Քվոտավորման սկզբունքն օրենսդրորեն ամրագրված է միայն խորհրդարանական ընտրությունների և ՀՀ մայրաքաղաք Երևանում տեղական ընտրությունների համամասնական ընտրակարգի համար:

21. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում հատուկ ժամանակավոր միջոցների նշանակությունը և կիրառման ոլորտը: Թիվ 25 Ընդհանուր հանձնարարական, http://www1.umn.edu/humanrts/russian/gencomm/Rgeneral25.html
22. Նույն տեղում:

ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագված է նաև կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում կանանց ներկայացվածության քվոտավորման սկզբունքը[23], որն ապահովում է կանանց կրիտիկական զանգվածը (30,5%) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների կազմում: Այդուհանդերձ, այդ նույն հանձնաժողովների ղեկավարության կազմում կանայք չեն գերազանցում 16%-ը:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի հանձնարարականը ՀՀ ընտրական օրենսգրքում խորհրդարանական ընտրությունների համամասնական ընտրակարգով առաջադրվող կուսակցությունների ցուցակներում գենդերային քվոտան առաջարկվող 20 տոկոսից բարձրացնելու հնարավորությունների քննարկման վերաբերյալ իրականացվել է մասամբ[24]:

Խորհրդարանական ընտրություններում համամասնական ընտրակարգով առաջադրվող կուսակցությունների ցուցակներում գենդերային քվոտայի բարձրացման մասին դրույթն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թ. հետևյալ ձևակերպմամբ. «Ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը»[25]:

Թեև օրենքում նախատեսված է գենդերային առումով պատշաճ ձևակերպում, հոդվածը բովանդակում է խտրական նորմ, որը բացառում է տվյալ սկզբունքի կիրառումը ցուցակի առաջին անցողիկ հնգյակի նկատմամբ:

Մտահոգություն է առաջացնում այն հանգամանքը, որ հակառակ Հայաստանի օրենսդրությունում խտրական նորմերի բացակայությանը՝ գենդերային քվոտայի ձևակերպումը ընտրական օրենսգրքում խտրական մոտեցում է բովանդակում, քանի որ սահմանափակում է կուսակցությունների համամասնական ցուցակների առաջին տեղում կանանց ներկայացվածության հնարավորությունը:

Նման ձևակերպմամբ քվոտայի կիրառումը 2012 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում բացահայտեց դրա անարդյունավետությունը: Ինչպես ցույց տվեցին ուսումնասիրությունները, խորհրդարանական ընտրություններին մասնակցող 9 քաղաքական ուժերից ոչ մեկը կնոջ թեկնածություն չի ներկայացրել իր ցուցակի առաջին հնգյակում[26]:

Ընտրական օրենսգրքում գենդերային քվոտան մինչև 20% բարձրացնելուց հետո քաղաքական կուսակցությունները, նախընտրական համամասնական ցուցակներում հասարակությանը ներկայացնելով միջինը 22,8% կանանց, ընտրությունների արդյունքներով իրենց խորհրդարանական խմբակցությունների կազմում ընդգրկեցին առաջադրված կանանց

23. ՀՀ ընտրական օրենսգիրք. հոդվ. 40, 41:
24. Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի գնահատականները քվոտաների անբավարարության մասին հաստատվել են նաև Հազարամյակի զարգացման նպատակների շրջանակում Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման համատեքստում: Ըստ Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու 2010 թ. ազգային զեկույցի գնահատականների՝ հազարամյակի 3-րդ նպատակի շրջանակում նախանշված նպատակային ցուցանիշների համաձայն, կանանց տեսակարար կշիռը պատգամավորների, մարզպետների, նախարարների և փոխնախարարների ընդհանուր թվում մինչև 2015 թ. պետք է հասնի 25%-ի: Սակայն 2010 թ. տվյալներով այդ ցուցանիշը կազմել է 7%-ից ոչ ավելի: Այդ կապակցությամբ զեկույցի փորձագետներն արձանագրել են, որ ընտրական օրենսգրքում նախատեսված 15% -ի քվոտան կուսակցական ընտրական ցուցակներում բավարար միջոց չէ որոշումների կայացման մակարդակում կանանց 25%-ն ապահովելու համար:
25. ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդվ. 108:
26. Կանանց քաղաքական մասնակցությունը 2012 թ. խորհրդարանական ընտրություններում/ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Երևան, 2012:

նվազ, քան 50%-ը: 2012 թ. ընտրությունների արդյունքներով ՀՀ Ազգային ժողովում կանանց ներկայացվածությունը կազմեց ընդամենը 10,67%: Այսպիսով, ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված 20-տոկոսանոց քվոտան, որ կոչված էր ապահովելու կանանց ներկայացվածության բարձրացումը, որոշ չափով համահարթվեց ներկուսակցական տեղափոխությունների և ինքնաբացարկների հետևանքով, որոնց դրդապատճառները մեծ մասամբ հասարակության համար անհասկանալի մնացին: Հետազոտությունները[27] ցույց տվեցին, որ օրենսդրությամբ կանանց աջակցություն ցուցաբերելու համար նախատեսված մեխանիզմը չգործեց:

Կանանց կազմակերպությունների առաջարկությունները քվոտան մինչև 30% բարձրացնելու և տղամարդկանց ու կանանց թեկնածությունների հերթագայության սկզբունքը ցուցակներում առաջին համարից սկսած կիրառելու մասին մերժվեցին: Աջակցություն չստացավ նաև ինքնաբացարկների դեպքում քվոտան պահպանելու մասին առաջարկությունը, ըստ որի՝ մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում այն անցնելու էր ցուցակում ընդգրկված հաջորդ կնոջը:

ՀՀ Ազգային ժողովում կանանց ներկայացվածության բարձրացման անհրաժեշտությունը հաստատվում է հանրապետությունում անցկացված հարցումների արդյունքներով: Այսպես, դեռևս 2008 թ. աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից անցկացված հարցման արդյունքում[28] *«Ինչ եք կարծում, քանի կին պատգամավոր պետք է ներկայացված լինի խորհրդարանում»* հարցի պատասխաններից հարցվողների 85,5%-ն ընտրել է կանանց 20%-ից մինչև 50% ընդգրկումը, ինչը վկայում է հասարակության սպասելիքների և Հայաստանի խորհրդրանում կանանց իրական ներկայացվածության խիստ անհամապատասխանության մասին:

Կանանց քվոտաների նկատմամբ հասարակության վերաբերմունքի բացահայտմանն ուղղված հարցումները ցույց են տալիս, որ քվոտաների կիրառմանը դրական վերաբերվող հարցվողների թիվն ավելացման միտում ունի. 2008 թ. հարցվողների 43%-ը[29] և 2011 թ. 57,2%-ը հայտնել են քաղաքական և պետական կառավարման ոլորտում քվոտաների նկատմամբ իրենց դրական վերաբերմունքի մասին: Այսպիսով, հասարակությունն ավելի առաջադեմ է և պակաս պահպանողական, քան քաղաքական վերնախավի մեծ մասը[30]:

Փորձագետների կարծիքով՝ օրենսդիր իշխանությունում և գործադիր իշխանության բոլոր մակարդակների պետական կառավարման ոլորտում գենդերային հավասարակշռությունն առաջ մղելու քաղաքականության սոցիալական աջակցման լուրջ ներուժ կա:

Հարցվողների կարծիքով՝ երկրի խորհրդարանում կանանց առավել օպտիմալ ներկայացվածությունը 36,55% է, կառավարությունում՝ 32,73%, մարզպետների (տարածքային կառավարման մարմինների ղեկավարների) կազմում՝ 24,70%, քաղաքապետի պաշտոնում՝ 25,87%, համայնքի ղեկավարի՝ 25,21%:

27. Նույն տեղում:
28. Որոշումների կայացման մակարդակում կանանց թերներկայացվածության պատճառները: Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ: Երևան, 2008:.
29. Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ/«Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն, Երևան, 2011:
30. Նույն տեղում:

Երաշխավորություններ

ՀՀ Ազգային ժողովին.

- *քննարկել ՀՀ ընտրական օրենսգրքում նախատեսված համամասնական ընտրակարգով կուսակցական ցուցակներում կանանց հավասարաչափ ներկայացվածության քվոտան առնվազն մինչև 30% բարձրացնելու հարցը՝ նպատակ ունենալով ապահովել օրենսդիր իշխանությունում կանանց «կրիտիկական զանգվածը»,*
- *ՀՀ ընտրական օրենսգրքի 108-րդ հոդվածում կատարել փոփոխություն, որով կկանխվեն կանանց «ինքնաբացարկները» և կապահովվի կանանց ներկայացվածությունը ՀՀ Ազգային ժողովում՝ սահմանված գենդերային քվոտային համապատասխան[31],*
- *քաղաքային ավագանիներում գենդերային անհավասարակշռությունը հաղթահարելու նպատակով քննարկել համամասնական ընտրակարգի անցնելու հարցը:*

ՀՀ կառավարությանը.

- ***քննարկել գործադիր իշխանության ղեկավար պաշտոնների մրցութային ընտրության և նշանակման ժամանակ «կանանց աջակցող դրական միջոցների» ներդրման հարցը:***

Քաղաքական կուսակցություններին.

- *կիրառել գենդերայնորեն հավասարակշռված մոտեցում կուսակցական ընտրական ցուցակները ձևավորելիս և ընտրություններից հետո մանդատները բաշխելիս,*
- *ձևավորել կուսակցությունների ղեկավար կառույցներում կանանց առաջմղման մեխանիզմներ,*
- *մշակել առաջադրման համար կանանց կադրերի ռեզերվի պատրաստման համակարգ,*
- *իրականացնել համակարգված միջոցառումներ՝ ուղղված քաղաքական պաշտոններում կադրերի գենդերայնորեն հաշվեկշռված առաջադրմանը իշխանությունում կանանց ներկայացվածության «կրիտիկական զանգվածի» հասնելու նպատակով,*
- *ընդլայնել փորձի փոխանակումը այլ երկրների քաղաքական կուսակցությունների հետ, որոնք հաջողության են հասել գենդերային հավասարակշռության նվաճման և ժամանակավոր հատուկ մեթոդների կիրառման հարցում:*

Զանգվածային լրատվության միջոցներին.

- *անցկացնել բացատրական քարոզարշավներ գործադիր և օրենսդիր իշխանությունում գենդերային անհավասարակշռության հաղթահարման նպատակով ժամանակավոր հատուկ միջոցների կիրառման անհրաժեշտության վերաբերյալ:*

31. Հանրապետության կանանց հասարակական կազմակերպություններն ունեն գենդերային քվոտայի պահպանմանն ուղղված երկու մոտեցում՝ ամրագրել գենդերային քվոտան խորհրդարանում ներկայացված կուսակցական խմբակցությունների կազմում կամ արմրագրել դրույթ, որ ինքնաբացարկի դեպքում մանդատից հրաժարված կնոջ տեղը պետք է զբաղեցնի կուսակցական ցուցակում ընդգրկված հաջորդ կինը:

Հոդված 5.

Տղամարդկանց և կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելների փոփոխություն

Հիմնախնդիրները.

- *Հայ հասարակության մեջ գենդերային կարծրատիպերի լայն տարածվածությունը:*
- *Գենդերային կարծրատիպերի և սեքսիզմի հաղթահարմանն ուղղված պետական միջոցների բացակայությունը:*
- *ԶԼՄ-ներում կնոջ կերպարի կարծրատիպային պատկերացումների վերարտադրությունը:*
- *ԶԼՄ-ներում գենդերային հավասարության գաղափարը չընդունելը:*
- *ԶԼՄ-ներում գենդերային հավասարության էության կանխամտածված աղավաղումը:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[32]

Կոմիտեն վերահաստատում է իր նախորդ (A\57\38) եզրափակիչ դիտարկումներում արտահայտված մտահոգությունը կնոջը ստորադասող խոր արմատացած նահապետական վերաբերմունքի, ընտանիքում և հասարակության մեջ նրա դերի և պարտականությունների վերաբերյալ առկա ուժեղ կարծրատիպերի կապակցությամբ:

Այդպիսի վերաբերմունքը և կարծրատիպերը էական խոչընդոտ են Կոնվենցիայի իրականացման ճանապարհին և քաղաքական կյանքում, աշխատաշուկայում, կրթական և այլ ոլորտներում կանանց անբարենպաստ վիճակի հիմնական պատճառներից են:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[33]

Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը.

– Անհետաձգելի միջոցներ ձեռնարկել, հատկապես՝ գյուղական վայրերում, սկսելու լայնորեն տարածում գտած կանանց ստորադասման և երկու սեռերի դերերի վերաբերյալ ունեցած կարծրատիպերը վերափոխելու գործընթացը,

– նախաձեռնել տեղեկատվական-բացատրական և կրթական արշավների անցկացում, որոնք, ի թիվս այլոց, կողմնորոշված կլինեն դեպի համայնքների ղեկավարները, ծնողները, մանկավարժները, պաշտոնյաները և երիտասարդ աղջիկներն ու տղաները՝ համաձայն Կոնվենցիայի 2(f) և 5 (a) հոդվածներից բխող պարտավորությունների,

– ուսումնասիրել ԶԼՄ-ների դերը կարծրատիպերի վերացման հարցում, այդ թվում կանանց ոչ ավանդական ու դրական կերպարների ներկայացման խրախուսման և ընդհանուր առմամբ հասարակության համար գենդերային հավասարության նշանակության ներկայացման միջոցով:

32. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 20:
33. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /,կետ 21:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

«ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի» շրջանակներում նախատեսված են մի շարք նպատակներ և խնդիրներ՝ ուղղված գենդերային հավասարության քաղաքականության քարոզչությանը, գենդերային կարծրատիպերի և խտրական գործելակերպի հաղթահարմանը գենդերային կրթության և հասարակության իրազեկության բարձրացման միջոցով, այդ թվում նաև ՁԼՄ-ների միջոցով:

Դրա հետ մեկտեղ, չնայած գենդերային կրթության ինստիտուցիոնալացումը պետության գենդերային քաղաքականության առաջնահերթությունների շարքում է, այդ գործընթացի զարգացումը դանդաղ է կատարվում և ներառում է սովորողների սոսկ փոքր մասը, բնակչության գենդերային իրազեկության բարձրացման գործընթացը համակարգված չէ: Կրթության համակարգում դեռևս առաջնային չեն դարձել գենդերային գիտելիքների հաղորդումը, սովորողների և ուսանողների քաղաքացիական պատասխանատվության ձևավորումը: Կրթական համակարգը նպատակաուղղված չէ սովորողների և ուսանողների կողմից գենդերային հավասարության նորմերի և սկզբունքների ընկալմանը և քաղաքացիական պատասխանատվության ձևավորմանը:

Ակտիվ քաղաքացու ձևավորման և կանանց լիդերության զարգացման հիմնախնդրի լուծումը ստանձնել են հասարակական կազմակերպությունները, հատկապես՝ կանանց, որոնք զգալի աշխատանք են տանում կանանց ակտիվ քաղաքացիական դիրքորոշման և պետական մտածելակերպի ձևավորման, կազմակերպչական աշխատանքի հմտությունների հաղորդման, հասարակությունում տիրապետող գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը և հայ հասարակության մեջ կնոջ «բնական կոչման» մասին պատկերացումների փոփոխմանն աջակցելու պատրաստակամության պատվաստման ուղղությամբ:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ անցկացվել է որոշակի աշխատանք 12 բուհերում գենդերային դասընթացների և 32 դպրոցներում գենդերային գիտելիքների դասերի ներդրման ուղղությամբ:

Կանանց լիդերության ձևավորման և կանանց ակտիվության զարգացման ուղղությամբ զգալի աշխատանք է իրականացնում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի՝ 2000 թվականից գործող կանանց լիդերության դպրոցը, որը նպատակասլաց գործունեություն է ծավալում ունկնդիրների գենդերային իրազեկության բարձրացման և կանանց քաղաքական լիդերության ձևավորման ուղղությամբ: Հետևելով այդ օրինակին՝ կանանց լիդերության դպրոցներ են ստեղծել նաև մի շարք ուրիշ կանանց հասարակական կազմակերպություններ, որոնք իրականացնում են ՀԿ-ների ակտիվիստների և լրագրողների գենդերային կրթություն լիդերության դպրոցների և հատուկ սեմինարների ձևաչափով:

Քաղաքական և հասարակական գործելակերպում գենդերային բաղադրիչի ներդրման և գենդերային իրազեկության բարձրացման նպատակով պետության և հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվում են մի շարք մրցույթներ, որոնք ուղղված են գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը և ՁԼՄ-ներում կնոջ ոչ կարծրատիպային կերպարի քարոզչությանը:

ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին անցկացվում են ամենամյա մրցույթներ վարչապետի մրցանակի համար. «Լավագույն քաղաքային և գյուղական համայնք գենդերային

քաղաքականության իրականացման ուղղությամբ», «Լավագույն կին ձեռնարկատեր», «Լավագույն ՋԼՄ գենդերային խնդիրների լուսաբանման ուղղությամբ»:

Բրիտանական խորհուրդը ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակը մի շարք միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ արդեն 5 տարի է, ինչ անցկացնում են ՋԼՄ-ներում կնոջ կերպարի լավագույն լուսաբանման ամենամյա **Նա/Նե** մրցույթը:

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան «Օքսֆամ-Հայաստանի» աջակցությամբ անցկացնում է «Գյուղատնտեսության ոլորտում կին հերոսուհի» կոչման ամենամյա մրցույթ:

Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցչությունը նախաձեռնել է Հայաստանում սելեկտիվ աբորտների հիմնախնդրի լուսաբանմանն ուղղված լրագրողական աշխատանքների մրցույթի անցկացում:

Անցկացվող մրցույթները դարձել են կարծրատիպերի դեմ պայքարի արդյունավետ գործիք, նպաստում են կանանց ոչ կարծրատիպային կերպարի քարոզչությանը և շահագրգռում են լրագրողներին լուսաբանել գենդերային հիմնախնդիրները, այդուհանդերձ ՋԼՄ-ներում զգայուն գենդերային քաղաքականության ձևավորումը լուրջ և արդիական խնդիր է մնում:

ՋԼՄ-ների վերլուծությունը ցույց է տալիս, որ լրագրողները մեծ մասամբ, այդ թվում նրանք, որոնք քարոզում են հաջողված կանանց կերպարները, չունեն բավարար գիտելիքներ, որպեսզի դառնան պետության գենդերային քաղաքականության և գենդերային հավասարության գաղափարախոսության քարոզչության ակտիվ դերակատարներ: Հանրապետությունում դեռևս լուրջ թերություններ կան լրագրողական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործում: Լրագրողների գենդերային կրթությունն իրականացվում է միայն առանձին բուհերում որպես կամընտրական դասընթաց կամ մագիստրատուրայի շրջանակներում:

Լրագրողների շրջանում կայուն գիտելիքների և հաստատուն համոզմունքների բացակայությունն առանձնապես վառ դրսևորվեց 2013 թ. օգոստոս-սեպտեմբերին սոցիալական ցանցերում 2013 թ. մայիսին ՀՀ խորհրդարանի կողմից ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի դեմ ծավալված արշավի ընթացքում: Մի խումբ անձինք, միտումնավոր խեղաթյուրելով պետության՝ հասարակության մեջ գենդերային հավասարության հասնելուն ուղղված քաղաքականությունը և ներկայացնելով գենդերային գաղափարախոսությունը «որպես ավանդական ազգային արժեքների դեմ և հայ ընտանիքի քայքայմանն ուղղված քաղաքականություն», պահանջում էին հետ կանչել օրենքը:

Օրենքի դեմ ուղղված հակագենդերային արշավի շրջանակներում օգտագործվող մեթոդները, ըստ էության, ուղղակիորեն խախտում են «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, որն արգելում է գենդերային հավասարության գաղափարախոսությունը վարկաբեկող տեղեկատվության տարածումը: Այդուհանդերձ հակաքարոզչության ընթացքում հասարակությանը նպատակասլաց մատուցվում էր ապատեղեկատվություն, որն ուղղված էր հասարակական գիտակցության մշակմանը հօգուտ կնոջ տեղի ու դերի մասին ավանդական նահապետական պատկերացումների: Մերժվում էր գենդերային կարծրատիպերի, կանանց նկատմամբ խտրականության և բռնության առկայությունը, տեղի էր ունենում հարձակում կանանց իրավունքների վրա:

Չնայած հատկապես այս օրենքի սահմաններում է շեշտվում գենդերային հավասարության մշակույթի ձևավորման ու քարոզչության և ՋԼՄ-ների միջոցով գենդերային հավասարության գաղափարը քարոզող նյութերի տարածման, գենդերային հավասարության խախտմանն ուղղված քարոզչությունից հասարակության պաշտպանության անհրաժեշտությունը, մեդիա ընկերակցությունն ընդհանուր առմամբ անպատրաստ գտնվեց հասարակությանը հակափաստարկներ ներկայացնելու հարցում՝ չհիմնվելով պետության գենդերային քաղաքականության վրա և չպարզաբանելով դրա նպատակներն ու խնդիրները:

Ավելին, չնայած ՋԼՄ-ների, մշակույթի և կրթության միջոցով գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը, համաձայն օրենքի, համարվում է անուղղակի խտրականության դրսևորում, օրենսդրորեն ՋԼՄ-ների տպագիր արտադրանքում և հատկապես սոցիալական ցանցերում խտրական գործելակերպի քարոզչության դեմ պայքարի իրական լծակներ չկան:

Կնոջ տեղի ու դերի մասին ավանդական նահապետական պատկերացումների օգտին հասարակական կարծիքի մշակմանն ուղղված արշավը դրսևորվեց նաև հանրապետությունում տեղի ունեցած խորհրդարանական, նախագահական և տեղական ընտրություններում: Դրանց ընթացքում արձանագրվել են կանանց նկատմամբ սեքսիզմի բազմաթիվ դրսևորումներ, որոնք, սակայն, չստացան պատշաճ գնահատական ոչ միայն հասարակության, այլև պետական իրավական կառույցների, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների կողմից:

Հանրապետությունում գովազդում և ՋԼՄ-ներում սեքսիզմի դրսևորումների դեմ պայքարի գործելակերպ չի հաստատվել: Պետական մարմինները չեն ուսումնասիրում սեքսիզմի դրսևորումների հետ կապված իրավիճակը և չեն արձագանքում դրան:

ՀՀ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովը գնահատական չտվեց խորհրդարանական ընտրություններում առաջադրված կանանց հասցեին արված սեքսիստական արտահայտություններին, որոնք արել է նախագահի թեկնածուներից մեկը՝ հրապարակայնորեն կասկածի տակ առնելով կանանց՝ քաղաքականությանը մասնակցելու իրավունքը[34]:

Հասարակությունում կանանց ստորադաս դերի վերաբերյալ նահապետական պատկերացումների տիրապետման հիմնախնդիրը և հասարակության մեջ նրանց դերի ու տեղի մասին կարծրատիպերի ամրությունը հաստատվել է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման (սելեկտիվ աբորտների) հետազոտության շրջանակներում, որի պատճառով Հայաստանը հայտնվել է նորածինների սեռերի հարաբերակցության մեջ հավասարակշռության լուրջ խախտումներ ունեցող երկրների շարքում: Համաձայն ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ ՀՀ Վիճակագրության ազգային ծառայության կողմից իրականացված հետազոտությունների արդյունքների[35], նման անհավասարակշռության գլխավոր պայմաններից են նահապետական նախապաշարումները, ըստ որոնց էլ նախապատվությունը տրվում է տղաներին: Փորձագետների գնահատականներով՝ սելեկտիվ աբորտների գործելակերպն ապացուցում է, որ հասարակության պատկերացումներում կինը պակաս արժեքավոր է, քան տղամարդը, ինչը խտրականության դրսևորում է:

34. Վարդան Սեդրակյան, նախագահի թեկնածու 2013 թ. ընտրություններում:
35.«Հայաստանում նորածինների սեռերի անհավասարակշռությունը. ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն: Հայաստանում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման տարածվածությունը և պատճառները»: Երևան, Ազգային վիճակագրական ծառայություն, 2011:

Կարծատիպային կողմնորոշումների վերարտադրության խնդրում ԶԼՄ-ների դերը դարձավ վերջին երկու տարիներին անցկացված մի շարք հետազոտությունների և ԶԼՄ-ների մշտադիտարկման առարկա[36]:

Համաձայն վերջին երկու տարում անցկացված հետազոտությունների և ԶԼՄ-ների մշտադիտարկման[37], այն մարդկանց 86%-ը, որոնց մասին կարդում են համացանցում և Հայաստանի տպագիր մամուլում, տղամարդիկ են, տեղեկատվական հոսքի 10%-ն է միայն հատկացված կանանց: Նորությունները տղամարդկանց մասին են, նյուսմեյքերները հիմնականում տղամարդիկ են՝ կանանց համեմատ 6:1 հարաբերակցությամբ, փորձագիտական կարծիքը նույնպես պատկանում է տղամարդկանց՝ 8:1 հարաբերակցությամբ: Ընդսմին այդ հրապարակումների հեղինակների 67%-ը կանայք են:

Կանանց փորձագիտական կարծիքը գործնականում արտացոլում չի գտնում պարբերական մամուլի էջերում, ինչի հետևանքով ձևավորվում է կարծրատիպային ընկալում, թե կանայք ունակ չեն դրսևորելու հասարակական-քաղաքական ակտիվություն և ազդելու որոշումների կայացման վրա:

Կանանց տեղի ու դերի մասին կարծրատիպային մոտեցումների և նրանց՝ ընտանիքի տարածությամբ սահմանափակվող կերպարի տարածումը բացահայտվել է նաև գովազդի, նաև սերիալների կոնտենտ հետազոտություններում: Սերիալներում գերակշռում է չաշխատող տնային տնտեսուհու կերպարը, որը զբաղված է բամբասանքներով ու բանսարկություններով և հաճախ ենթարկվում է հոգեբանական ու ֆիզիկական բռնության ամուսնու կողմից[38]:

Աշխատող կանանց կերպարները, որոնք համատեղում են ընտանիքն ու կարիերան, գործնականում բացակայում են: Կանանց կազմակերպությունները բազմիցս հասարակության ուշադրությունը հրավիրել են նաև հայկական սերիալներում քարոզվող բռնության հիմնախնդրի վրա:

Կարծրատիպերի և կանանց քաղաքական ու հասարակական ակտիվության վրա դրանց ազդեցության խնդիրը բացահայտվել է հանրապետության հասարակական կազմակերպությունների կողմից անցկացված բազմաթիվ հետազոտություններով[39]: Դրանց արդյունքում[40] բացահայտվել է, որ հարցվողների 31,1%-ը հասարակական կյանքում գենդերա-

36. ԶԼՄ-ների գենդերային մշտադիտարկումներ հետևյալ թեմաներով. «Կնոջ կերպարը լրատվամիջոցների ներկայացմամբ» (2011), «Գենդերային հիմնախնդիրների լուսաբանումը ԶԼՄ-ներում» (2010, «Պրոմեդիա-Գենդեր» ՀԿ, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ), Հետազոտություն «Կնոջ կերպարը հայկական գովազդում» («Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան» կազմակերպության կրթաթոշակառուների հետազոտական խումբ), հետազոտություն «Կնոջ կերպարը հայկական սերիալներում» (ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի խումբ), հետազոտություն «Հեռու մնա կարծրատիպերից» («Հասարակություն առանց բռնության» ՀԿ, Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ):
37. «Կնոջ կերպարը լրատվամիջոցների ներկայացմամբ», մոնիթորինգի վերլուծական հաշվետվություն, 2011:
38. Կնոջ կերպարը հայկական սերիալներում ԵՊՀ/ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն/2012
39. «Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ» / «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն» ՀԿ, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2011, «Կանանց պատկերացումները մարդու իրավունքների վերաբերյալ և վարքը դրանց պաշտպանության հարցում» / «Կանայք հանուն ժողովրդավարության, Շահխաթուն» ՀԿ, 2012, «Կանայք Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ» / Կովկասի ինստիտուտ, 2011, «Կանանց քաղաքական մասնակցությունը 2012 թ. խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում» / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2013, «Որոշումների կայացման մակարդակում կանանց ցածր ներկայացվածության պատճառները» / Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, 2010:
40. «Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ / «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն» ՀԿ, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2011:

յին հավասարության հասնելու և կանանց առաջընթացի ճանապարհին որպես հիմնական խոչընդոտ նշում է հասարակության կարծրատիպային մոտեցումները և կարծրատիպային մտածելակերպը: Ընտանիքում տղամարդկանց և կանանց դերերի ոչ հավասար բաժանումը նշել է 15,4%-ը, կանանց և տղամարդկանց ֆիզիոլոգիական տարբերություններով պայմանավորված սոցիալական դերերի յուրահատկությունը՝ 13,7%-ը, սոցիալ-տնտեսական դժվարությունները՝ 12,7%-ը, հասարակական հարաբերություններում տղամարդկանց ագրեսիվ դիրքորոշումը՝ 12,3%-ը: Հետազոտությունների արդյունքները առաջ են քաշում ժամանակակից հայ հասարակությունում նոր գենդերային մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը[41]:

«ՊրոՄեդիա-Գենդեր» հասարակական կազմակերպության՝ WomenNet.am տեղեկատվական-վերլուծական պորտալի ստեղծման նախաձեռնությունը (2011 թ.), ինչպես նաև վերջին հինգ տարիներին լրագրերի «Կինը և քաղաքականությունը» անվճար հավելվածի պարբերական թողարկումը՝ միտված գենդերային հավասարության գաղափարի քարոզչությանը և գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը, որոշակի ազդեցություն է գործում հանրապետության մեդիա-տարածության վրա, սակայն այդ փորձը բավարար չէ ՔԼՄ-ների զգայուն գենդերային քաղաքականություն ձևավորելու համար: Հանրապետությունում զարգացած չէ գենդերային լրագրությունը:

Երաշխավորություններ

ՀՀ Կառավարությանը.

- *ներդնել գենդերային կրթությունը միջնակարգ դպրոցում աճող սերնդի մեջ հավասարարական (էգալիտար) ժողովրդավարական մշակույթի ձևավորման և հասարակությունում կնոջ դերի ու տեղի մասին կարծատիպային պատկերացումների հաղթահարման նպատակով,*
- *Բոլոնյան համաձայնությունների երաշխավորությունների հաշվառմամբ համալսարանների համակարգում ներդնել հատուկ գենդերային դասընթացներ, դասավանդումը նպատակառողղել ուսանողների մեջ քաղաքացիական բարձր որակների և սոցիալական պատասխանատվության ձևավորմանը,*
- *աջակցել հասարակական կազմակերպությունների գենդերային հետազոտությունների կենտրոնների աշխատանքին՝ ուղղված գենդերային գիտելիքների տարածմանը և բնակչության իրազեկության բարձրացմանը,*
- *նպաստել ՔԼՄ-ներում գենդերային քաղաքականության ձևավորմանը, ներդնել ՔԼՄ-ների խրախուսման գործելակերպ գենդերային հիմնախնդիրների լուսաբանման համար, կազմակերպել քարոզարշավներ և հրապարակային ակցիաներ ՔԼՄ-ներում խտրական գործելակերպի և սեքսիստական մոտեցումների հաղթահարման ուղղությամբ,*
- *նպաստել «իշխանական կառույցներ-ՀԿ-ներ-ՔԼՄ-ներ» համագործակցության գործընկերային մոդելների կայացմանը կանանց հասարակական-քաղաքական ակտիվության քարոզչության և գենդերային կարծրատիպերի հաղթահարման նպատակով,*
- *քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համագործակցությամբ իրականացնել միջոցառումներ հասարակությունը սեռի հատկանիշով խտրականության բոլոր ձևերի դրսևորումներից պաշտպանելու ուղղությամբ,*
- *կանխել գենդերային հավասարության գաղափարը վարկաբեկող բացասական գործելակերպը, ժամանակին և ակտիվ արձագանքել սեքսիզմի դրսևորումներին:*

41. Նույն տեղում:

Հոդված 6

Կանանց առևտրի և մարմնավաճառության շահագործման բոլոր տեսակների կանխումը

Հիմնախնդիրները.

- *Թրաֆիքինգի և մարմնավաճառության հիմնական պատճառների վերացմանն ուղղված միջոցների անբավարարությունը:*
- *Թրաֆիքինգի և մարմնավաճառության զոհերի բացահայտման ցածր մակարդակը:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[42]

– Կոմիտեն մտահոգություն է հայտնում մարդկանց առևտրի ընդլայնման և այն փաստի կապակցությամբ, որ բավարար միջոցներ չեն ձեռնարկվում կանխելու մարդկանց շահագործմանը (թրաֆիքինգին) նպաստող հիմնական պատճառները: Նաև մտահոգված է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգին ենթակա կանանց պաշտպանության բացակայությամբ, սահմանափակ աջակցությամբ և զոհերի համար ապաստարանների բացակայությամբ: Կոմիտեն ափսոսանք է հայտնում կանանց և անչափահասների սեռական շահագործման նպատակով մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու վերաբերյալ սահմանափակ տվյալների կապակցությամբ և հատկապես մտահոգություն է հայտնում դրանց հետ կապված տարբեր միջոցառումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության բացակայության կապակցությամբ:

– Կոմիտեն ափսոսանք է հայտնում մարմնավաճառության ծավալների վերաբերյալ սահմանափակ տվյալների կապակցությամբ, այդ թվում մարմնավաճառությամբ զբաղվելուն դրդող սոցիալ-տնտեսական գործոնների վերացմանն ուղղված ջանքերի մասին: Կոմիտեն մտահոգությամբ նշում է նաև, որ մարմնավաճառությամբ զբաղվող կանայք դրամական տուգանքի ձևով վարչական պատասխանատվության են ենթարկվում, դրանով իսկ կրկնազոհացվում է զոհը, մինչդեռ հաճախորդի նկատմամբ ոչ մի պատիժ չի կիրառվում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[43]

Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը.

– արդյունավետ իրականացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարին ուղղված 2007-2009 թթ. գործողությունների ազգային ծրագիրը,

– արդյունավետ ապահովել քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի իրականացումը և միջոցներ ձեռնարկել մարդկանց շահագործմանը (թրաֆիքինգին) նպաստող հիմնական հանգամանքների կանխման ուղղությամբ՝ էլ ավելի սահմանափակելու այս երևույթը,

– էլ ավելի մեծացնել թե՛ գենդերային բռնության, թե՛ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի համար նախատեսված ապաստարանների ֆինանսավորումը, որը սկսվել է 2009 թվականին,

42. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 24 և 26:
43. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 25 և 27:

– ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի վերականգնման և հասարակության մեջ վերաինտեգրման համար,
– հաջորդ պարբերական զեկույցում ներկայացնել տեղեկատվություն և տվյալներ մարմնավաճառության շահագործման վերաբերյալ՝ ըստ սեռերի տարաբաժանման,
– ուժեղացնել ձեռնարկվող միջոցառումները՝ ուղղված կանանց և աղջիկներին մարմնավաճառությամբ զբաղվելուն դրդող հանգամանքների վերացմանը,
– ստեղծել մարմնավաճառությամբ զբաղվող կանանց և աղջիկների համար ծառայություններ վերականգնման ու հասարակության մեջ վերաինտեգրվելու նպատակով և աջակցելու համար այն կանանց, որոնք ցանկանում են դադարեցնել մարմնավաճառությամբ զբաղվելը,
– վերացնել մարմնավաճառությամբ զբաղվող կանանց նկատմամբ վարչական պատասխանատվությունը և զբաղվել մարմնավաճառության պահանջարկի խնդրով:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

Թրաֆիքինգի դեմ պայքարը հանրապետությունում ակտիվացել է 2002 թվականից: Հայաստանի կառավարությունը ստեղծել է միջգերատեսչական հանձնաժողով, հաստատվել է Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիքինգ) կանխման հայեցակարգը, որի համաձայն՝ ընդունվել և իրականացվել են երեք ազգային ծրագրեր.

– Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիքինգ) կանխման 2004-2006 թթ. միջոցառումների ազգային ծրագիրը,
– Հայաստանի Հանրապետությունում 2007-2009 թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը,
– Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը, որը նախատեսում է միջոցներ՝ ուղղված մարդկանց առևտրի կանխմանը, դրա համար հետապնդմանը և թրաֆիքինգի զոհերի պաշտպանությանը:

2013 թ. փետրվարին ՀՀ կառավարությունը հաստատել է «Հայաստանի Հանրապետությունում 2013-2015 թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը»:

Նպատակ ունենալով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպմանը կառուցողական մոտեցում ապահովել, որը հիմնված լինի տվյալ երևույթին և դրա հետևանքներին առնչվող բոլոր գերատեսչությունների և շահագրգիռ կողմերի համագործակցության վրա, 2007 թ. ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերի խորհուրդ՝ ՀՀ փոխվարչապետի գլխավորությամբ: Խորհրդի կազմում են ՀՀ արտաքին գործերի, արդարադատության, էկոնոմիկայի, ֆինանսների, կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարները, ինչպես նաև գլխավոր դատախազը, ՀՀ կառավարությանն առընթեր անվտանգության ազգային ծառայության տնօրենը, ոստիկանապետը:

Մարդկանց առևտրի դեպքերի հետաքննության արդյունավետության բարձրացման և դրա համար քրեական հետապնդման խստացման նպատակով 2007 թ. իրականացվել են քրեական հետապնդման մարմինների կառուցվածքային բարեփոխումներ: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում ստեղծվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերի վարչություն: ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում ստեղծվել է մասնագիտացված ստորաբաժանում, իսկ թրաֆիքինգի փաստերով քրեական գործերի հետաքննությունը կենտրոնացել է բացառապես ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում:

Հաշվետու ժամանաշրջանում հանրապետությունում միջոցներ են ձեռնարկվել մարդկանց առևտրի դեմ պայքարի քրեաիրավական հիմքերը կատարելագործելու ուղղությամբ: Վերջին չորս տարիների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքում կատարված օրենսդրական փոփոխություններն ու լրացումները, մասնավորապես՝ 2011 թ. ընդունված փոփոխությունների փաթեթը, ուղղված էին թրաֆիկինգի զոհ համարվող անձանց նույնացմանը, մարդկանց առևտրի համար պատժի միջոցների խստացմանը ազատազրկման և ունեցվածքի բռնագրավման ձևով, ինչպես նաև թրաֆիքինգի զոհերին քրեական պատասխանատվությունից ազատմանը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ արտաքին թրաֆիքինգի դեպքերում շահագործման փաստն արձանագրվում է արտասահմանում և միջազգային համագործակցությունն առանձնահատուկ կարևորություն է ստանում, Հայաստանն արդեն ճանաչել է մարդկանց առևտրի դեմ պայքարի ուղղությամբ ընդունված բոլոր միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերը և ակտիվորեն ինտեգրվում է այդ երևույթի դեմ միջազգային պայքարում:

2008 թ. ՀՀ կառավարությունը հաստատել է «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը», որը կարգավորում է պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցության համակարգը: Համաձայն ուղղորդող մեխանիզմի՝ թրաֆիքինգի զոհերի բժշկական և հոգեբանական օգնությունը, հետագա վերականգնումը և սոցիալական վերաինտեգրումը ապահովվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ, որոնք տրամադրում են այդպիսի ծառայություններ և սկսած 2009 թ.՝ մասամբ ֆինանսավորվում են պետբյուջեից:

Կարևորելով թրաֆիքինգի կանխարգելումը՝ իրավապահ մարմինները հասարակական կազմակերպությունների հետ համատեղ ակտիվացրել են այդ երևույթի մասին բնակչության իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքը՝ հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդներին: Հանրակրթական դպրոցներում հատուկ դասընթացներ են ներդրվել բարձր դասարանների սովորողների համար:

Ձեռնարկված միջոցների արդյունքում մեծացել է թրաֆիքինգի զոհերի բացահայտման աստիճանը. ըստ ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական տվյալների՝ 2010 թ. հանրապետությունում արձանագրվել է թրաֆիքինգի 13, 2011 թ.՝ 16, իսկ 2012 թ.՝ 19 դեպք: Հիմնականում դրանք սեռական և աշխատանքային թրաֆիքինգ են, զոհերին տեղափոխում են հիմնականում Էմիրություններ, Թուրքիա և Ռուսաստան: Պաշտոնական թվերը չեն արտացոլում հանրապետությունում այդ երևույթի տարածման իրական չափերը, հատկապես՝ Հայաստանից աշխատանքային արտագաղթի չափերի հաշվառմամբ, ինչը կապված է այն հանգամանքի հետ, որ զոհերը թաքցնում են հանցագործության փաստը և հաճախ հանցավոր խմբերի ճնշման տակ փոխում են իրենց ցուցմունքները:

Հայաստանի հասարակական հատվածն ակտիվ մասնակցություն է ունենում մարդկանց շահագործման և առևտրի կանխման գործում: Այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են այդ ոլորտում աշխատող «Հույս և օգնություն», «Ժողովրդավարությունն այսօր», «ԱՄՔՈՐ-Հայաստան», «Մարդը կարիքի մեջ», «Հայ օգնության միություն», «Վորլդ Վիժն-Հայաստան», «Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա» և այլ հասարակական կազմակերպություններ, զգալի աշխատանք են կատարում հիմնախնդրի մասին ողջ բնակչության և հատկապես ռիսկի խմբի մեջ մտնող հատվածի իրազեկության բարձրացման ուղղությամբ, անհրաժեշտ խորհրդատվական, տեղեկատվական, բժշկական, հոգեբանական, իրավաբանական և ֆինանսական օգնություն են ցույց տալիս թրաֆիքինգի զոհերին՝ աջակցելով հասարակության մեջ նրանց վերաինտեգրմանը:

Թրաֆիքինգի կանխարգելման գործում որոշակի ներդրում ունի Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան: «Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի թրաֆիքինգի և բռնի աշխատանքի դեմ պայքարի 2009-2012 թթ. ռազմավարության» շրջանակներում հանրապետության բոլոր մարզերում անցկացվել են տեղեկատվական-կրթական սեմինարներ պոտենցիալ աշխատանքային միգրանտների տարբեր խմբերի համար, տարածաշրջաններում հասարակական հիմունքներով ստեղծվել են իրավաբանական խորհրդատվական կենտրոններ, որոնք հագեցված են միգրանտների իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների, անօրինական աշխատանքային միգրացիայի, թրաֆիքինգի և բռնի աշխատանքի զոհ դառնալու ռիսկից խուսափելու համար անհրաժեշտ նախազգուշական միջոցների մասին նյութերով:

Նկատի ունենալով աշխատանքային միգրացիայի չափերը հանրապետությունում՝ ներկայումս լուրջ հիմնախնդիր է դիտվում թրաֆիքինգի և հարկադիր աշխատանքի զոհերի բացահայտումը: Մեծ մասամբ զոհերը չեն դիմում իրավապահ մարմիններ՝ խուսափելով դրա հետ կապված ֆորմալ բարդություններից: Այն հասարակական կազմակերպությունները, որոնք վայելում են հասարակության վստահությունը, կարող են զգալի աջակցություն ցույց տալ թրաֆիքինգի զոհերի բացահայտման և նրանց զորակցման գործում:

Տարբեր միջազգային կազմակերպությունների գնահատականներով՝ կառավարության արդյունավետ ջանքերի շնորհիվ Հայաստանին հաջողվել է հայտնվել առաջին խմբի երկրների շարքում և համարվել միջազգային թրաֆիքինգի դեմ պայքարի տեսանկյունից հաջողակ երկրներից մեկը: 2012 թ. ընթացքում Հայաստանում ավելացել են նախաքննությունները և քրեական հետապնդումները թրաֆիքինգի գործերով, մեղավորների նկատմամբ կիրառվել են խիստ միջոցներ, չեն ընդունվել վճիռներ պայմանական պատժի վերաբերյալ: Հայաստանն ընդունում է հիմնախնդրի առկայությունը, զգալի ջանքեր գործադրում՝ ուղղված թրաֆիքինգի զոհերի բացահայտման և նույնացման, նրանց աջակցության, պաշտպանության և սոցիալական վերաինտեգրման ապահովման ուղղությամբ գործողությունների կարգավորմանը: ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունը 2013 թ. օգոստոսին մշակել է «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Երկրում որոշակի աշխատանք է տարվում մարմնավաճառության հետ կապված իրավիճակի ուսումնասիրման և դրա կանխման ուղղությամբ: 2011 թ. Հայաստանում գրանցվել է 217 փողոցային մարմնավաճառ: Հիմնական տարիքային խմբերն են՝ 18-25 տարեկան (20%), 25-30 (45%), 35-45 (28%) և 45-ից բարձր (3%): Համաձայն պաշտոնական տվյալների՝ Հայաստանում

անչափահաս փողոցային մարմնավաճառներ չկան[44]: ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման պրոֆիլակտիկ բաժանմունքում 2012 թ. վերջում գրանցված էր 240 փողոցային մարմնավաճառ:

Հաշվի առնելով, որ մարմնավաճառները սեռավարակների տարածման ռիսկի խումբ են հանդիսանում, իրավապահ մարմինների ուղղորդմամբ պարբերաբար հետազոտություն են անցնում, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վարակի, և անհրաժեշտության դեպքում պետպատվերի շրջանակներում բուժում են ստանում Մաշկա-վեներական կենտրոնում, որի տվյալների համաձայն՝ հետազոտվողների 60%-ի մոտ հայտնաբերվում են վեներական հիվանդություններ: Տարեկան 1-2 մարմնավաճառի մոտ ՄԻԱՎ է ախտորոշվում:

Մարմնավաճառության համար քրեական պատասխանատվություն չի նախատեսվում, սակայն իրավապահ մարմիններին թույլատրված է որպես վարչական տույժ 20000 դրամ տուգանք գանձել, իսկ կրկնակի բերման դեպքում՝ 40000 դրամ: Մարմնավաճառների ծառայություններից օգտվողների համար տույժի միջոցներ նախատեսված չեն:

Մարմնավաճառության տարածումը կանխելու նպատակով իրավապահ մարմինները, սերտ համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ, աշխատանք են տանում իրավիճակի մասին հասարակության իրազեկությունը բարձրացնելու և հիմնախնդրի վերաբերյալ հասարակական կարծիք ձևավորելու ուղղությամբ: Հասարակական կազմակերպություններում գործող կենտրոններն իրավական, բժշկական և հոգեբանական օգնություն են տրամադրում այդ կանանց:

Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

- *ակտիվացնել թրաֆիքինգի զոհ դառնալու հնարավոր վտանգների մասին բնակչության տարբեր շերտերի, այդ թվում պոտենցիալ աշխատանքային միգրանտների իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքը՝ ներգրավելով հասարակական կազմակերպությունները, արհմիություններն ու ՁԼՄ-ները,*
- *խստացնել հանրապետության սահմաններից դուրս Հայաստանի քաղաքացիներին աշխատանքի տեղավորման հարցերով զբաղվող կազմակերպությունների գործունեության հսկողությունը,*
- *քննարկել թրաֆիքինգի, բռնության և մարմնավաճառության զոհերին աջակցություն ցույց տվող և վերականգնողական ծառայություններ մատուցող կենտրոնների ֆինանսավորումն ավելացնելու հնարավորությունը:*

Թրաֆիքինգի հարցերի խորհրդին.

– *հասարակական կազմակերպությունների փորձագետների ներգրավմամբ պարբերաբար անցկացնել թրաֆիքինգի հետ կապված իրավիճակի ուսումնասիրություններ:*

Հասարակական կազմակերպություններին.

– *ակտիվացնել թրաֆիքինգի զոհերի բացահայտմանը և հասարակության մեջ վերաինտեգրվելու ուղղությամբ նրանց աջակցության ցուցաբերմանն ուղղված աշխատանքը:*

44. ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության հատկապես կարևոր գործերի բաժնի ավագ տեսուչ Արա Սրապյանի տեղեկատվությունը // Panorama.am, 20.10.2012:

ՄԱՍ 2

Հոդված 7

Կանանց նկատմամբ խտրականության վերացումը երկրի քաղաքական և հասարակական կյանքում

Հիմնախնդիրները

- **Որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածությունը գործադիր իշխանության բոլոր ճյուղերում, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:**
- **Կանանց ցածր ներկայացվածությունն ընտրովի մարմիններում՝ Ազգային ժողովում և տեղական ինքնակառավարման մարմիններում:**
- **Կանանց սահմանափակ ազդեցությունը պետության քաղաքականության և հասարակության հասարակական-քաղաքական կյանքում կատարվող գործընթացների վրա:**
- **Հասարակական և քաղաքական կյանքին կանանց մասնակցության կարևորության պարզաբանման նպատակով գենդերային հավասարության քարոզչության և իրազեկման քարոզարշավների անցկացման ուղղությամբ հասարակայնության հետ պետական կառույցների աշխատանքի համակարգի բացակայությունը:**
- **Կանանց հասարակական կազմակերպությունների թուլությունը, նրանց կողմից կանանց իրավունքների և շահերի լոբինգի ժամանակակից տեխնոլոգիաների ոչ բավարար օգտագործումն իրենց գործունեության մեջ**:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[45]

– Ողջունելով ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները, որոնք կանանց համար նախատեսում են 15-տոկոսանոց քվոտա և յուրաքանչյուր 10 թեկնածուների թվում առնվազն մեկ կին, Կոմիտեն մտահոգված է նրանով, որ քվոտան արդյունք չունի:

– Կոմիտեն նաև մտահոգված է, որ մասնակից պետությունը ոչ միայն ժամանակավոր հատուկ միջոց չի օգտագործել որպես ընդհանուր քաղաքականություն Կոնվենցիայի ընդգրկած բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց փաստացի հավասարության ապահովումը արագացնելու կամ կանանց իրավունքների առումով, մասնավորապես՝

45. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 28:

աշխատավայրում և քաղաքականության մեջ կանանց վիճակի բարելավման նպատակով:

– Կոմիտեն նաև մտահոգված է ժամանակավոր հատուկ միջոցների հստակ ըմբռնման բացակայությամբ, ինչը սահմանված է Կոնվենցիայի 4 (1) հոդվածում և լրացուցիչ բացատրված Կոմիտեի թիվ 25 Ընդհանուր հանձնարարականում:

– Կոմիտեն շարունակում է իր մտահոգությունն արտահայտել քաղաքական և հասարակական կյանքում կանանց մասնակցության շատ ցածր մակարդակի կապակցությամբ, հատկապես՝ որոշումներ կայացնող մարմիններում, ներառյալ Ազգային ժողովը, կառավարությունը, դիվանագիտական ծառայությունը, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները և դատական բարձր պաշտոնները:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[46]

Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը.

– արագացնել ընտրական օրենսգրքում 15 - տոկոսանոց քվոտան բարձրացնելու վերաբերյալ փոփոխություններ կատարելու գործընթացը և քննարկել այն առաջարկված 20 տոկոսից էլ ավելի բարձրացնելու հնարավորությունը,

– անցկացնել իրազեկման բարձրացման ազգային քարոզարշավներ, հատկապես՝ գյուղական շրջաններում, բացատրելով քաղաքական և հասարակական կյանքին կանանց մասնակցության կարևորությունը,

– բարձրացնել կանանց ներկայացվածությունը քաղաքական և հասարակական կյանքում, այդ թվում նաև միջազգային մակարդակում,

– վերանայել ժամանակավոր միջոցների կիրառումը՝ համաձայն Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի և Կոմիտեի թիվ 23, 25 Ընդհանուր հանձնարարականների. Կանանց ներկայացվածության մակադակի բարձրացման նպատակով նման միջոցների կիրառումը պետք է ներառի շեմերի սահմանում՝ ժամանակացույցներով կամ ավելացված քվոտաներ,

– ապահովել քաղաքական կյանքում կանանց անվտանգությունը և խրախուսել հասարակական հարցերում նրանց մասնակցությունը:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

3-րդ և 4-րդ պարբերական զեկույցներից հետո անցած ժամանակաշրջանում ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը որոշակի միջոցներ են ձեռնարկել սեռի հատկանիշով խտրականության հաղթահարման և երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության ապահովման ուղղությամբ:

2010 թ. փետրվարին ՀՀ կառավարությունը հաստատել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը, իսկ 2011 թ.՝ «ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը»:

46.Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներ/ 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 29:

Վարչապետի կարգադրությամբ տարածքային իշխանության կառույցներում՝ մարզ-պետարաններում, ստեղծվել են գենդերային քաղաքականության իրականացման հանձնաժողովներ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ որպես լիազոր մարմնի, վերապահվել է Գենդերային քաղաքականության հայեցակարգի և «ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի» կատարման պատասխանատվությունը:

Ձգայուն գենդերային քաղաքականության ակտիվացման նպատակով վերջին երկու տարում հանրապետության վարչապետին առընթեր Կանանց խորհրդի նախաձեռնությամբ անցկացվել են մրցույթներ՝ «Լավագույն գյուղական համայնք գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» և «Լավագույն քաղաքային համայնք գենդերային հարցերի լուծման ուղղությամբ»:

Միաժամանակ իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած որոշ դրական շարժընթացին՝ կանանց ցածր ներկայացվածությունը երկրի քաղաքական և հասարակական ոլորտներում դեռևս հաղթահարված չէ:

Հայաստանի կանայք տղամարդկանց հետ հավասար հասարակական-քաղաքական ոլորտում մասնակցելու իրավունք ունեն, այդուհանդերձ խորապես արմատացած և մշտապես վերարտադրվող գենդերային կարծրատիպերի պատճառով տղամարդկանց հետ հավասար հնարավորությունների ապահովումը մնում է արդիական հիմնախնդիր:

Գործադիր իշխանության քաղաքական պաշտոններում[47], որոնք մասնակցում են քաղաքական որոշումների կայացմանը, 19 նախարարներից կանայք ներկայացված են միայն երկու պաշտոններում՝ ՀՀ մշակույթի նախարարի և ՀՀ սփյուռքի նախարարի[48]:

Փոխնախարարի 62 հայեցողական պաշտոններում, որոնք որոշակի ազդեցություն ունեն քաղաքական որոշումների վրա, 2013 թ. եղել է ընդամենը 7 կին, որը կազմում է 11,2%: Կանայք փոխնախարարի պաշտոն են զբաղեցնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, էկոնոմիկայի, կրթության ու գիտության, մշակույթի, ֆինանսների և քաղաքաշինության նախարարություններում:

Գործադիր իշխանության քաղաքական և հայեցողական պաշտոններում կանանց և տղամարդկանց ներկայացվածության հարաբերակցությունը բերված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1. ***ՀՀ նախարարները և փոխնախարարները 2008-2013 թթ.*** [49]

2008		2009		2010		2011		2013	
կ	տ	կ	տ	կ	տ	կ	տ	կ	տ
7%	93%	7%	93%	10%	90%	10%	90%	11%	89%

2007 թ. համեմատությամբ՝ 2013 թ., քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում կանանց թիվը 10,4%-ից աճել է մինչև 14%[50]:

Դրա հետ մեկտեղ կանայք բացակայում են ՀՀ նախագահի խորհրդականների կազմում, իսկ ՀՀ վարչապետի 6 խորհրդականներից միայն մեկն է կին, որը զբաղվում է առողջապահության

47. Համաձայն ՀՀ օրենսդրության՝ պաշտոնների աստիճանակարգումը պետական ծառայության համակարգում ենթադրում է պաշտոնների երեք կատեգորիա՝ քաղաքական, հայեցողական (պատրոնաժային) և պետական ծառայողներ:
48. 2008 թ. տվյալներով եղել է մեկ կին:
49. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2012, էջ 150-151: 2013թ. տվյալները հաշվարկված են մեր կողմից:
50. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2012, էջ 156:

հարցերով: Տարածքային իշխանության կառույցներում՝ մարզպետարաններում, մեկ կին է եղել 10 մարզպետների թվում[51]: 2013 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ 22-ից երկու կին են զբաղեցնում մարզպետի տեղակալի պաշտոնը և 10 մարզպետարաններից միայն երկուսում են աշխատակազմի ղեկավարի պաշտոնը կանայք զբաղեցնում:

2012 թ. ՀՀ նախագահի աշխատակազմում կանայք կազմել են 36,6%, իսկ կառավարության աշխատակազմում՝ 42,2%[52], սակայն, որպես կանոն, նրանք զբաղեցնում են պաշտոններ, որոնք ազդեցություն չունեն որոշումների կայացման վրա, այդ թվում՝ գենդերային հիմնախնդիրներին առնչվող:

Այսպիսով, գործադիր իշխանության վերին մակարդակներում, որոնք որոշ չափով մասնակցում են որոշումների կայացման գործընթացին, գենդերային անհավասարակշռությունը դեռևս պահպանվում է: Կանայք մեծամասնություն են կազմում գործադիր իշխանության ստորին մակարդակներում, ցածր վարձատրվող պետծառայողների թվում:

Ցածր է մնում կանանց ներկայացվածությունը օրենսդիր իշխանությունում: ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններում մասնակցել են 8 քաղաքական կուսակցություն և մեկ ընտրական դաշինք, որը միավորում էր 10 ընդդիմադիր կուսակցություններ:

Հայաստանի 2002-2007 թթ. համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականներից հետո ՀՀ Ազգային ժողովի հինգերորդ գումարման 2012 թ. ընտրությունների նախօրեին ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ են կատարվել, և գենդերային քվոտան համամասնական ընտրակարգով 15%-ից բարձրացվել է մինչև 20%, ինչպես նաև ամրագրվել է, որ քաղաքական կուսակցությունների ցուցակներում յուրաքանչյուր հնգյակում՝ սկսած 2-րդ համարից, որևէ սեռը չի կարող կազմել ավելի, քան 80%: Չնայած բոլոր կուսակցական ցուցակներում, համաձայն այդ փոփոխությունների, կանանց ներկայացվածությունը կազմել է 20 և ավելի տոկոս, սակայն ընտրությունների արդյունքում խորհրդարանում ներկայացված է ընդամենը 14 կին կամ 10,7%-ը: Օրենսդիր իշխանությունում կանանց և տղամարդկանց ներկայացվածության շարժընթացը բերված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2 . Օրենսդիր իշխանությունում կանանց և տղամարդկանց ներկայացվածության շարժընթացը
1999-2012 թթ.

Տարին	Կանայք	Տղամարդիկ
1999	3,1%	96,9%
2003	5,3%	94,7%
2007	9.1%	90,9%
2012	10,7%	89,3%

Հայաստանի խորհրդարանի վերջին երկու ընտրությունների համեմատական վերլուծությունը բացահայտել է, որ 2007 թ., երբ ՀՀ ընտրական օրենսգրքում քաղաքական կուսակցությունների համար նախատեսվել է 15%-անոց քվոտա, խորհրդարան է մտել 12 կին[53],

51. Լիդա Նանյանը Շիրակի մարզպետ է եղել 2007-2010 թթ., պաշտոնից ազատվել է իր դիմումի համաձայն:
52. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2012, էջ 156:
53. Ընտրված կանանցից մեկի ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ նշանակվելուց հետո խորհրդարանում մնաց 11 կին (8,4%):

որը կազմել է պատգամավորների ընդհանուր թվի 9,2%-ը, իսկ 2012 թ. ընտրություններում 20%-անոց գենդերային քվոտայի պայմաններում խորհրդարան անցավ 14 կին՝ 10,7%, այսինքն՝ կանանց թիվը, նախորդ ընտրությունների համեմատ, ավելացել է ընդամենը 2-ով կամ մոտ 2%-ով:

Երկրի խորհրդարանում կանանց ցածր ներկայացվածության պատճառներից մեկը հետընտրական շրջանում ինքնաբացարկների գործելակերպի արմատավորումն է: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով՝ 2012 թ. ընտրություններից հետո ինքնաբացարկի դիմում է ներկայացրել պատգամավորության 102 թեկնածու, որոնցից 26-ը կին են, ինչը կազմում է բոլոր ինքնաբացարկների 25%-ը, նրանցից երեքը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ցուցակի անցողիկ տեղերն էին զբաղեցնում:

Ընտրական գործընթացների վերլուծությունը բացահայտել է կանանց և տղամարդկանց անհավասար հնարավորությունները խորհրդարանական մեծամասնական ընտրակարգով ընտրություններում: 2007 թ. մեծամասնական ընտրակարգով որևէ կին չի ընտրվել: 2012 թ. ընտրություններում նկատվեց մեծամասնական ընտրակարգով ընտրություններին կանանց մասնակցության աճ: Սակայն մեծամասնական ընտրակարգով առաջադրված 11 կանանցից ընտրվեցին միայն երկուսը, որոնց թեկնածություններն աջակցել են բիզնեսի և առաջատար քաղաքական կուսակցության ներկայացուցիչները: Իրականում բոլոր ընտրատարածքներում կանայք բավականին բարձր վարկանիշ են ունեցել: Կանանց մեծ մասն իր ընտրատարածքում քվեարկության արդյունքներով զբաղեցրել է երկրորդ կամ երրորդ տեղը: Եվ գրեթե ամենուր կանայք պարտություն են կրել խոշոր բիզնեսի ներկայացուցիչներից, որոնց նյութական և կազմակերպչական հնարավորությունները զգալիորեն ավելի մեծ են:

Կանանց քաղաքական մասնակցության ակտիվացումը զգալի չափով խոչընդոտում է քաղաքական կուսակցությունների կողմից կին քաղաքական լիդերների ձևավորման և թե՛ կուսակցություններում, թե՛ բոլոր մակարդակների ազգային ընտրություններում նրանց բարձր պաշտոնների առաջմղման համակարգի բացակայությունը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած առաջատար քաղաքական կուսակցություններում կանայք կազմում են միջինը 35-40%, համաչափ ներկայացված չեն կուսակցությունների ղեկավարության կազմում և կուսակցական որոշումների կայացման մակարդակում, ինչի պատճառով ազդեցություն չեն գործում կուսակցությունների քաղաքականության և ընտրարշավների նախապատրաստման ու անցկացման վրա: Կանանց մեծ թիվը կուսակցություններում չի վկայում նրանց բարձր կարգավիճակի ու քաղաքական ակտիվության մասին և ներկուսակցական ժողովրդավարության վրա նրանց ազդեցության երաշխիք չէ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ կուսակցությունների ղեկավար մարմիններ նպատակամետ աշխատանք չեն իրականացնում հատուկ ներկուսակցական միջոցների՝ որպես գենդերային հավասարության հասնելու գործիքի և ներկուսակցական ժողովրդավարության ձևավորման նախադրյալի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ կուսակցությունների անդամների իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ:

Կուսակցությունների քաղաքականությունը քաղաքական գործելակերպում գենդերային մոտեցումների ներդրման և գենդերային հավասարության իրական արդյունքների հասնելու տեսանկյունից մնում է իմիտացիոն: Քաղաքական կուսակցությունների մեծամասնության ծրագրերում չկան դրույթներ՝ ուղղված գենդերային հավասարության առաջմղմանը, կանանց քաղաքական մասնակցությանը, իշխանության մարմիններում և առհասարակ որոշումների

կայացման մակարդակներում նրանց առաջադրման զարգացմանը: Գենդերային խնդիրները չեն ներառվել կուսակցությունների բարոյա-արժեքային համակարգում, կուսակցական ավանդույթներում և քաղաքական իդեալներում: Կանանց առաջմղմանը չի նպաստում նաև կուսակցությունների առաջնորդների քաղաքական վարքագիծը, գենդերային դիսկուրսը հազվադեպ է հնչում նրանց հրապարակային ելույթներում:

Ձեռնարկվող կազմակերպական միջոցները, մասնավորապես՝ կանանց խորհուրդների կամ այլ խմբերի ստեղծումը կուսակցություններում մասնակի բնույթ ունի և չի նպաստում կուսակցություններում կանանց քաղաքական ազդեցության ուժեղացմանը:

Քաղաքական կուսակցությունները, ինչպես նաև բոլոր մակարդակների իշխանական կառույցները (առաջին հերթին՝ կրթության համակարգի, զանգվածային լրատվության միջոցների) ***չեն իրականացնում Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները հասարակական գիտակցության մեջ կանանց հասարակական-քաղաքական մասնակցության դերի և նշանակության մասին դրական պատկերացումների ձևավորման և գենդերային կարծրատիպերի հաղթահարման նպատակով տեղեկատվական-բացատրական աշխատանքի անցկացման անհրաժեշտության վերաբերյալ:***

Ժողովրդավարական կառավարման կարևոր համակարգ է տեղական ինքնակառավարումը, սակայն Հայաստանում քաղաքային և գյուղական համայնքների մակարդակում ժողովրդավարություն դեռևս չի ձևավորվել: Տեղական մակարդակում ժողովրդավարության հետ կապված բազում խնդիրների շարքում մնում է գենդերային անհավասարակշռությունը տեղական իշխանությունում:

Տեղական ինքնակառավարման մարմինների 2012 թ. սեպտեմբերի 9-ի և 23-ի ընտրությունները բացահայտեցին կանանց ցածր մասնակցությունը: 638 գյուղական համայնքների ղեկավարի 1237 թեկնածուների թվում ընդամենը 43-ն էին կին, որ կազմել է 3,5%: Երկրի 48 քաղաքների քաղաքապետների ընտրություններում փաստացի չի եղել որևէ կնոջ թեկնածություն:

2012 թ. ընտրությունների արդյունքում կանայք կազմել են ավագանիների անդամների 8,6%-ը: Նախորդ՝ 2008 թ. ընտրությունների համեմատ՝ կանանց ներկայացվածությունը ավագանիների կազմում բարձրացել է ընդամենը 2,4%-ով: Նախորդ ընտրությունների համեմատ՝ ***նվազել է կանանց ներկայացվածությունը գյուղական համայնքների ղեկավարների մակարդակում:*** Կանայք ղեկավարում են 866 գյուղական համայնքներից միայն 20-ը կամ ընդամենը 2%-ը: Հանրապետության 48 քաղաքապետների ընտրովի պաշտոնում կին չկա:

Որոշ չափով բարձրացել է կանանց ներկայացվածությունը երկրի մայրաքաղաքի՝ Երևանի ավագանու կազմում: Եթե 2008 թ. Երևան քաղաքի ավագանու ընտրությունների արդյունքում 52 անդամներից 5-ն էին կին (9,6%), ապա ՀՀ ընտրական օրենսգրքում 20-տոկոսանոց քվոտա ամրագրելուց հետո 2012 թ. ընտրությունների արդյունքում Երևան քաղաքի ավագանու 65 անդամներից 10-ն են կին, որը կազմել է 15%:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին կանանց մասնակցության ակտիվացումը կարող է նպաստել նրանց քաղաքական փորձի ձեռքբերմանը, ինչը կանխորոշում է կանանց հետագա քաղաքական կարիերան, ինչպես նաև խորհրդարանում և ընդհանուր առմամբ իշխանական կառույցների որոշումների կայացման մակարդակում նրանց ներկայացվածության աճը:

Հայաստանի դատական իշխանությունում գենդերային ներկայացվածության շարժընթացը բացահայտում է կանանց թվի որոշակի աճ. կանայք կազմում են 21% դատավորների և 39% փաստաբանների թվում:

Աղյուսակ 3

Գենդերային ներկայացվածությունը դատական մարմիններում (2009-2011 թթ.)

	2009		2010		2011	
Մարդ	կ	տ	կ	տ	կ	տ
Դատավորներ	46	170	45	166	46	169
Փաստաբաններ	219	762	380	638	440	689
Տոկոսներով						
Դատավորներ	21	79	21	79	21	79
Փաստաբաններ	22	78	37	63	39	61

Երկրի կանայք ակտիվ մասնակցություն ունեն ոչ կառավարական հատվածում: Չնայած Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորումը դանդաղ է ընթանում, կանանց հասարակական կազմակերպությունները կարևոր դեր են խաղում քաղաքացիական հասարակության ինստիտուտների շարքում:

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված իրավաբանական անձանց թիվը առ 01.05.2012 թ. կազմում էր 3900 (2007 թ.՝ 2726):

2012 թ. կանանց կազմակերպությունները հանրապետությունում կազմել են բոլոր հասարակական կազմակերպությունների 6,5%-ը (2007 թ.՝ 2,8%-ը): Կանանց հասարակական կազմակերպությունների թիվը նույն ժամանակահատվածում 76-ից աճել է մինչև 250, այսինքն՝ ավելի քան 3 անգամ: Սակայն կանանց հասարակական շարժման անհամախմբվածության պատճառով հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա կանանց կազմակերպությունների ազդեցության աճ չի նկատվում:

Անցկացված հետազոտությունների տվյալներով՝ հասարակական հատվածի, այդ թվում կանանց հասարակական կազմակերպությունների զարգացման և հզորացման խոչընդոտներն են պետական քաղաքականությունը, որը չի նպաստում քաղաքացիական հասարակության ինստիտուտների ուժեղացմանը, մրցակցությունը լիդերության համար և կազմակերպությունների ղեկավարների նվազ արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների գործելակերպում կառավարման ժողովրդավարական ոճի դանդաղ ներդրումը, պետության և քաղաքացիական հասարակության միջև ակտիվ երկխոսության բացակայությունը:

2008 թ. ՀՀ նախագահին կից ստեղծված Հանրային խորհրդի գործունեությունը պատշաճ չափով նպատակաուղղված չէ պետության քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների շահերի ներկայացմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստող ավանդույթների ձևավորմանը, հանրապետության քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունների իրականացման աջակցմանը:

Հանրային խորհուրդը դեռևս չի դարձել քաղաքացիների սահմանադրական իրավունքների պաշտպանության ինստիտուտ և բնակչության բոլոր խմբերի, այդ թվում կանանց համար հավասար իրավունքների նվաճման գործիք:

Դրա վկայությունն են Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները Արևելյան գործընկերությանն ասոցացման մասին պայմանագրի ստորագրման նախապատրաստման փուլում և կապված Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) անդամակցելու հետ, երբ 2013 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին որոշ ուժեր քարոզարշավ ծավալեցին՝ ուղղված 2013 թ. մայիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և 2013 թ. հունիսի 11-ին նախագահի կողմից ստորագրված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի վարկաբեկմանը: Հանրային խորհուրդը ոչ միայն ժամանակին չարձագանքեց գենդերային հավասարության մասին օրենքի դեմ ուղղված հարձակումներին, այլև չպաշտպանեց Հանրային խորհրդի գենդերային հարցերի և ժողովրդագրության հանձնաժողովի հայտարարությունը, որում գնահատական էր տրված գենդերային եզրույթների կանխամտածված խեղաթյուրման միջոցով հասարակական կարծիքը շփոթության մեջ գցող և օրենքը որպես ազգային ընտանեկան արժեքներին դեմ փաստաթուղթ բնութագրող մարդկանց խմբի գործունեությանը:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի դեմ ուղղված քարոզարշավը յուրատեսակ մոնիթորինգ դարձավ նաև գենդերյաին հավասարության քարոզչության ուղղությամբ իշխանության կառույցների քաղաքականության գնահատման համար:

Հակագենդերային քարոզարշավը վեր հանեց բոլոր մակարդակների իշխանության կառույցների ոչ բավարար աշխատանքը ՀՀ կառավարության հաստատած Գենդերային քաղաքականության հայեցակարգի քարոզչության և իրականացման, բնակչության լայն շերտերի շրջանում գենդերի՝ որպես սոցիալ-մշակութային հարացույցի և գենդերային հավասարության գաղափարների առաջմղման ուղղությամբ, ինչն էլ հնարավորություն ստեղծեց ապակառուցողական տարրերի համար կանխամտածված շահարկելու գենդերային եզրույթները, շփոթության մատնելու հասարակությունը: Բացահայտվեցին նաև լուրջ բացթողումներ ՋԼՄ-ների, առաջին հերթին՝ պաշտոնական տպագիր ՋԼՄ-ների և հանրային հեռուստատեսության աշխատանքում, որոնք պատրաստ չգտնվեցին հակազդելու օրենքի մասին ակներև կեղծ տեղեկատվությանը:

Քաղաքականության գենդերային բաղադրիչի և երկրի հասարակական և քաղաքական կյանքին կանանց մասնակցության կարևորության պարզաբանման նպատակով կառավարության և քաղաքական կուսակցությունների տեղեկատվական-քարոզչական աշխատանքի բացակայությունը հանգեցրեց գենդերային իրավահավասարության հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների ղեկավարների և ակտիվիստների հետապնդմանը:

Օրենքի դեմ տարվող քարոզարշավը ցույց տվեց նաև, որ երկրի քաղաքական և հասարակական կյանքում կանանց նկատմամբ խտրականությունը չի վերացել: Ի պաշտպանություն օրենքի հանդես եկան Հայաստանի որոշ իրավապաշտպան կազմակերպություններ, սակայն քաղաքացիական հասարակության շատ ինստիտուտներ ոչ միայն չարձագանքեցին և հանդես չեկան կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների մասին օրենքի օգտին, այլև իրենց պասիվությամբ ակամա նպաստեցին գենդերային հավասարության համար հասարակական շարժման ակտիվիստների դեմ ուղղված արշավի ծավալմանը:

Գենդերային հավասարության նվաճմանը, կառավարման համակարգում կանանց դեպի քաղաքական որոշումների կայացման մակարդակ առաջմղմանն ուղղված քաղաքական գործելակերպի, հասարակական գիտակցության մեջ երկրի հասարակական-քաղաքական

կյանքին կանանց մասնակցության հիմնախնդրի ըմբռնման առկա իրավիճակի ուսումնասիրությունը և գնահատականը հնարավորություն են տալիս բացահայտելու հետևյալ պատճառները.

- *գենդերային հավասարության ապահովման ազգային մեխանիզմի բացակայությունը,*
- *կանանց առաջմղման և պետական կառավարման ոլորտում որոշումների կայացման մակարդակում գենդերային անհավասարակշռության հաղթահարման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվող միջոցների իմիտացիոն բնույթը,*
- *հասարակական և քաղաքական կյանքին կանանց մասնակցության կարևորության և անհրաժեշտության պարզաբանման նպատակով տեղեկատվական-քարոզչական արշավների բացակայությունը,*
- *հասարակության մեջ հայրիշխանական պատկերացումների, կանանց քաղաքական մասնակցությունը չխրախուսող գենդերային կարծրատիպերի գերակշռությունը,*
- *ընտրական գործընթացների անկատարությունը, քաղաքական պայքարի կոշտ բնույթը և ընտրությունների առևտրայնացման բարձր աստիճանը,*
- *կուսակցական և իշխանական կառույցներում որոշումների կայացման մակարդակում, կանանց ներկայացվածության բարձրացմանն ուղղված միջոցների մշակման անհրաժեշտության թերագնահատումը խորհրդարանական քաղաքական կուսակցությունների կողմից,*
- *ժողովրդավարական ինստիտուտների՝ հասարակական, նախ և առաջ կանանց կազմակերպությունների թուլությունը, կանանց հասարակական շարժման անհամախմբվածությունը,*
- *կանանց առաջմղման գործում կուսակցությունների շահագրգռության ձևավորման համար իրավական մեխանիզմների բացակայությունը,*
- *մասկուլինային քաղաքական մշակույթի արժեքների գերիշխանությունը , հասարակության քաղաքական կյանքին կանանց մասնակցության ոլորտների սահմանափակության վերաբերյալ կարծրատիպային պատկերացումների արմատավորումը ՋԼՄ-ներում,*
- *հասարակության և իրենց՝ կանանց կողմից խտրական գործելակերպը չգիտակցելը:*

Երաշխավորություններ

ՀՀ Ազգային ժողովին.

- *իրականացնել լայն բացատրական քարոզարշավ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի օգտին, նախատեսել օրենքում հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովման մեխանիզմներ,*
- *քննարկել ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու և համամասնական ընտրակարգով քաղաքական կուսակցությունների ցուցակներում կանանց ներկայացվածության քվոտան մինչև 30% բարձրացնելու հարցը, ինչպես նաև օրենքում ամրագրել դրույթ այն մասին, որ պատգամավորական մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում ազատված տեղը պետք է զբաղեցնի հաջորդ կինը կուսակցական ցուցակում:*

ՀՀ կառավարությանը.

- *ապահովել գենդերային հավասարության նվաճման և քաղաքական գործունեության ոլորտում կանանց ներկայացվածության ընդլայնման ուղղությամբ պետության միջազգային պարտավորությունների կատարումը՝ ողջ ծավալով,*
- *ստեղծել գենդերային քաղաքականության և գենդերային հավասարության ապահովման ազգային մեխանիզմ Գործողությունների պեկինյան ծրագրի հանձնարարականներին և ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 6 Ընդհանուր հանձնարարականին, Եվրոպական Միության և Եվրոպայի խորհրդի երաշխավորություններին համապատասխան,*
- *միջոցներ ձեռնարկել պետական գենդերային քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, իրականացնել նախարարությունների և տարածքային իշխանության մարմինների կողմից Գենդերային քաղաքականության հայեցակարգի կատարման գործուն վերահսկողություն,*
- *իրականացնել լայնածավալ քարոզարշավ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի և երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում գենդերապես հավասարակշռված մասնակցության կարևորության մասին բնակչության իրազեկության բարձրացման ուղղությամբ,*
- *ձեռնարկել միջոցներ կառավարման համակարգում որոշումների կայացման մակարդակում, կանանց ներկայացվածության ընդլայնման ուղղությամբ,*
- *քաղաքական կուսակցությունների գործունեության ֆինանսավորումը կատարել՝ հաշվի առնելով նրանց կողմից իրականացվող գենդերային քաղաքականությունը և գործելակերպում կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը նպաստող գենդերային բաղադրիչի ինտեգրման աստիճանը,*
- *ձեռնարկել միջոցներ դպրոցական և բուհական կրթության համակարգում գենդերային դասընթացների ներդրումն ընդլայնելու ուղղությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով իրավաբանության և լրագրության մասնագիտությունների ուսանողներին հասարակության գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ խորը գիտելիքների հաղորդմանը և քաղաքական գործընթացներին կանանց մասնակցության անհրաժեշտության ըմբռնման ձևավորմանը,*
- *իրականացնել բնակչության գենդերային լուսավորությանն ուղղված ծրագրեր, այդ թվում օգտագործելով հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների հնարավորությունները,*
- *մշակել և պետական ծառայողների վերապատրաստման համակարգում ներդնել արդիականացված մոդուլներ և հատուկ կրթական ծրագրեր՝ ուղղված գենդերային վերլուծության և կառավարության գործելակերպում գենդերային բաղադրիչի ինտեգրման հմտությունների ձևավորմանը,*
- *խրախուսել ԶԼՄ-ներում գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը և հասարակական գիտակցության մեջ բոլոր մակարդակների իշխանական կառույցներում գենդերապես հավասարակշռված ներկայացվածության հասնելու կարևորության և անհրաժեշտության ըմբռնման ձևավորմանն ուղղված PR-արշավների անցկացումը:*

Քաղաքական կուսակցություններին.

- *մշակել և իրականացնել համալիր միջոցառումներ կուսակցությունների ծրագրերում և քաղաքական գործելակերպում գենդերային բաղադրիչի ինտեգրման ուղղությամբ, իրագործել կուսակցությունների անդամների նպատակասլաց և արդյունավետ գենդերային լուսավորություն,*
- *իրականացնել համալիր միջոցառումներ կին առաջնորդների պատրաստման ուղղությամբ, մշակել կուսակցությունների ղեկավար մարմիններում կանանց առաջմղման և ներկուսակցական ժողովրդավարության ձևավորմանը նրանց մասնակցության ակտիվացման մեխանիզմներ,*
- *կատարելագործել կանանց քաղաքական լիդերության առաջմղման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և իշխանության համակարգում որոշումների կայացման մակարդակում, կանանց ներկայացվածության ընդլայնման հարցերում քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների և կանանց հասարակական կազմակերպությունների համագործակցության ձևերը:*

Հասարակական կազմակերպություններին.

- *գործելակերպում ներդնել հասարակական-քաղաքական գործունեությանը կանանց նախապատրաստման արդյունավետ ձևեր, ներառյալ՝ քաղաքական-իրավական և տնտեսական գիտելիքների մակարդակի բարձրացումը, ընտրական քարոզարշավների կազմակերպման և ԶԼՄ-ների հետ համագործակցության տեխնոլոգիաների ուսուցումը,*
- *լայնորեն կիրառել մայրաքաղաքում և հանրապետության մարզերում Կանանց լիդերության դպրոցների կազմակերպումը կին ակտիվիստներին հասարակական-քաղաքական գործունեության կազմակերպման ժամանակակից տեխնոլոգիաներն ուսուցանելու նպատակով, անցկացնել լիդերության հոգեբանական թրենինգներ,*
- *ավելի ակտիվ համագործակցել քաղաքական կուսակցությունների հետ գենդերային հավասարության առաջմղման հարցերում, ընդգրկել կանանց լիդերության դպրոցներում կուսակցությունների կանանց խորհուրդների անդամներին և ակտիվիստներին:*

Հոդված 9.

Քաղաքացիության ձեռքբերման, փոփոխման կամ պահպանման կապակցությամբ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները

Հիմնախնդիրը

Կոնվենցիայի համապատասխան դրույթների մասին բնակչության լայն խավերի ցածր իրազեկությունը:

Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներում տվյալ հոդվածին անդրադարձ չի արվել:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

ՀՀ Սահմանադրությունում (2005 թ.) և ՀՀ «Քաղաքացիության մասին» օրենքում (1995 թ.) ամրագրված են կոնվենցիայի հիմնական դրույթները քաղաքացիության ձեռքբերման, փոփոխման կամ պահպանման կապակցությամբ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների վերաբերյալ: ՀՀ «Քաղաքացիության մասին» օրենքում, կոնվենցիայի պահանջներին համապատասխան, սահմանվել է նաև ***երեխայի քաղաքացիությունը***՝ ծնողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ երեխայի որդեգրման դեպքերում: Հասարակությունը թույլ է տեղեկացված օտարերկրացու հետ ամուսնության դեպքում քաղաքացիության պահպանման կամ փոփոխման, ինչպես նաև երեխաների քաղաքացիության առնչությամբ տղամարդկանց ու կանանց հավասար իրավունքների մասին: Չկա որևէ դատական գործ քաղաքացիության ձեռքբերման, փոփոխման կամ պահպանման կապակցությամբ կանանց և տղամարդկանց իրավահավասարության խախտման վերաբերյալ:

Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը և ՀՀ նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովին

- *մշակել միջոցառումներ պետական պաշտոնատար անձանց և քաղաքացիական ծառայողների շրջանում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի համապատասխան դրույթների հետ կապված գիտելիքների ձեռքբերման և հարստացման ուղղությամբ,*
- *աջակցել հասարակական կազմակերպությունների գործունեությանը՝ բարձրացնելու կանանց իրավական գիտելիքների մակարդակը քաղաքացիության հետ կապված բոլոր հարցերում տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների վերաբերյալ,*
- *լայնորեն օգտագործել զանգվածային լրատվամիջոցների հնարավորությունները քաղաքացիության ձեռքբերման, փոփոխման կամ պահպանման կապակցությամբ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների լուսաբանման և բնակչության լայն խավերի իրազեկության բարձրացման ուղղությամբ:*

ՄԱՍ 3

Հոդված 10

Խտրականության վերացումը կրթության ոլորտում

Հիմնախնդիրները.

- **Կրթության ոլորտում զգայուն գենդերային քաղաքականության բացակայությունը:**
- **Կրթության համակարգում աղջիկների ընդգրկվածության նվազման որոշակի վտանգի առկայությունը:**
- **Բուհերում գենդերային խտրազատումը՝ ըստ մասնագիտությունների:**
- **Կանանց թույլ ազդեցությունը կրթական քաղաքականության մշակման վրա:**

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[54]

– Նշելով, որ տարրական և միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է, Կոմիտեն մտահոգված է, որ մի շարք գործոնների, այդ թվում աղքատության զգալի մակարդակի և կանանց դերի ու պարտականությունների վերաբերյալ սոցիալական կարծրատիպերի պատճառով հարաբերականորեն բարձր է դպրոցից դուրս մնացածների թիվը, հատկապես՝ ազգային փոքրամասնություններին պատկանող գյուղաբնակ աղջիկների շրջանում:

– Կոմիտեն նշում է, որ կանայք թերի են ներկայացված բարձրագույն ուսումնական հաստատությունների դոկտորական մակարդակում:

– Կոմիտեն նաև այն կապակցությամբ է անհանգստացած, որ կանայք շարունակում են կենտրոնանալ ավանդական կանացի առարկաների ուսումնասիրման վրա:

– Կոմիտեն նաև մտահոգություն է արտահայտում կրթության ոլորտում կանանց՝ որպես պրոֆեսորների, ավագ դասախոսների ու հետազոտողների ցածր թվաքանակի առնչությամբ, ինչպես նաև գիտական հաստատություններում և ղեկավար պաշտոններում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[55]

Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանը.

– վերացնել այն խոչընդոտները, որոնք խանգարում են աղջիկներին շարունակելու իրենց կրթությունը,

54. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 30:
55. Նույն տեղում, կետ 31:

– անցկացնել սեմինարներ և իրազեկման բարձրացման միջոցառումներ, որպեսզի օգնեն ծնողներին գիտակցելու աղջիկների համար կրթության կարևորությունը, և հատուկ միջոցներ ձեռնարկել, որոնք հնարավորություն կտան կրթությունը կիսատ թողած կանանց ու աղջիկներին վերադառնալու կրթական համակարգ իրենց տարիքին համապատասխան ուսումնական պայմաններով,

– շարունակել իրականացնել բոլոր դասագրքերի վերանայումը, որպեսզի վերացվեն գենդերային դերեր պարունակող կարծրատիպերը, և այնպիսի ծրագրեր իրականացնել, որոնք նպաստեն աղջիկների կողմից ոչ ավանդական առարկաների ընտրությանը,

– որդեգրել քաղաքականություն, որը թույլ կտա մեծացնել կանանց՝ որպես հետազոտողների թիվը դոկտորանտուրայում, գիտական հաստատությունների բարձր աստիճաններում, հատկապես՝ գիտական ոլորտում և կրթական համակարգի բոլոր մակարդակների որոշումներ կայացնող պաշտոններում:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

Կրթության համակարգի բարեփոխումների արդյունքում դպրոցը դարձել է եռաստիճան՝ ուսուցման 12 տարի տևողությամբ. տարրական կրթություն (1-4 դասարաններ), հիմնական ընդհանուր կրթություն (մինչև 9-րդ դասարանը ներառյալ), ավագ դպրոց (10-12 դասարաններ): Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Դպրոցահասակ երեխաների ճնշող մեծամասնությունը՝ անկախ սեռից, հնարավորություն ունի իրականացնելու հիմնական ընդհանուր կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը: 2012/2013 ուսումնական տարում պետական և ոչ պետական հանրակրթական դպրոցներում աղջիկները կազմում էին սովորողների ընդհանուր թվի 48,0%-ը[56]: Տարրական և հիմնական դպրոցում աղջիկների թիվը կազմում էր 47,0%, ավագ դպրոցում՝ 52%[57]: Գենդերային հավասարության ցուցանիշը[58] 2012 թ. կազմել է 1,06, ընդ որում տարրական դպրոցում՝ 1,02, հիմնական դպրոցում՝ 1,02, ավագ դպրոցում՝ 1,21[59]:

Սակայն կրթության համակարգի օպտիմալացման և հանրակրթության եռաստիճան համակարգի անցման պայմաններում առաջացել է ավագ դպրոցից աղջիկների դուրս մնալու վտանգ՝ կապված այն հանգամանքի հետ, որ ոչ բոլոր բնակավայրերում են առկա այդ աստիճանի դպրոցներ:

Ավագ դպրոցի պարտադիր չլինելու, գյուղական բնակավայրերում ավագ դպրոցներին կից գիշերօթիկների և գյուղերի միջև կանոնավոր տրանսպորտային ապահովման բացակայության, բնակչության սոցիալական խորը շերտավորման և աղքատության բարձր մակարդակի, դեռահասներին գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավման պայմաններում մաղումներն ավագ դպրոցից աճելու միտում կունենան:

56. Հանրակրթական հաստատությունների գործունեություն //Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2012 թվականին և դինամիկ շարքեր, վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2013 թ., http://www.armstat.am/file/article/soc_12_3-4.pdf , էջ 29:
57. Նույն տեղում, էջ 33:
58. Գենդերային հավասարության ցուցանիշն առաջին անգամ է ներառվել վիճակագրական ժողովածուի մեջ և ցույց է տալիս տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը:
59. Նույն տեղում:

ՀՀ կառավարությունը հիմնախնդիրը լուծելու և գյուղաբնակ երեխաներին լրիվ ընդհանուր կրթություն ստանալու հնարավորություն տալու նպատակով որոշում է ընդունել գյուղերում ժամանակավորապես պահպանել միջնակարգ հանրակրթական դպրոցները, որի արդյունքում աղջիկների մաղումը բարձր դասարաններից որոշ չափով կրճատվել է՝ կազմելով դպրոցից դուրս մնացած երեխաների 34%-ը, այդուհանդերձ հեռանկարում գյուղաբնակ երեխաների համար լրիվ ընդհանուր կրթություն ստանալու հնարավորության ապահովման խնդիրը լիարժեք լուծում չի ստացել:

2012 թ. Ազգային վիճակագրական ծառայության կողմից անցկացված ուսումնասիրության արդյունքները բացահայտել են, որ աղջիկները կազմել են 41% այն երեխաների թվում, որոնք չեն ավարտել ավագ դպրոցը, որովհետև ծնողներն արգելել են շարունակել կրթությունը (*ընդ որում ուսումնասիրությամբ չեն պարզվել այդ արգելման պատճառները*), 33%-ը դուրս է մնացել դպրոցից ծանր սոցիալ-տնտեսական պայմանների և 35%-ը՝ ուսումը շարունակելու ցանկության բացակայության պատճառով[60]: Դպրոցում ուսումը շարունակած և հետագայում այն ավարտած երեխաների, այդ թվում աղջիկների մասնաբաժնի բացահայտման ուղղությամբ ուսումնասիրություններ չեն անցկացվել:

Հանրակրթական դպրոցում ուսումնական ծրագրերը և կրթության բովանդակությունը աղջիկների և տղաների համար նույնն են: Դպրոցական կրթության ծրագրերում գենդերային բաղադրիչը բացակայում է, գործելակերպ չի դարձել և չի իրականացվում դպրոցական ծրագրերի, դասագրքերի և մեթոդական ձեռնարկների գենդերային վերլուծությունը:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը չի կատարել Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի հանձնարարականը, այն է՝ «շարունակել իրականացնել բոլոր դասագրքերի վերանայումը, որպեսզի վերացվեն գենդերային դերեր պարունակող կարծրատիպերը, և այնպիսի ծրագրեր իրականացնել, որոնք կնպաստեն աղջիկների կողմից ոչ ավանդական առարկաների ընտրությանը»:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը չի շարունակել 2005-2008 թթ. ընթացքում կուտակած փորձը, երբ միջին հանրակրթական և բարձրագույն դպրոցում գենդերային կրթության ինստիտուցիոնալացման ուղղությամբ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենտրոնի և նախարարության համատեղ աշխատանքի արդյունքում մշակվել են միջին հանրակրթական դպրոցի բարձր դասարաններում գենդերային գիտելիքների դասավանդման ծրագիր, դասագիրք և մեթոդական ձեռնարկ, ստեղծվել են մի շարք դասընթացների պետական կրթական չափորոշիչներ, ծրագրեր և ուսումնական ձեռնարկներ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, վերապատրաստվել են դասատուներ ինչպես բարձրագույն, այնպես էլ հանրակրթական դպրոցի համար, կուտակվել է գենդերային կրթության ներդրման զգալի փորձ:

Դպրոցներում դաստիարակչական աշխատանք չի տարվում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ, աղջիկները չեն ընտրում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտություններ, որը բարդացնում է հետագայում նրանց աշխատանքի տեղավորումն ավելի բարձր վարձատրվող մասնագիտություններով, ինչպիսիք են ավանդաբար «տղամարդկանց» մասնագիտությունները: Հանրակրթական դպրոցների դաստիարակչական աշխատանքներում գենդերային մոտեցումը հաշվի չի առնվում, ինչը հետևանք է նաև այն իրողության, որ մանկավարժական կադրերի վերապատրաստման համակարգում կրթության և դաստիարակության գենդերային հիմնախնդիրներին պատշաճ տեղ չի հատկացվում:

60. Նույն տեղում, էջ 42:

2005 թ. Հայաստանը միացել է Բոլոնյան հռչակագրին՝ ստանձնելով բուհական և հետբուհական կրթությունը դրա պահանջներին համապատասխանեցնելու պարտավորություն: 2012 թ. հունիսին Հայաստանը պաշտոնապես ստանձնեց 2012-2015 թթ. Բոլոնյան գործընթացի քարտուղարության ձևավորման գործառույթները: Չնայած տվյալ հանգամանքը երկրի վրա պարտավորություն է դնում անցկացնելու նպատակասլաց և պատասխանատու աշխատանք՝ ուղղված երկրում իրականացվող բարձրագույն և միջին մասնագիտական կրթական համակարգերի վերակառուցման արդյունավետության բարձրացմանը, այդուհանդերձ վերակառուցումը և ձեռնարկվող միջոցները բավարար չեն ժամանակի մարտահրավերներին համապատասխանելու առումով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք: 2012/2013 ուսումնական տարում բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված ուսանողների թվում աղջիկները կազմում են 53%, իսկ ավարտածների թվում՝ 55%[61]: Գենդերային հավասարության ցուցանիշը կազմել է 1,07[62]:

Աղքատության բարձր մակարդակի, ուսանողական վարկերի ցածր մատչելիության պատճառով մեծացել է բարձրագույն կրթությամբ ուսանողների ընդգրկվածության նվազման վտանգը: Բարձր վարկանիշ ունեցող պետական բուհերի առավել բարձր վարկանիշով մասնագիտությունների ֆակուլտետներում, ինչպիսիք են «իրավագիտությունը» և «միջազգային հարաբերությունները» Երևանի պետական համալսարանում, անվճար տեղեր չկան: 2013 թ. պետական բուհերում ուսման վարձի բարձրացումը կհանգեցնի անապահով ընտանիքներից երիտասարդների, առաջին հերթին աղջիկների բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունների նվազման:

Երկրում չեն իրականացվում աղջիկների և կանանց՝ իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտության ընտրությունը խրախուսող ծրագրեր: Բուհերում դեռևս պահպանվում է գենդերային խտրազատումը այնպիսի մասնագիտություններում, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները և տեղեկատվական անվտանգությունը, որտեղ աղջիկները կազմում են բոլոր ուսանողների 28%-ը, գյուղմթերքների սեկտորը՝ 27%, էներգետիկան, էներգետիկ մեքենաշինությունը և էլեկտրատեխնիկան՝ 7%, տրանսպորտային համակարգերը՝ 3%, ռազմական կրթությունը՝ 2%:

Պահպանվում է գենդերային անհավասարակշռությունը հետբուհական կրթության համակարգում: 2012 թ. տվյալներով՝ կանայք ասպիրանտուրայում կազմում էին 38%, ավարտածների թվում՝ 29%, թեկնածուական թեզը պաշտպանածների՝ 49%: Կանանց ներկայացվածությունը դոկտորանտուրայում կազմում է ընդամենը 23%[63]:

Կանանց զգալիորեն ցածր ներկայացվածությունը գիտական հաստատություններում, հատկապես՝ դոկտորանտուրայի մակարդակում, հետագայում հանգեցնում է գենդերային խտրազատման բուհերի և գիտահետազոտական հիմնարկների պաշտոնական կառուցվածքում: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական ինստիտուտների տնօրենների թվում ոչ մի կին չկա:

61.Բարձրագույն մասնագիտական կրթություն//Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2012 թվականին և դինամիկ շարքեր, վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2013 թ., http://www.armstat.am/file/article/soc_12_11-12.pdf , էջ 178:
62.Նույն տեղում:
63.Նույն տեղում:

2011 թ. կանայք կազմում էին պետական բուհերի պրոֆեսորա-դասախոսական կազմի 48,6%-ը և ոչ պետական բուհերի՝ 52,1%-ը: Պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասատուների կազմում կանայք 75,7% են, իսկ ոչ պետականներում՝ 77,3%: Միաժամանակ կանանց ներկայացվածությունը բուհերի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարության կազմում ցածր է մնում: Կանայք կազմում են 12,5% պետական բուհերի ռեկտորների և պրոռեկտորների, 17,3%՝ դեկանների, 23,4%՝ ամբիոնների վարիչների թվում[64]:

Կանանց ցածր ներկայացվածությունը պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարության կազմում հանգեցնում է ամբողջությամբ կրթական քաղաքականության մշակման վրա նրանց ազդեցության նվազման:

Ոչ պետական բուհերի համակարգում կանանց ներկայացվածությունը ղեկավարության կազմում որոշ չափով ավելի բարձր է. կանայք կազմում են 52% ռեկտորների և պրոռեկտորների, 45%՝ դեկանների, 76%՝ ամբիոնների վարիչների թվում[65]: Ոչ պետական բուհերում ղեկավար պաշտոններում կանանց բարձր տոկոսը, պետական բուհերի համեմատ, ավելի ցածր աշխատավարձի հետևանք է:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կառուցվածքում կրթության ոլորտում գենդերային քաղաքականության համար պատասխանատու կառույց գոյություն չունի, չկան գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը և գենդերային խտրականության վերացմանն ուղղված ծրագրեր:

Երաշխավորություններ

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը.

- *իրականացնել հանրակրթության համակարգից գյուղաբնակ աղջիկների դուրս մնալու նվազեցմանն ուղղված որոշակի և նպատակասլաց միջոցներ,*
- *շարունակել հանրակրթական դպրոցների սովորողների և ուսանողների գենդերային իրազեկության բարձրացմանն ուղղված գենդերային կրթության ինստիտուցիոնալացումը,*
- *անցկացնել ուսումնական ծրագրերի և դպրոցական դասագրքերի գենդերային վերլուծություն գենդերային կարծրատիպերը վերացնելու նպատակով,*
- *իրականացնել միջոցառումներ հատուկ ծրագրերի ներդրման ուղղությամբ հանրակրթական դպրոցների դասատիրակչական աշխատանքների համակարգում կանանց իրավունքների, հասարակության մեջ և ընտանիքում նրանց դերի վերաբերյալ գենդերային կարծրատիպերի փոփոխման նպատակով,*
- *մշակել և ներդնել զգայուն գենդերային ցուցիչներ կրթության ոլորտի բոլոր աստիճանների համար՝ նպատակ ունենալով աղջիկներին և տղաներին որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ապահովումը,*
- *մշակել աղջիկների կողմից՝ իրենց սեռի համար ոչ ավանդական, աշխատաշուկայում բարձր պահանջարկ ունեցող մասնագիտությունների ընտրությունը խրախուսող ծրագրեր,*

64. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ, 2012, էջ 79:
65. Նույն տեղում, էջ 80:

- *ձեռնարկել միջոցներ ծնողական համայնքի հետ, հատկապես՝ գյուղական բնակավայրերում, հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվների աշխատանքի կատարելագործման ուղղությամբ, նրանց շրջանում անցկացնել ավելի լայն և նպատակամետ տեղեկատվական-բացատրական աշխատանք աղջիկների իրավունքների և երկրի հասարակական-քաղաքական կյանքում կանանց դերի վերաբերյալ,*
- *ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ մշակել և իրականացնել գիտական հետազոտությունների պլաններում գենդերային հիմնախնդիրների ներառմանն ուղղված միջոցներ,*
- *մշակել համալսարաններում և ակադեմիական հաստատություններում, մասնավորապես՝ դոկտորանտուրայում, կանանց գիտական գործունեության խթանմանն ուղղված հատուկ միջոցներ,*
- *ձեռնարկել կրթության համակարգում բոլոր կարգերի սովորողների և լայն հասարակայնության համար գենդերային հիմնախնդիրների ու գենդերային հավասարության վերաբերյալ գիտահանրամատչելի գրականության մշակմանը և հրատարակմանն ուղղված միջոցներ,*
- *մշակել և իրականացնել շարունակական կրթության հատուկ ծրագրեր կանանց համար՝ ուղղված աշխատանքն ընտանեկան պարտականությունների կատարման հետ զուգակցելու հնարավորությունների ընդլայնմանը,*
- *մշակել և իրականացնել կրթության և գիտության համակարգում բարձր պաշտոնական մակարդակներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված գենդերային ներկայացվածության ապահովմանն ուղղած միջոցներ:*

Հոդված 11

Զբաղվածության ոլորտում կանանց նկատմամբ խտրականության վերացումը

Հիմնախնդիրները.

- *Կանանց փաստացի միջին աշխատավարձի էապես ցածր մակարդակը տղամարդկանց համեմատ:*
- *Հորիզոնական և ուղղահայաց գենդերային խտրազատումը զբաղվածության ոլորտում և աշխատաշուկայում:*
- *Պաշտոնապես գրանցված գործազուրկների շրջանում կանանց էապես բարձր մասնաբաժինը:*
- *Կանանց մասնակի զբաղվածությունը, կենտրոնացումը տնտեսության ցածր վարձատրությամբ ճյուղերում և մեծ չափերով ընդգրկվածությունը ոչ եկամտաբեր գործունեության մեջ:*
- *Կանանց անբավարար ներկայացվածությունը տնտեսության կարգավորման վերին օղակներում և մասնավոր ընկերությունների խորհուրդներում:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի ներկայացրած համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ[66]

– Կոմիտեն լուրջ մտահոգություն է հայտնում աշխատաշուկայում շարունակվող թե՛ ուղղահայաց, թե՛ հորիզոնական գենդերային տարաբաժանման և գենդերային հավասարությանը հասնելուն միտված կոնկրետ օրենսդրական միջոցների բացակայության առնչությամբ:

– Կոմիտեն նշում է կանանց շրջանում գործազրկության բարձր մակարդակը և կանանց կենտրոնացումը մասնակի զբաղվածության, ցածր վարձատրվող ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, գյուղատնտեսությունն ու ոչ պետական սեկտորները:

– Հատուկ մտահոգություն է հայտնում աշխատավարձի առկա տարբերության և աշխատավարձի տարբերության հասկացողության բացակայության, ինչպես նաև կառավարման վերին օղակներում և մասնավոր ընկերությունների խորհուրդներում կանանց ցածր ներկայացվածության և աշխատավայրում կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունների կանխարգելմանն ուղղված մշտական արդյունավետ միջոցների բացակայության առնչությամբ:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները խտրականության վերացման կապակցությամբ Հայաստանի ներկայացրած համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ[67]

– Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանն ընդունել քաղաքականություն և կոնկրետ օրենսդրական միջոցներ՝ արագացնելու կանանց նկատմամբ աշխատան-

66. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 32:
67. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզչափակիչ դիտարկուները/ 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 33:

քային խտրականության վերացումը և աշխատել հասնելու կանանց համար փաստացի հավասար հնարավորությունների աշխատաշուկայի բոլոր մակարդակներում, այդ թվում նաև ձեռնարկել բոլոր միջոցները աշխատավայրում կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունների դեմ:

– Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանը մշակելու գենդերային չափանիշների վրա հիմնված պաշտոնի գնահատման համակարգեր՝ նպատակ ունենալով վերացնել տղամարդկանց և կանանց աշխատավարձի միջև առկա տարբերությունը և կիրառելու աշխատավարձի հավասարեցում:

– Կոմիտեն խրախուսում է մասնակից պետությանը շարունակել աշխատավարձի բարձրացմանն ուղղված ջանքերը պետական համակարգի այն ճյուղերում, որոնցում մեծ մասամբ կանայք են աշխատում:

– Նաև առաջարկում է, որ մասնակից պետությունն ավելի լայնորեն օգտագործի ժամանակավոր հատուկ միջոցները՝ համաձայն Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի և Կոմիտեի թիվ 25 Ընդհանուր հանձնարարականի, հաստատելով քանակական շեմեր՝ ժամանակացույցներով կամ քվոտաներ արտադրատեխնիկական, ներառյալ ոչ ավանդական աշխատանքների ուսուցման մեջ կանանց ներգրավման հասանելիության և կրթության շարունակման համար և առաջ մղելով կանանց՝ զբաղեցնելու առավել բարձր պաշտոններ պետական հատվածում:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

ՀՀ Սահմանադրությունը, աշխատանքային օրենսգիրքը և «Աշխատանքի պետական տեսչության մասին» օրենքը ամրագրում են համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը՝ արգելելով սեռի հատկանիշով տարաբաժանումը աշխատաշուկայում և զբաղվածության ոլորտում: Սակայն դե ֆակտո գործունեության բոլոր բնագավառներում, անկախ զբաղվածության բնույթից կամ կարգավիճակից, տղամարդկանց վաստակած միջին ամսական զուտ եկամուտն էապես գերազանցում է կանանց վաստակածը: 2012 թ. հանրապետության մասշտաբով կանանց միջին ամսական զուտ եկամուտը կազմել է տղամարդկանց եկամտի 59%-ը, իսկ միջին ամսական աշխատավարձը՝ տղամարդկանց աշխատավարձի 64,4%-ը[68]: Ճիշտ է, վերջին տասնամյակում այս ցուցանիշն ունեցել է դրական շարժընթաց, քանի որ 2003 թ. կանանց միջին աշխատավարձը կազմում էր տղամարդկանց աշխատավարձի 42%-ը[69], սակայն, ըստ էության, կանանց աշխատանքային գործունեության նկատմամբ ակնհայտորեն պահպանվում է ինչպես ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն), այնպես էլ հորիզոնական (ըստ մասնագիտությունների և սեկտորների) խտրականությունը:

Հայաստանում աշխատավարձի գենդերային խզումը հետևանք է կանանց խտացման ցածր վարձատրությամբ աշխատատեղերում կամ ոլորտներում. առողջապահություն, կրթություն, գիտություն, մշակույթ: Ընդ որում, տարիներ շարունակ մասնագիտական (հորիզոնական) խտրազատման կտրվածքով փոփոխությունները տեղի են ունենում կանանց համար անցանկալի ուղղություններով. կանանց զբաղվածությունը և եկամուտը հարաբերականորեն կրճատվում

68. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: Երևան, 2013, էջ 134, 135:
69. Նույն տեղում, 2005, էջ 81:

են տնտեսության այն ճյուղերում (ֆինանսավարկային ոլորտ, հանքարդյունաբերություն, էներգետիկա, բնակարանային-կոմունալ տնտեսություն), որոնցում եկամուտները համեմատաբար բարձր են: Ստացվում է, որ երկրի տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում կանանց ներգրավվածության մակարդակը հակադարձ համեմատական է ճյուղում առկա աշխատավարձի մեծությանը:

Զբաղվածության ոլորտում գոյություն ունեցող հորիզոնական տարաբաժանումը հաճախ բացատրվում է սեռերի նախընտրություններով, բայց իրականում շատ ավելի անհանդուրժելի է ուղղահայաց խտրազատումը: ՀՀ-ում նույնիսկ տնտեսության «կանացի» դեմք ունեցող ճյուղերում կանանց միջին աշխատավարձն էապես ցածր է տղամարդկանցից, չնայած նրան, որ կանանց կրթական ցենզը կամ մասնագիտական որակավորումը նույնիսկ ավելի բարձր է: Սա ակնհայտորեն դրսևորվում է առողջապահական, ապահովագրական, վարկային և մի շարք այլ համակարգերում, որոնցում գործող հաստատություններն ու դրանց ստորաբաժանումները հիմնականում գլխավորում են տղամարդիկ: Այսպես, բժիշկների ընդհանուր թիվը երկրում կազմում է 13180 մարդ, որից կանայք՝ 8770 (66,5%): Սակայն հանրապետությունում գործող 97 հիվանդանոցային հաստատությունների տնօրենների թվում միայն 14 -ն են կին (15%): Եթե հաշվի առնվի նաև այն փաստը, որ ընդհանուր բուժաշխատողների ստորին մակարդակում (բուժքույրեր, խնամողներ, սանիտարներ և այլն) գրեթե աշխատում են միայն կանայք, ապա պարզ կդառնա, որ ամբողջությամբ վերցրած՝ առողջապահության ոլորտում եկամուտների գենդերային տարբերակվածությունն անընդունելի չափերով մեծ է:

Զբաղվածության ոլորտում աչքի է զարնում նաև գենդերային խտրազատումը՝ կախված սեփականության ձևից: Առողջապահության ոլորտում ձևավորված իրավիճակը բավականաչափ բնութագրական է բոլոր ճյուղերի համար. 15 մասնավոր հիվանդանոցային հաստատություններից ընդամենը մեկի տնօրենն է կին: Տնտեսության պետական հատվածում, որտեղ աշխատավարձը, մասնավորի համեմատ, նկատելիորեն ցածր է, ավելի շատ կին է զբաղված, քան տղամարդ, թեև ղեկավար պաշտոնների մեծ մասը դարձյալ զբաղեցնում են տղամարդիկ: Այս իրողությունները ոչ այլ ինչ են, քան թաքնված խտրականություն զբաղվածության և աշխատավարձի ոլորտներում:

ՀՀ-ում տղամարդկանց և կանանց զբաղվածության կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխատանքի վարձատրության գենդերային տարբերությունները խորանում են աշխատաշուկայի ցածր վարձատրվող սեգմենտներում, որոնցում գերակշռում են կանայք, և մեղմվում կանանց կրթվածության բարձր մակարդակով՝ նպաստելով աշխատավարձի տարբերության կրճատմանը: Մասնագիտական առաջխաղացման հարցում գենդերային խտրազատման առկայությունն արտացոլում է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց սոցիալական դերերի ընկալման կարծրատիպերը, որոնք բացասաբար են անդրադառնում տնտեսության կառուցվածքի վրա, նվազեցնում դրա ներուժը, վերարտադրում գենդերային անհավասարակշռությունը և ամրապնդում թաքնված խտրականությունը:

Զբաղվածության ոլորտում առկա գենդերային տարաբաժանումը բացահայտվում է աշխատաշուկայի առանձին բնութագրիչների (զբաղվածության կարգավիճակ, գործազրկության տևողություն, կրթություն, տարիք, ամուսնական վիճակ, եկամտի մակարդակ և այլն) կտրվածքով տնտեսապես ակտիվ բնակչության սեռային կազմի վերլուծությամբ:

2012 թ. դրությամբ երկրի աշխատանքային ռեսուրսները գնահատվում են 2 260,8 հազ. մարդ, այդ թվում 1 256,1 հազ. (55,5%) կին և 1 004,7 հազ. (44,5%) տղամարդ, սակայն տնտեսապես ակտիվ է կանանց 55,2%-ը, իսկ տղամարդկանց՝ 72,1%-ը: Զբաղվածների ընդհանուր թվում 48%-ը կանայք են, 52%-ը՝ տղամարդիկ[70]:

Վարձու աշխատողների կարգավիճակում կանանց և տղամարդկանց տարբերությունն էական չէ (47%-ը՝ կին, 53%-ը՝ տղամարդ), սակայն ինքնազբաղվածների և հատկապես գործատուների դեպքում տղամարդկանց բաժինն անհամեմատ մեծ է (ավելի քան 80%), դրան հակառակ՝ ընտանիքի չվարձատրվող անդամների թվում շուրջ 2/3-ը կանայք են: Տնային տնտեսության մեջ կանանց անվարձահատույց գործունեությունը որևէ արժեքային գնահատական չի ստանում և չի արտացոլվում ազգային հաշիվների համակարգում:

Երկրի տնտեսական և հասարակական կյանքում տղամարդկանց և կանանց իրական ավանդի գնահատման հարցում կարևոր հստակեցումներ են մտցնում ժամանակի բյուջեի գենդերային կտրվածքով ուսումնասիրությունները, որոնք Հայաստանում իրականացվել են երկու անգամ՝ 2004 թ. և 2008 թ.: Համեմատական վերլուծությունների արդյունքները գրեթե չեն տարբերվում և վկայում են այն մասին, որ տղամարդիկ երեք անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում եկամտաբեր գործունեության վրա, կանայք էլ հինգ անգամ ավելի շատ ժամանակ՝ տնային տնտեսության և ընտանիքի անդամների խնամքի վրա: Ընդհանուր առմամբ տղամարդիկ 30%-ով ավելի շատ ազատ ժամանակ ունեն, քան կանայք: Ժամանակի բյուջեի վերլուծությունները կարևորվում են ոչ միայն կանանց տնային աշխատանքի գնահատման, այլև երկրի ֆինանսական համակարգում, մասնավորապես՝ կանանց կենսաթոշակային ապահովման հարցում՝ դրա փոխհատուցմանն ուղղված որոշակի միջոցների հատկացումը հիմնավորելու առումով:

ՀՀ-ում բնակչության զբաղվածության և սոցիալական հիմնախնդիրների լուծման արդյունավետ ուղի է դիտվում տնտեսության մասնավոր հատվածի, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) առաջանցիկ զարգացումը՝ հաշվի առնելով նաև ոլորտի գենդերային առանձնահատկությունները: Հայաստանում մասնավոր ձեռնարկատիրությանն աջակցություն ցուցաբերող կազմակերպությունները հիմնականում իրականացնում են ընդհանրական գործառույթներ՝ առանց կին գործարարների յուրահատուկ կարիքների բացահայտման: Արդյունքում ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կազմակերպվող մասնագիտական ուսուցման դասընթացներում կանայք ավելի մեծ ընդգրկվածություն ունեն, սակայն ֆինանսական աջակցության ծրագրերով հատկացվող միջոցները մեծ մասամբ բաժին են հասնում տղամարդկանց: ՓՄՁ ոլորտում կանանց տնտեսական ակտիվության, ինչպես նաև եկամտի համեմատաբար ցածր մակարդակը Հայաստանի պարագայում մեծապես պայմանավորված է շատ կանանց համար եկամտաբեր գործունեությունը, հատկապես՝ գործարարության որոշակի տեսակները (ռեստորանային, ժամանցային, հյուրանոցային բիզնես) ընտանեկան պարտականությունների հետ լիարժեքորեն համատեղելու ցածր հնարավորություններով: Վերոնշյալը վկայում է նաև ՓՄՁ ոլորտում կին ձեռնարկատերերի նկատմամբ փաստացի խտրականության մասին:

ՀՀ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով՝ 2013 թ. սկզբի դրությամբ հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը 69400 մարդ է, որից 49200-ը կամ գրանցվածների 71%-ը՝ կանայք, և ըստ այդմ պաշտոնական գործազրկության

70. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: Երևան, 2013, էջ 107-108:

մակարդակը կազմում է 6%[71]: Սակայն այս տվյալները հեռու են իրականությունից և չեն արտացոլում թաքնված գործազրկության մասշտաբները:

Աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքներով՝ Հայաստանում վերջին տասը տարում իրական գործազրկության մակարդակը կրճատվել է շուրջ երկու անգամ և 2012 թ. դրությամբ կազմում է 17,2%[72]: Ընդ որում, կանանց և տղամարդկանց գործազրկության մակարդակների (համապատասխանաբար՝ 52% և 48%) տարբերությունը մեծ չէ: Խնդիրն այն է, որ երկրում տնտեսական վայրիվերումների վերջին մի քանի տարիների ընթացքում գործազուրկ կանանց թիվն ավելի քան 5000 մարդով ավելացել է, իսկ գործազուրկ տղամարդկանցը՝ նույնչափ կրճատվել, ինչը վկայում է տնտեսական ճգնաժամերի բացասական ազդեցություններից կանանց թույլ պաշտպանվածության մասին:

Գործազրկության գենդերային վերլուծությունը բացահայտում է նաև տարիքի և ամուսնական վիճակի կարևորությունը: Եթե 15-24 տարիքային խմբի տղաների և աղջիկների համար աշխատանք գտնելու հավանականությունը գրեթե նույնն է, ապա 40-44, 45-49 և 50-54 տարիքային խմբերի կանայք կրկնակի ավելի շատ են ենթակա գործազրկության և աղքատության մեջ հայտնվելու ռիսկին: Լրիվ աշխատանքային օրով զբաղվածների թվում երբևէ չամուսնացած կանայք և տղամարդիկ միատեսակ ընդգրկվածություն ունեն, միչդեռ ամուսնացած, ամուսնալուծված և ամուսնուն (կնոջը) կորցրած ոչ լրիվ աշխատանքային օրով զբաղվածների թվում կանանց մասնաբաժինը կազմում է, համապատասխանաբար, 58%, 73%, և 83%: Անհամեմատ բարձր է կանանց մասնաբաժինը (88%) ընտանեկան հանգամանքների պատճառով գործազուրկ դարձածների թվում:

Մտահոգիչ է նաև մեկ տարուց ավելի գործազուրկի կարգավիճակ ունեցողների կազմում կանանց բարձր մասնաբաժինը (ավելի քան 80%): Այդպիսի կանայք երկարատև գործազրկության հետևանքով կորցնում են որակավորումը և աշխատանքի տեղավորվելու համար ոչ միայն մասնագիտական ուսուցման, հաճախ նաև բարոյական և հոգեբանական աջակցության և վերականգնման կարիք ունեն:

Հայաստանյան աշխատաշուկայում կանանց առջև ծառացած խնդիրը ոչ միայն աշխատատեղերի մատչելիությունն է, այլև՝ խտրականությունը աշխատանքի ընդունվելիս, երբ չնայած կրթվածության և որակավորման բարձր մակարդակին՝ լիովին կախված են գործատուի նախասիրություններից: Կանանց հետ, առանց իրավական հիմքերի, մեծ մասամբ կնքվում են կարճաժամկետ աշխատանքային պայմանագրեր, նրանք ավելի հաճախ են տեղավորվում ոչ լրիվ աշխատանքային օրով կամ ժամանակավոր աշխատանքի, նրանց առաջին հերթին են ազատում աշխատանքից կամ կրճատում, մեծ մասամբ՝ առանց հիմնավոր պատճառի: Այլընտրանքի բացակայության պայմաններում մարդիկ գիտակցաբար համաձայնում են կրճատված դրույքաչափերի, ցածր աշխատավարձի և բարձր շահագործման ռեժիմի, ինչը լայն տարածում է գտել հատկապես առողջապահական և կրթահամակարգերում: Աշխատուժի առաջարկի ավելցուկը գործատուներին նաև հնարավորություն է տվել խստացնելու մասնագետների ընտրությունը, ավելի մեծ ուշադրություն դարձնելու որակավորում շնորհած բուհի վարկանիշին, օտար լեզվի իմացությանը, համակարգչային հմտություններին, տարիքին և շատ հաճախ՝ արտաքինին:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, զբաղվածության ոլորտում և աշխատաշուկայում կանանց ցածր մրցունակության և խտրականության ենթարկվելու

71. www.employment.am
72. ՀՀ վիճակագրական տարեգիրք: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն: Երևան, 2013, էջ 85:

ընդհանրական պատճառներ են կանանց համար ֆինանսական և վարկային միջոցների, գույքային սեփականության և հողի ոչ բավարար մատչելիությունը, գործնականում նրանց օտարումը սեփականաշնորհման արդյունքներից, կանանց դուրսմղումը տնտեսության համեմատաբար եկամտաբեր ճյուղերից, ցածր ընդգրկվածությունը պետական և մասնավոր կազմակերպությունների ղեկավար մարմիններում, սոցիալական և իրավական համեմատաբար թույլ պաշտպանվածությունը:

Երաշխավորություններ

ՀՀ Ազգային ժողովին.

- *կատարել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված կանանց նկատմամբ աշխատանքային խտրականության վերացմանը և աշխատաշուկայի բոլոր մակարդակներում կանանց համար փաստացի հավասար հնարավորությունների ապահովմանը:*

ՀՀ կառավարությանը.

– *ձեռնարկել միջոցներ, ներառյալ՝ դրական խտրազատման սկզբունքով համապատասխան քվոտաների սահմանումը, տնտեսության և պետական կազմակերպությունների կառավարման վերին օղակներում, պետական և համայնքային ընկերությունների խորհուրդներում կանանց բավականաչափ ընդգրկվածություն ապահովելու նպատակով,*

– *մշակել կանանց ձեռնարկատիրությունը խթանող հատուկ ծրագրեր, ձեռնարկել սոցիալ-տնտեսական բնույթի միջոցներ՝ ուղղված ներդրումային քաղաքականության կատարելագործմանը, այն ճյուղերի առաջնահերթ զարգացմանը, որոնք կօգնեն առավել արդյունավետ լուծելու տնտեսական զարգացման խնդիրները՝ հաշվի առնելով այն օժանդակ արտադրությունների ստեղծումը, որոնք նախատեսվում են կանանց զբաղվածության համար, ներառյալ՝ տնայնագործությունը և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ աշխատանքը,*

– *իրականացնել միջոցառումներ, որոնք գործնականում կերաշխավորեն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները բանկային փոխառություններ և վարկեր ստանալիս, խրախուսել այն ֆինանսական հաստատություններին, որոնք արտոնյալ վարկեր են տրամադրում կանանց կամ սպասարկում են կանանց ղեկավարած փոքր և ցածր շահութաբեր ձեռնարկությունները,*

– *հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներգրավմամբ սոցիալական գործընկերության շրջանակներում մշակել և իրականացնել որոշակի միջոցներ՝ ուղղված կանանց տնտեսական-իրավական գրագիտության բարձրացման նպատակով մատուցվող խորհրդատվությունների, բիզնես կրթական ծրագրերի ընդլայնմանը, ինչպես նաև սեփական տնտեսական իրավունքների մասին կանանց իրազեկության մակարդակի բարձրացմանը՝ զբաղվածության ոլորտում և ռեսուրսներն ըստ սեռի հատկանիշի բաշխման հարցում խտրականության փաստերի վերացման նպատակով:*

Հոդված 12
Խտրականության վերացումը առողջապահության ոլորտում

Հիմնախնդիրները.

- *Կանանց համար բժշկական ընդհանուր ծառայությունների սահմանափակ հասանելիությունը, այդ թվում վերաարտադրողական առողջության ոլորտում:*
- *Առողջապահության ոլորտի պետական ֆինանսավորման ցածր մակարդակը:*
- *Բնակչության անիրազեկությունը ընտանիքի պլանավորման ժամանակակից մեթոդների մասին:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[73]

– Նշելով առողջության համակարգից անվճար օգտվելու հնարավորությունը և այլ ջանքերը, որոնք ձեռնարկվել են կանանց վերարտադրողական առողջության վերականգնման նպատակով, Կոմիտեն ափսոսանք է հայտնում, որ այդ ջանքերը և ընդունած ռազմավարությունն արդյունավետ չեն եղել:

– Կոմիտեն շարունակում է մտահոգված լինել առողջապահության համակարգի ընդհանուր ծառայությունների, ինչպես նաև կանանց վերարտադրողական առողջության ծառայությունների անբավարար հասանելիությամբ, հատկապես՝ գյուղական և հեռավոր շրջաններում, ինչպես նաև արհեստական վիժեցման թվի փաստացի մեծացմամբ, որը շարունակում է մասնակից պետության մեջ լինել ընտանիքի պլանավորման ամենատարածված միջոցը:

– Կոմիտեն նաև մտահոգված է անչափահասների շրջանում հղիության բարձր ցուցանիշով և ափսոսանք է հայտնում արհեստական վիժեցման հետևանքով մահացության դեպքերի վերաբերյալ տվյալների բացակայության առնչությամբ:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[74]

– Կոմիտեն խորհուրդ է տալիս մասնակից պետությանը շարունակել միջոցներ ձեռնարկել՝ բարելավելու կանանց համար ընդհանուր առողջապահական և մասնավորապես վերարտադրողական առողջապահական ծառայությունների հասանելիությունը:

– Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը մեծացնել ջանքերը՝ բարելավելու սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունները, ներառյալ՝ ընտանիքի պլանավորումը, համախմբելու բոլոր միջոցներն այդ նպատակին հասնելու համար և մշտադիտարկելու կանանց կողմից այդ ծառայություններից փաստացի օգտվելը:

– Կոմիտեն առաջարկում է, որ ընտանիքի պլանավորման և վերարատադրողական առողջության մասին ուսուցումը լայնորեն քարոզվի և նպատակաուղղված լինի աղջիկներին ու տղաներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահաս աղջիկների շրջանում վաղ հղիության կանխմանը, ինչպես նաև սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարին:

73.Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 34:
74. Նույն տեղում, կետ 35:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնարկում է նպատակասլաց միջոցներ առողջապահության ոլորտում ծառայությունների հասանելիության բարելավման և 1996 թ. ընդունված «Բժշկական օգնության և բնակչության սպասարկման մասին» ՀՀ օրենքով երաշխավորված տղամարդկանց և կանանց բժշկական օգնություն ստանալու հավասար իրավունքի ապահովման ուղղությամբ:

Առողջապահության զարգացման գերակա քաղաքականությունը արտացոլված է ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության որակի բարելավման և կառավարման հայեցակարգում» (2002 թ.) և «Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության առաջնային պահպանման 2008-2013 թթ. ռազմավարությունում»:

Հատուկ ուշադրություն հատկացնելով մայրական և մանկական առողջության պահպանման հարցերին՝ ՀՀ կառավարությունը հաստատել է «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թթ. ռազմավարությունը», «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագիրը», «Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման ազգային ռազմավարությունը», «Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման ազգային ռազմավարության ներդրման 2010-2015 թթ. գործողությունների ծրագիրը» և «Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագիրը»:

2007 թվականից երկրում իրականացվում է «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագիրը»: 2011 թ. մարտին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Առավել բարձր մահացություն բերող երեք հիվանդության՝ արյան շրջանառության համակարգի (սրտանոթային հիվանդություններ), չարորակ նորագոյացությունների և շաքարային դիաբետի ազգային ռազմավարական ծրագրերին»:

Կանանց, հատկապես գյուղական բնակավայրերի բնակիչների համար ընդհանուր առողջապահության հասանելիությունն ապահովելու նպատակով հանրապետությունում իրականացվել է որոշակի աշխատանք բժշկական հիմնարկների ցանցի զարգացման ուղղությամբ: Երկրում գործում են 130 հիվանդանոցային հիմնարկներ, որոնք ապահովում են 37,4 մահճակալ 10000 բնակչության հաշվով: Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների թիվը 2008 թ. 474-ից 2013 թ. հասել է մինչև 513-ի: Նույն ժամանակահատվածում կանանց կոնսուլտացիաների, մանկական պոլիկլինիկաների և կանանց ու երեխաներին ամբուլատոր օգնություն տրամադրող հիմնարկների թիվն աճել է 429-ից մինչև 513:

Չնայած նկատվում է հղի կանանց և ծննդկանների հիվանդանոցային մահճակալներով ապահովվածության ավելացում, որը 2012 թ. սկզբին կազմել է 13,6 ֆերտիլային տարիքի 10000 կնոջ հաշվով, այդուհանդերձ այն ցածր է մնում 2007 թ. ցուցանիշից 0,8-ով:

Առողջապահության մոդեռնացման ծրագրերի շրջանակներում միջոցներ են ձեռնարկվում մարզերում առողջապահության համակարգի զարգացման ուղղությամբ: Վերջին տարիներին հիմնանորոգվել և ժամանակակից սարքավորումներով են հագեցվել 197 ամբուլատորիաներ և 7 մարզային հիվանդանոցներ: Հանրապետության բոլոր 10 մարզերում ներկայումս գործում են

բազմապրոֆիլային հիվանդանոցներ, որոնք ապահովված են որակյալ բժշկական օգնություն տրամադրելու համար անհրաժեշտ ժամանակակից տեխնիկական սարքավորումներով և կադրային ռեսուրսներով:

Բնակչության մեկ շնչի հաշվով բժիշկների թվաքանակով Հայաստանը, ԱՊՀ երկրների համեմատ, զբաղեցնում է միջինից բարձր տեղ: Ընդհանուր ապահովվածությունը բժիշկներով 10000 բնակչի հաշվով կազմում է 41,2:

Չնայած ձեռնարկվող միջոցներին՝ պահպանվում է բժշկական օգնության մակարդակի էական տարբերությունը մայրաքաղաքի և հանրապետության մյուս տարածքների միջև: Հիվանդանոցային հիմնարկների, հատկապես բարձր տեխնոլոգիական մասնագիտացված հիմնարկների զգալի մասը (48%) կենտրոնացված է Երևանում, որտեղ աշխատում է բժիշկների, այդ թվում բարձրակարգ, 71,8%-ը և բուժքույրերի 47,8%-ը: Մայրաքաղաքի բնակիչների ապահովվածությունը բժիշկներով՝ 876 բժիշկ 10000 բնակչության հաշվով, ավելի քան 4 անգամ գերազանցում է գյուղական բնակիչների ապահովվածությունը. մարզերում բժիշկներով ապահովվածությունը միջինը կազմում է 17,7 բժիշկ 10000 բնակչության հաշվով[75] մոտավորապես 250 բժշկական թափուր տեղերի առկայության պայմաններում:

Մարզերում առանձնապես մեծ է նեղ մասնագետների՝ անեսթեզիոլոգների, մանկաբույժների, սրտաբանների, նյարդաբանների, մանկաբարձ-գինեկոլոգների, շտապ օգնության բժիշկների պահանջարկը, ինչը մարզերի բնակիչների մեջ առաջացնում է Երևանում հետազոտվելու և բուժվելու բնական ձգտում:

Տարածաշրջանային հիվանդանոցային հիմնարկների օպտիմալացումը և մոդեռնացումը, որն անցկացվել է մարզերից հիվանդների հոսքը իրենց տարածքների հիվանդանոցային հիմնարկներ ուղղորդելու միջոցով Երևանի հիվանդանոցները բեռնաթափելու նպատակով, առայժմ սպասված արդյունքը չի տվել. երևանյան հիվանդանոցներում հոսպիտալացման մակարդակը 2011 թ. աճել է 27,4%-ով 2006 թ. համեմատ, այն դեպքում, երբ մարզերի հիվանդանոցներում այն ավելի քան երկու անգամ քիչ է աճել՝ ընդամենը 12,3%-ով[76]:

Գյուղական տարածքներում բժշկական օգնության ապահովումը շարունակում է մնալ առողջապահության հրատապ խնդիրը: Հայաստանի ոչ բոլոր գյուղերն են ապահովված ամբուլատորիաներով, հաճախ մեկ բժիշկը սպասարկում է միմյանցից 10-15 կմ հեռավորության վրա գտնվող և միմյանց հետ տրանսպորտային հաղորդակցություն չունեցող մի քանի գյուղերի բնակչությանը, ինչը սահմանափակում է բնակչության, հատկապես կանանց բժշկական օգնության դիմելու հնարավորությունները: Որոշ գյուղերում բացակայում են նույնիսկ բուժկետերն ու դեղատները: Ձմռանը իրավիճակն ավելի է բարդանում ճանապարհների անանցելիության պատճառով, հատկապես՝ Հանրապետության լեռնային շրջաններում: Արձանագրվել է դեպք, երբ կինը ծննդաբերել է մեքենայում, որը առատ ձյան պատճառով մնացել է ծննդատան ճանապարհին:

Հայաստանում լուրջ խնդիր է մնում առողջապահության ծառայությունների սահմանափակ ֆինանսական մատչելիությունը, որը նախ և առաջ վերաբերում է կանանց, քանի որ նրանք, տղամարդկանց համեմատ, առողջապահության հետ կապված ավելի մեծ ծախսեր են կրում:

Վերարտադրողական գործառույթի հետ կապված կենսաբանական առանձնահատկությունների պատճառով կանայք ավելի հաճախ են դիմում բժշկական ծառայությունների: Քանի

75. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012 թ.:
76. Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի գործունեության գնահատում / ՀՀ Առողջապահության ազգային ինստիտուտ, 2012:

որ կանայք ավելի երկար են ապրում (կանանց կյանքի միջին տևողությունը կազմում է 77 տարի, իսկ տղամարդկանցը՝ 71 տարի), զառամյալ տարիքում բժշկական օգնության կարիքը մեծանում է, մինչդեռ կանանց եկամուտները, որպես կանոն, ավելի փոքր են և կազմում են միջինը տղամարդկանց եկամուտների 63%-ը[77]:

Երկրի առողջապահության պետական ֆինանսավորումը խիստ ցածր է և վերջին տարիներին տատանվում է ՀՆԱ-ի 1,4%-1,65%-ի սահմաններում: Ավելին, առաջիկա երկու տարիներին նախատեսվում է ճյուղի ծախսերի ավելի մեծ կրճատում՝ մինչև 1,38% 2014 թ. և 1,31% 2015 թ.[78]:

Բժշկական օգնություն ստանալու պահին ծառայությունների դիմաց ֆորմալ կամ ոչ ֆորմալ վճարման համակարգը, որ գոյություն ունի հանրապետության առողջապահության ոլորտում, և դրանց բարձր գներն այն պայմաններում, երբ բնակչության 35%-ը աղքատության շեմից վար է գտնվում, առողջապահության մատչելիության ցածր մակարդակի հիմնական պատճառն են:

2011 թ. համավճարային համակարգի ներդրումը, որն ուղղված է ճյուղում գոյություն ունեցող ոչ ֆորմալ վճարումների կանխմանը, ստվերային տնտեսության մակարդակի նվազեցմանը և տրամադրված բժշկական ծառայությունների համար համազոր արժեքի հատուցման ապահովմանը, ոչ միայն չի լուծել ուղղակի վճարումների անհրաժեշտության հիմնախնդիրը, այլև հանգեցրել է բժշկական ծառայությունների թանկացման և բնակչության ավելի լայն շերտերի համար առողջապահության մատչելիության նվազման: Անցկացված հետազոտությունների արդյունքները[79] հաստատում են, որ եթե 2009 թ. ֆինանսական հիմնախնդիրների պատճառով բժշկական օգնության չի դիմել դրա կարիքն ունեցող քաղաքացիների 19,2%-ը, ապա 2012 թ. այդ ցուցանիշն աճել է մինչև 35,5%, ընդ որում եկամուտների նվազագույն մակարդակ ունեցող խմբում բժշկական օգնության չի դիմել 55%-ը, իսկ առավել բարձր եկամուտ ունեցողների՝ 35%-ը:

Համավճարային համակարգի սոցիալական ազդեցության գնահատմանն ուղղված հետազոտությունը[80] ցույց է տվել, որ անվճար բժշկական օգնությունից օգտվել է ամենաաղքատ հիվանդների գրեթե 20%-ը և ամենահարուստների 13%-ը: Բուժման համար լրացուցիչ վճարած հիվանդների թվում 24%-ը ամենաաղքատներից են և 16%-ը՝ ամենահարուստներից: Բուժման համար ամբողջությամբ վճարել է ամենաաղքատ և աղքատ հիվանդների գրեթե 40%-ը, ընդ որում լրավճարների միջին չափն ավելի քան 2 անգամ գերազանցել է մեկ մարդու հաշվով եկամուտների միջին մակարդակը: Կանայք կազմել են բժշկական ծառայություններից օգտվողների ընդհանուր թվի 58%-ը և անվճար բժշկական օգնություն ստացողների 60%-ը:

Համավճարային համակարգը նպաստել է միայն ճյուղում ոչ ֆորմալ վճարների տարածվածության մակարդակի մասնակի նվազմանը: Յուրաքանչյուր հինգերորդ հիվանդը, բացի պաշտոնական լրավճարից, ինքնակամ կամ ստիպված վճարում է տարբեր ծառայությունների համար նաև ոչ պաշտոնապես:

Բժշկական ապահովագրությունը՝ որպես քաղաքացիների սոցիալական պաշտպանության ձև, Հայաստանում զարգացում չի ստացել՝ չնայած դրա ներդրման անհրաժեշտության վերաբերյալ բազմաթիվ քննարկումներին: Վերջին տասնամյակի ընթացքում մշակվել են «Բժշկական ապահովագրության մասին» օրենքի նախագծեր, սակայն մինչ օրս այն չի ընդունվել:

77. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ, 2012:
78. ՀՀ կառավարության 2012 թ. հունիսի 14-ի որոշումը «2013-2015 թթ. միջնաժամկետ ծախսերը հաստատելու մասին»:
79. Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի գործունեության գնահատում / ՀՀ Առողջապահության ազգային ինստիտուտ, 2012:
80. Համավճարային համակարգի սոցիալական ազդեցության գնահատում, վերլուծական զեկույց 2013, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն:

Հայաստանի առողջապահության համակարգը «կանանց» ճյուղ է, որտեղ աշխատողների ընդհանուր թվի 76%-ը և միջին բժշկական անձնակազմի գրեթե 90%-ը կանայք են: «Կանայք առողջության պահպանմանը նպաստող գլխավոր գործող անձինք են, քանի որ հենց նրանք են օգնություն ցուցաբերում ընտանիքում և առողջապահության թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ հատվածում բժշկական-սանիտարական օգնություն տրամադրողներն են: Լինելով առողջապահության համակարգի գլխավոր հենասյունը՝ կանայք, այսուհանդերձ, քիչ են ներկայացված բարձր պաշտոններում … և հաճախ չեն ստանում աջակցություն, ճանաչում և հատուցում»[81]:

Կանայք գործնականում լիովին օտարված են ճյուղի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու հնարավորությունից: ՀՀ Ազգային ժողովում առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տղամարդ է գլխավորում: Առողջապահության նախարարը և նրա երեք տեղակալները տղամարդիկ են: Նախարարության 5 վարչություններից միայն երկուսն են ղեկավարում կանայք՝ մոր և մանկան առողջության պահպանման վարչությունը և իրավաբանական ծառայության վարչությունը: Կանայք քիչ են նաև տարածքային մակարդակի կառավարման օղակներում. 10-ից միայն երկու մարզում են կանայք ղեկավարում առողջապահության վարչությունը: Խոշոր հիվանդանոցային հիմնարկների և բժշկական կենտրոնների ղեկավարների թվում ընդամենը 3-ն են կին Երևանում և 4-ը՝ մարզերում, միաժամանակ առաջնային բժշկական օգնություն ցուցաբերող հիմնարկների ղեկավարների թվում կանայք կազմում են գրեթե 40%:

Առողջապահության ընդհանուր ծառայությունների մատչելիության մակարդակի նվազումն անդրադարձել է կանանց առողջության վիճակի վրա: 2012 թ. ընդհանուր մահացության ցուցանիշը՝ 100000 բնակչության հաշվով, 2010 թ. համեմատ, 8,57-ից աճել է մինչև 9,13:

Ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մահացության պատճառների շարքում առաջին տեղը զբաղեցնում են արյան շրջանառության հիվանդությունները և չարորակ նորագոյացությունները: Եթե արյան շրջանառության համակարգի հիվանդությունների խմբում մահացության նվազման որոշակի միտում է նկատվում, ապա չարորակ նորագոյացություններից մահացությունը կանանց շրջանում վերջին երեք տարում 143-ից աճել է մինչև 146 դեպք 100000 բնակչի հաշվով[82]:

Կանայք առավել հաճախ վերարտադրողական տարիքում են ունենում օնկոլոգիական հիվանդություններ. նորագոյացություններով հիվանդների 63,7%-ը կազմում են 20-40 տարեկան կանայք[83]՝ կրծքագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղի գերակշռությամբ: Վատթարանում են չարորակ նորագոյացությունների ժամանակին բացահայտման ցուցանիշները: Եթե 2003 թ. օնկոլոգիական հիվանդությունները վաղ փուլերում ախտորոշվել են հիվանդների 44%-ի մոտ, 3-րդ փուլում՝ 26%-ի մոտ և 4-րդ փուլում՝ 31%-ի մոտ, ապա 2011 թ. 1-ին և 2-րդ փուլերում հիվանդությունը ախտորոշվել է հիվանդների 42%-ի մոտ, 3-րդ փուլում՝ ընդամենը 18%-ի և 4-րդ փուլում՝ 40%-ի մոտ[84]: Չնայած վերջին տարիներին ընդլայնվել են մամոգրաֆիական հետազոտությունների տեխնիկական հնարավորությունները, հասարակական կազմակերպությունները կառավարման մարմինների հետ համատեղ որոշակի լուսավորական աշխատանք են տանում կրծքագեղ-

81. «Женщины и здоровье. Сегодняшние проблемы, повестка дня на завтра». Резюме доклада ВОЗ, 2009 г., էջ .4:
82. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:
83. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ, 2012:
84. Հայաստանի առողջապահության համակարգի գործունեության գնահատում/ Առողջապահության ազգային ինստիտուտ, 2012 թ.:

ձի քաղցկեղի կանխարգելման ուղղությամբ, այդուհանդերձ 2012 թ. տվյալներով, կանանց 85%-ը երբեք չի անցել մամոգրաֆիկական հետազոտություն: Վերջին երեք տարում մամոգրաֆիկական հետազոտություն է անցել կանանց ընդամենը 4,8%-ը, ընդ որում նրանց 60%-ը հետազոտվել է վճարովի հիմունքներով[85]: ***Կանանց շրջանում օնկոլոգիական հիվանդությունների ժամանակին բացահայտման և որակյալ բուժման խնդիրը շարունակում է մնալ առողջապահության առավել արդիական հիմնահարցերից մեկը:***

Հանրապետության կառավարությունը, հատուկ ուշադրություն հատկացնելով մայրության և մանկության պաշտպանությանը, մատչելի, իրապես անվճար ծննդաբերություն ապահովելու նպատակով 2008 թ. հուլիսին հաստատել է Ծննդօգնության պետական ծրագիրը, որի իրականացման համար պետական բյուջեից հատկացվել է լրացուցիչ 1 մլն դրամ, ինչպես նաև՝ մինչև 7 տարեկան երեխաների անձնագրավորման ծրագիրը, որն ապահովում է նրանց համար հիվանդանոցային բժշկական օգնության անվճար ցուցաբերումը՝ ողջ ծավալով: Այդ ծրագրերի արդյունավետ իրականացմանը նպաստել է ՀՀ առողջապահության նախարարության ակտիվ համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ, որոնք որոշակի ներդրում են ունեցել դրանց իրականացման մշտադիտարկման և ծրագրերի մասին բնակչության իրազեկության բարձրացման գործում:

Վերարտադրողական առողջության վիճակի կարևոր ցուցանիշ է մայրական և մանկական մահացությունը, որ Հայաստանում ԱՊՀ երկրների միջին ցուցանիշներից ցածր է, բայց զգալիորեն բարձր է, քան Եվրամիության երկրներում: Դրա հետ մեկտեղ վերջին տարիներին այդ ցուցանիշի բարելավման տեմպերը զգալիորեն նվազել են: 2012 թ., ՀՀ առողջապահության նախարարության տվյալներով, մայրական մահացությունը կազմել է 23,5 100000 կենդանածինների հաշվով, մանկական մահացության գործակիցը կազմել է 10,7 պրոմիլե:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը[86] վկայում է, որ չնայած ձեռնարկվող միջոցներին, կանանց վերարտադրողական առողջությունը վերջին տարիներին վատթարանում է: Ավելի հաճախ են հանդիպում հղիության և ծննդաբերության բարդությունները: Աճում է ինքնակամ աբորտների և բժշկական ցուցումներով աբորտների, վաղաժամ ծննդաբերությունների քանակը: Ծննդաբերության ընթացքում պահանջվում է վիրաբուժական միջամտություն 43%-ի դեպքում, որոնցից 22%-ը բաժին է ընկնում կեսարյան հատմանը:

Գնալով ավելի մեծ արդիականություն է ստանում կանանց չբերության խնդիրը, որը ներկայումս հանդիպում է երկու անգամ ավելի հաճախ, քան 5 տարի առաջ: Կանանց առողջության վիճակը վերաբերում է ոչ միայն իրենց՝ կանանց, այն ազդեցություն է ունենում հաջորդ սերնդի առողջության և զարգացման վրա: Հանրապետությունում աճում է վաղաժին երեխաների թիվը, որոնց հիվանդացությունը զգալիորեն բարձր է ժամանակին ծնված երեխաների համեմատ, 3 անգամ ավելի հաճախ են ախտորոշվում բնածին արատները, իսկ վերջին 10 տարում բնածին անոմալիաներով երեխաների թիվն ավելացել է գրեթե 5 անգամ:

Կանանց վերարտադրողական առողջության վատթարացման վրա ազդող կարևոր գործոն են աբորտները: Չնայած 2009-ից հետո նկատվում է աբորտների կիրառման տարածվածության ցուցանիշի որոշ նվազման միտում՝ 13,8-ից մինչև 12,0 ֆերտիլային տարիքի 1000 կնոջ հաշվով[87], այդուհանդերձ դրանք լայնորեն կիրառվում են որպես անցանկալի հղիությունից ազատվելու

85. Նույն տեղում:
86. ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտի Առողջապահության տեղեկատվական-վերլուծական հանրապետական կենտրոն, Վիճակագրական տարեգիրք. 2012 թ. ցուցանիշներ:
87. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012: Ազգային վիճակագրական ծառայություն:

միջոց: Ժամանակակից հորմոնալ հակաբեղմնավորիչները թանկության պատճառով մատչելի չեն Հայաստանի կանանց համար, 1000 կանանցից միայն 5-ն են օգտագործում դրանք[88]:

Հայաստանում արդիական հիմնախնդիր են սելեկտիվ աբորտները: 2011 թ. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) տարածքային գրասենյակի կողմից անցկացված հետազոտության արդյունքների համաձայն[89]՝ վերջին 20 տարում հանրապետությունում դիտվում է ծնված տղաների և աղջիկների հարաբերակցության շեղում ընդունված կենսաբանորեն պայմանավորված նորմից:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին երեխայի դեպքում տղա/աղջիկ հարաբերակցության գործակիցը կազմել է 1,04-1,07, ինչը համապատասխանում է կենսաբանորեն սահմանված միջին վիճակագրական ցուցանիշին (1,02-1,06): Սկսած երկրորդ երեխայից՝ նկատելի է ցուցանիշի բարձրացման միտում (1,08-1,13), սակայն այն ակնհայտորեն բարձր է երրորդ և չորրորդ երեխաների դեպքում, երբ տվյալ ցուցանիշը կազմել է 1,6 և 1,7:

Վերարտադրողական տարիքի կանանց համար հետզհետե ավելի մեծ վտանգ է ներկայացնում Հայաստանում տարածվող ՄԻԱՎ-ը: ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալներով՝ 2013 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ պաշտոնապես գրանցված է 1563 ՄԻԱՎ վարակակիր, այդ թվում 469 կին, որոնցից 206-ի մոտ ախտորոշված է ՁԻԱՀ, ընդ որում, կանանց շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածության աճի տեմպերը ավելի մեծ են, քան տղամարդկանց շրջանում. վերջին 5 տարվա ընթացքում վարակակիրների ընդհանուր թվում կանանց տոկոսը 24%-ից աճել է մինչև 30%: Վարակակիրների առավելագույն թիվը, նախորդ տարիների համեմատ, գրանցվել է 2012 թ. և կազմել 228 դեպք: Փաստորեն բոլոր կանայք (98,5%-ը) վարակվել են սեռական ճանապարհով: Հաշվարկված տվյալների համաձայն՝ Հայաստանում մոտ 3500 ՄԻԱՎ վարակակիր կա: Հիմնական խոցելի խումբը աշխատանքային միգրանտներն են: 2012 թ. նրանք կազմել են վարակակիրների 60%-ը:

«Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագրի» իրականացման ընթացքում ՀՀ առողջապահության նախարարությունն անցկացրել է կրթական ծրագրեր պերինատալ բուժօգնության, պտղի ներարգանդային գնահատման, զարգացման արատների վաղ բացահայտման, հղիության բարդությունների կանխարգելման ժամանակակից մոտեցումների վերաբերյալ ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայությունների, կանանց կոնսուլտացիաների բուժաշխատողների գիտելիքների խորացման ուղղությամբ: Մշակվել են մեթոդական ձեռնարկներ և պատրաստվել են մասնագետներ ընտանիքի պլանավորման ծառայություններում տեղեկատվական-կրթական ծրագրեր դասավանդելու համար:

«ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման 2013-2014 թթ. ազգային ծրագրի» շրջանակներում նույնպես նախատեսված են հատուկ միջոցառումներ կանանց և երիտասարդության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման կանխարգելման ուղղությամբ:

Մայրության և մանկության պաշտպանության հարցերի լուծման գործում զգալի ներդրում ունեն այդ ոլորտում աշխատող հասարակական կազմակերպությունները: 2010 թ. ստեղծված Մոր և երեխայի առողջության հասարակական դաշինքը միավորել է 45 ՀԿ-ների ռեսուրսներն ու ջանքերը, որոնք իրենց ծրագրերի շրջանակներում անցկացնում են տեղեկատվական և կրթական ծրագրեր բնակչության տարբեր շերտերի համար, նրանց հետազոտական

88. ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտի Առողջապահության տեղեկատվական-վերլուծական հանրապետական կենտրոն, Վիճակագրական տարեգիրք. 2012 թ. ցուցանիշներ:
89. http://www.unfpa.am/sites/default/files/Sex-selective_abortions_report_Arm.pdf

ծրագրերը նպաստում են ճյուղի կենսական հիմնախնդիրների բացահայտմանը: Ավելին, բոլոր կազմակերպությունների համակարգված գործողությունների շնորհիվ դաշինքը որոշակի ազդեցություն է գործում առողջապահության ոլորտում իրականացվող քաղաքականության վրա: Այսպես, ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի և ՀՀ առողջապահության նախարարության հետ սերտ համագործակցությամբ մշակվել և 2013 թ. երկրորդ ընթերցմամբ ընդունվել է «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքը, առաջարկություններ են արվել առողջապահության ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների վերաբերյալ:

Այսուհանդերձ վերարտադրողական առողջության ուսումնասիրությունը վկայում է, որ դրա հետագա բարելավումը կախված է ոչ այնքան առողջապահության համակարգի վիճակից, որքան կանանց ընդհանուր առողջության վիճակից, նրանց բարեկեցությունից, կյանքի սոցիալական պայմաններից, սննդի լիարժեքությունից, առողջ կենսակերպից և սեռական դաստիարակությունից: Այդ հարցերի լուծումը հնարավոր է միայն պետական իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների ջանքերի միավորման դեպքում:

Հասարակական կազմակերպություններն ընդգրկված են և ակտիվ մասնակցություն են ունենում նաև «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի» իրականացման և մշտադիտարկման գործում: Այդ ոլորտի բազմաթիվ ՀԿ-ներն աշխատում են բոլոր խոցելի, մարգինալ, ռիսկի խմբերի հետ, հոգեբանական օգնություն և խնամքի աջակցություն են ցուցաբերում ՄԻԱՎ վարակակիր քաղաքացիներին:

Երաշխավորություններ

ՀՀ Ազգային ժողովին.

- *արագացնել «Բժշկական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումը:*

ՀՀ կառավարությանը.

– *«ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում նախատեսել առողջապահության ֆինանսավորման արմատական ավելացում՝ հասցնելով այն 2015 թ. մինչև ՀՆԱ-ի 3%-ը, հետագայում՝ փուլ առ փուլ բարձրացնելով մինչև ՀՆԱ-ի 5%-ը, ինչպես երաշխավորում է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ճյուղի բնականոն գործառության համար,*
– *ավելացնել ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության ամրապնդմանն ու զարգացմանը և առաջնային օղակի բուժանձնակազմի աշխատանքի արժանավայել վարձատրության ապահովմանն ուղղված ֆինանսավորման ծավալները:*

ՀՀ առողջապահության նախարարությանը.

– *ձեռնարկել գործուն միջոցներ բնակչության սոցիալապես չպաշտպանված շերտերի համար որակյալ բժշկական օգնության մատչելիության ապահովմանն ուղղված պետական ֆինանսավորման նպատակային օգտագործման ուղղությամբ,*
– *մշակել բժշկական կադրերի պատրաստման քաղաքականություն՝ հաշվի առնելով ճյուղի իրական կարիքները և կադրային ռեսուրսների կենտրոնացված կառավարումը՝*

ուղղված քաղաքային և գյուղական բնակավայրերի որակյալ բժշկական կադրերով ապահովվածության անհավասարակշռության հաղթահարմանը,

- *ապահովել առավել բարձր մահացության հանգեցնող չարորակ նորագոյացությունների ազգային ծրագրի իրականացման արդյունավետությունը՝ նախատեսելով պետպատվերի շրջանակներում կանանց պարբերական պրոֆիլակտիկ զննումներ՝ ուղղված վաղ փուլերում նորագոյացությունների բացահայտմանն ու բուժմանը,*
- *հասարակական կազմակերպությունների հետ համատեղ ակտիվացնել առողջ կենսակերպի քարոզչությանը, վերարտադրողական առողջության պրոֆիլակտիկային ուղղված աշխատանքը՝ հատուկ ուշադրություն հատկացնելով ընտանիքի պլանավորման և Հայաստանի համար սելեկտիվ աբորտների ժողովրդագրական հետևանքների մասին երիտասարդության իրազեկության բարձրացմանը:*

Հոդված 13

Սոցիալական և տնտեսական նպաստներ

Հիմնախնդիրները.

– *Անապահով ընտանիքների սոցիալական ապահովման ցածր մակարդակը:*
– *Կանանց համար ֆինանսական վարկերի ցածր մատչելիությունը:*

Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումներում տվյալ հոդվածին անդրադարձ չի արվել:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հանձնարարականները

Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը տնտեսական և սոցիալական կյանքի մյուս բնագավառներում, որպեսզի տղամարդկանց ու կանանց հավասարության հիման վրա ապահովվեն միևնույն իրավունքները, մասնավորապես.

ա) ընտանեկան նպաստների իրավունքը,

բ) բանկային փոխառություններ, անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր և այլ ձևի ֆինանսական վարկեր ստանալու իրավունքը,

գ) հանգստի հետ կապված միջոցառումներին, սպորտի և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում մասնակցելու իրավունքը:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հանձնարարականների համատեքստում

ա) Ընտանեկան նպաստների իրավունքը

Հայաստանում սոցիալական օգնության տրամադրումը կարգավորվում է 2005 թ. հոկտեմբերի 24-ին ընդունված «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի՝ սահմանված են պետական նպաստների հետևյալ տեսակները.

ա) ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն.

բ) երեխայի խնամքի նպաստ.

գ) երեխայի ծննդյան միանվագ նպաստ.

դ) զոհվածի՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստ:

Օրենքը չի բովանդակում կանանց նկատմամբ խտրական նորմեր: Ընտանեկան նպաստ ստանալու համար սոցիալական ծառայությունների մարմիններ կարող է դիմել ընտանիքի չափահաս անդամներից մեկը՝ ընտանիքի մյուս չափահաս անդամների համաձայնությամբ:

Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքների թիվը 2007-2011 թթ. անընդմեջ նվազել է 136917-ից մինչև 96358: 2011 թ. հետո Հայաստանում, աղքատության մակարդակի աճին զուգընթաց, ավելացել է պետական նպաստի կարիք ունեցողների

թիվը: 2013 թ. հուլիսի 1-ի դրությամբ նպաստ էր ստանում 114 005 ընտանիք, որոնք կազմված էին 418002 անդամներից, ինչը կազմում է հանրապետության ողջ բնակչության 14%-ը: Կանայք կազմում էին նպաստառուների ընդհանուր թվի 57,5%-ը[90]:

Ամսական նպաստի միջին չափը՝ մեկ ընտանիքի հաշվով, մեծացել է՝ 2007 թ. 17500 դրամից 2011 թ. հասնելով 26853 դրամի[91], այդուհանդերձ այդ չափի դրամական օգնությունը սոսկ մասամբ է լուծում անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացման խնդիրը՝ ապահովելով նվազագույն սպառողական զամբյուղի նվազ, քան 50%-ը:

Անկախ սոցիալական և նյութական դրությունից՝ ընտանիքը Հայաստանում յուրաքանչյուր ծնված երեխայի համար պետական աջակցման իրավունք ունի: 2013 թ. միանվագ նպաստը առաջին և երկրորդ երեխայի համար կազմել է 50000 դրամ (125$), իսկ սկսած երրորդ երեխայից՝ 430000 դրամ (1000$):

Ծնողներից մեկը, որն աշխատավայրում ձևակերպում է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդ, նպաստ ստանալու իրավունք ունի, որը վճարվում է ամսական 18000 դրամի (45$) չափով, ինչն այսօրվա պայմաններում հատուցում է հանրապետությունում 35000 դրամ սահմանված նվազագույն աշխատավարձի կեսից քիչ ավելին: Նպաստը նախատեսված է ոչ թե երեխայի խնամքի ողջ ժամանակաշրջանի համար, այլ միայն մինչև երեխայի երկու տարին լրանալը: Երեխայի խնամքի համար նպաստի ցածր մակարդակը էական վնաս է հասցնում ընտանեկան բյուջեին: Առանձնակի ծանր նյութական վիճակում են հայտնվում միայնակ մայրերը, որոնց համար Հայաստանի օրենսդրությունում որևէ լրացուցիչ արտոնություն և երաշխիք նախատեսված չէ:

Այն կանայք, որոնք ավանդաբար խնամում են երեխաներին, կենսաթոշակային տարիքում հայտնվում են տղամարդկանց հետ ոչ հավասար պայմաններում, քանի որ կենսաթոշակ նշանակելիս աշխատանքի ստաժում հաշվառվում է յուրաքանչյուր երեխայի խնամքի համար արձակուրդի միայն երկու տարին և ընդհանուր առմամբ ոչ ավելի, քան 6 տարի: Արդյունքում կենսաթոշակի տարիքին հասնելիս կանանց աշխատանքային ստաժը, տղամարդկանց համեմատ ավելի քիչ է լինում, և համապատասխանաբար ցածր է կենսաթոշակի չափը, որը հաշվարկվում է աշխատանքային ստաժի հաշվառմամբ: Այսպես, 2012 թ. ավելի քան 26 տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում կանանց աշխատանքային կենսաթոշակը կազմել է միջինը 33 214 դրամ, իսկ տղամարդկանց համար՝ 37423 դրամ:

2010 թ. ընդունված «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքը որոշ չափով սահմանափակել է աշխատող քաղաքացիների սոցիալական երաշխիքները: Ի տարբերություն մինչև 2010 թ. գործող օրենքի՝ հիվանդության առաջին օրը չի վարձատրվում, նպաստը տրվում է՝ սկսած ժամանակավոր անաշխատունակության երկրորդ օրվանից, ընդ որում երկրորդ, երրորդ և չորրորդ օրերը վճարվում են գործատուի միջոցների հաշվին, հինգերորդ օրվանից նպաստը տրվում է պետական բյուջեի հաշվին:

Նախատեսված էին նաև նպաստի առավելագույն չափի սահմանափակումներ՝ ոչ ավելի, քան հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը: Եվ միայն շնորհիվ կանանց հասարակական կազմակերպությունների համակարգված և հետևողական գործողությունների, որոնք հիմնավորեցին կանանց նկատմամբ առաջարկվող

90. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թվականի հունվար-դեկտեմբերին», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-հուլիսին», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:
91. Նույն տեղում:

փոփոխությունների խտրական բնույթը և դրանց անհամապատասխանությունը Եվրոպական սոցիալական խարտիային, հաջողվեց հասնել այն բանին, որ հղիության և ծննդաբերության հետ կապված ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարվի առանց սահմանափակումների, միջին ամսական աշխատավարձի չափով՝ սկսած առաջին օրվանից, սահմանված մինչծննդաբերական և հետծննդաբերական արձակուրդի բոլոր օրերի համար՝ ընդհանուր առմամբ 140 օր նորմալ ծննդաբերության, 150 օր՝ բարդ ծննդաբերության և 180 օր՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Ընդ որում, եթե միջին ամսական եկամուտը ցածր է սահմանված նվազագույն աշխատավարձից, ապա հղիության և ծննդաբերության նպաստը ավելանում է և վճարվում նվազագույն աշխատավարձի չափով:

Ծանր վիճակում են գյուղաբնակ կանայք, որոնց ճնշող մեծամասնությունը աշխատում է օժանդակ տնտեսությունում, նրանց աշխատանքը չի հաշվառվում կենսաթոշակներ և հիվանդության կամ երեխայի ծնվելու հետ կապված ժամանակավոր անաշխատունակության նպաստներ նշանակելիս, նրանց համար նախատեսված չեն նաև երեխաների խնամքի համար նպաստներ:

Գյուղաբնակ կանայք ընդհանուր հիմունքներով օգտվում են միայն յուրաքանչյուր ծնված երեխայի համար տրվող միանվագ նպաստ և աղքատության հետ կապված ընտանեկան նպաստ ստանալու իրավունքից:

բ) Բանկային փոխառություններ, անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր և այլ կարգի ֆինանսական վարկեր ստանալու իրավունքը

Հայաստանում տղամարդիկ և կանայք փոխառություններ, անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր և այլ ձևի ֆինանսական վարկեր ստանալու հավասար իրավունք ունեն[92]: Իրականում, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, վարկային ֆինանսավորման բարձր տոկոսադրույքնե-րի պատճառով, հատկապես գյուղատնտեսության մեջ, անշարժ գույքի գրավադրմամբ վարկ ձևակերպելու անհրաժեշտության դեպքում կանայք աշխատավարձի ավելի ցածր մակարդակի պատճառով այդ իրավունքն իրականացնելու ավելի սահմանափակ հնարավորություններ ունեն, քան տղամարդիկ. կանանց միջին աշխատավարձը կազմում է տղամարդկանց միջին աշխատավարձի 63%-ը: Կանայք հաճախ բանկում գրավադրման համար պահանջվող անշարժ գույքը չունեն, քանի որ հայ ընտանիքներում ավանդաբար սեփականությունը ձևակերպվում է տղամարդու անունով: Հաճախ ցածր աշխատավարձի պատճառով կանայք զրկվում են նույնիսկ սովորական կենցաղային տեխնիկան ապառիկ ձեռք բերելու հնարավորությունից:

գ) Հանգստի հետ կապված միջոցառումներին, սպորտի և մշակութային կյանքի բոլոր ոլորտներին մասնակցելու իրավունքը

Հանրապետության բոլոր քաղաքացիներն օգտվում են հանգստի, սպորտով զբաղվելու, մշակութային-զվարճալի ծրագրերին և միջոցառումներին մասնակցելու իրավունքից: Սակայն շուկայական տնտեսության անցման հետևանքով հանրապետությունում բոլոր օբյեկտները, որոնք նախատեսված են սպորտով զբաղվելու, հանգստի, առողջարանային բուժման համար, սեփականաշնորհվել և վճարովի համակարգի են անցել: Երևանում, Հայաստանի առողջարանային գոտիներում կառուցվել են բազմաթիվ էլիտար պանսիոնատներ և հյուրանոցներ, մարզասրահներ ու հրապարակներ, լողավազաններ, որոնցից օգտվելու վճարը մատչելի է բնակչության, այդ թվում կանանց սոսկ սահմանափակ շերտին:

92. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք, 2008 թ.:

Մշակույթի, զվարճանքի և հանգստի ոլորտում տրամադրվող ծառայությունների ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով վերջին տարիներին 6662 դրամից աճել է մինչև 17248 դրամ, այսինքն՝ 2,6 անգամ[93], ընդ որում այդ ոլորտներում ծառայությունների ֆիզիկական ծավալի ինդեքսը 2012 թ., 2011 թվականի համեմատ, աճել է 163,3%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանում թանգարանների թիվը 96-ից աճել է մինչև 99, դրանց հաճախումների քանակը մեծացել է ավելի քան 2,5 անգամ: Բացվել է երկու նոր թատրոն՝ դրամատիկական և պատանի հանդիսատեսի: Երկրում գործում է 28 թատրոն, որոնց հաճախումների քանակը աճել է տարեկան 54 հազարով:

2013 թ. սկզբի դրությամբ Հայաստանում գործել է 948 գրադարան, ինչը 90 միավորով քիչ է, քան 2007 թ. (1038): Ընդ որում, գրքային ֆոնդը գործնականում չի փոխվել և ապահովվածությունը կազմում է 5889 օրինակ 1000 բնակչի հաշվով[94]: Գրադարանների հաճախումների թիվը վերջին 3 տարում որոշ չափով ավելացել է. յուրաքանչյուր երկրորդ բնակիչ տարին մեկ անգամ գրադարան է հաճախում, ընդսմին բոլոր հաճախումների 60%-ը բաժին է ընկնում կանանց[95]:

Դրա հետ մեկտեղ թատրոնների, համերգների և մշակութային այլ միջոցառումների տոմսերի չափազանց բարձր գները սահմանափակում են այդ ոլորտում կանանց մասնակցությունը մշակութային կյանքին:

Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

- *անապահով ընտանիքների պետական նպաստների չափը հասցնել նվազագույն սպառողական զամբյուղի իրական արժեքին,*
- *մեծացնել երեխայի խնամքի համար նպաստի չափը՝ նախատեսելով դրա վճարումը երեխայի խնամքի համար արձակուրդի ողջ ընթացքում,*
- *նախատեսել լրացուցիչ սոցիալական արտոնություններ բազմազավակ ընտանիքների և միայնակ մայրերի համար,*
- *ձեռնարկել միջոցներ՝ ուղղված օժանդակ տնտեսությունում աշխատող գյուղաբնակ կանանց համար սոցիալական արտոնությունների ընդլայնմանը,*
- *մշակել հատուկ միջոցառումներ՝ ուղղված օժանդակ տնտեսությունում աշխատող գյուղաբնակ կանանց հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի համար պետական նպաստներով ապահովմանը,*
- *հաշվի առնել օժանդակ տնտեսությունում գյուղաբնակ կանանց աշխատանքը կենսաթոշակ ստանալու համար ստաժը հաշվարկելիս,*
- *ձեռնարկել միջոցներ կանանց՝ փոխառություններ, վարկեր և այլ ֆինանսական վարկեր ստանալու հնարավորություններն ընդլայնելու ուղղությամբ,*
- *որպես ժամանակավոր միջոց նախատեսել առանձին ծրագրեր՝ ուղղված կանանց արտոնյալ պայմաններով փոխառությունների և վարկերի տրամադրմանը,*
- *ընդլայնել թատրոններում, թանգարաններում «բաց դռների օրեր» անցկացնելու և զանգվածային մշակութային ու սպորտային միջոցառումներ կազմակերպելու գործելակերպը:*

93. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013:
94. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012:
95. Հայաստանի կանայք և տղամարդիկ 2012, Երևան, 2012 , www.armstat.am/file/article/gender_2012.pdf

Հոդված 14

Գյուղաբնակ կանանց նկատմամբ խտրականության վերացումը

Հիմնախնդիրները.

- *Կանանց ցածր ներկայացվածությունը որոշումների ընդունման մակարդակում տեղական ինքնակառավարման մարմիններում և կոոպերատիվների ղեկավարության կազմում:*
- *Գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքի և կենցաղի անբարենպաստ պայմանները:*
- *Վարկերի և ռեսուրսների սահմանափակ մատչելիությունը:*
- *Անիրազեկությունը աշխատանքային իրավունքների վերաբերյալ:*
- *Առողջապահության և միջնակարգ կրթության ծառայությունների ցածր հասանելիությունը:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[96]

Կոմիտեն նշում է կանանց խոցելի խմբերի՝ հատկապես գյուղաբնակ… կանանց վերաբերյալ տեղեկատվության և վիճակագրական տվյալների բացակայությունը, որոնք հաճախ ենթարկվում են խտրականության տարբեր ձևերի, մասնավորապես՝ զբաղվածության, առողջապահության, կրթության ու սոցիալական նպաստների հասանելիության տեսանկյունից:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[97]

– Կոմիտեն խնդրում է մասնակից պետությանն իր հաջորդ զեկույցում համապարփակ ներկայացնել Կոնվենցիայով նախատեսված բոլոր ոլորտներում խոցելի կանանց փաստացի վիճակը, ինչպես նաև տրամադրել տեղեկատվություն կոնկրետ ծրագրերի և ձեռքբերումների մասին:

– Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը գենդերայնորեն տարբերակված քաղաքականություն և ծրագրեր ընդունել, որոնք նկատի ունենան կանանց խոցելի խմբերի առանձնահատուկ կարիքները:

Հայաստանի ներկայացրած համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ խտրականության վերացման կապակցությամբ առանցքային հիմնախնդիրների վերլուծություն Կոմիտեի հանձնարարականների համատեքստում

ՀՀ կառավարությունը 2011 թ. Եվրոպական հարևանության ծրագրի շրջանակներում ընդունել է «Ազգային ինդիկատիվ ծրագիր 2011-2013», որտեղ նախատեսվում է ավելացնել կանանց մասնակցությունը գյուղերի զարգացմանը[98]:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով (19 հոկտեմբերի 2012 թ.) հաստատվել է «Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ» մեթոդական

96. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 36:
97. Նույն տեղում, կետ 37:
98. Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք: Ազգային ինդիկատիվ ծրագիր 2011-2013, Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի հանրապետությունների տնօրինություն, էջ 28: Գյուղական զարգացմանը բոլոր խմբերի, այդ թվում կանանց մասնակցության ավելացում:

ձեռնարկը, որում առանձնացված են զգայուն գենդերային ցուցիչները, որոնք պետք է հաշվի առնվեն վիճակագրության և պլանավորման մեջ գյուղատնտեսության ոլորտում իրավիճակի գնահատման նպատակով, մասնավորապես՝ գյուղական մշտական բնակչության թվաքանակը՝ ըստ սեռի, գյուղական տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողների թվաքանակը՝ ըստ սեռի և պաշտոնների, գյուղական համայնքներում կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների թվաքանակը, գյուղական համայնքներում դրամական եկամուտների միջին ամսական չափը մեկ շնչի հաշվով՝ ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, գյուղատնտեսությունում զբաղված կանանց և տղամարդկանց տեսակարար կշիռը տոկոսներով, գյուղատնտեսությունում կանանց և տղամարդկանց միջին ամսական անվանական աշխատավարձը, գյուղատնտեսությունում կանանց և տղամարդկանց միջին ամսական եկամուտը և այլն:

Կառավարության կողմից ընդունված այլ ռազմավարությունները և ծրագրերը գյուղի և գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ («Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարությունը», «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»), մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը գենդերային տեսանկյունից չեզոք են:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 31-ի թիվ 349 որոշման՝ հանրապետությունում իրականացվում են գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրեր: 2011 թ. ապրիլի 1-ից մինչև 2013 թ. հունիսի 30-ը տրամադրվել է ընդհանուր առմամբ 44,1 մլրդ դրամի 53,8 հազար միավոր վարկ, դրանց մոտավորապես 15%-ը տրվել է կանանց:

Գյուղատնտեսության ոլորտում զբաղված է հանրապետության աշխատանքային ռեսուրսների 45%-ը, այսինքն՝ մոտավորապես 500000 մարդ, որոնց թվում կանայք կազմում են 56,2%[99], ընդ որում գյուղաբնակ կանայք կազմում են հանրապետության աշխատող կանանց թվի 45,5%-ը:

Գյուղական բնակավայրերում կանայք գլխավորում են տնային տնտեսությունների 26%-ը[100], և պատճառը հիմնականում տղամարդկանց արտագաղթի բարձր մակարդակն է: Այդ ընտանիքների եկամուտների միջին մակարդակը՝ մեկ շնչի հաշվով (ամսական 19980 դրամ[101]), զգալի չափով զիջում է տղամարդու գլխավորությամբ ընտանիքների եկամուտների մակարդակին (ամսական 33685 դրամ[102]):

2012 թ. հուլիսի դրությամբ Հայաստանում գործում էր 340000 ֆերմերային տնտեսություն: Գյուղատնտեսությունում կանանց եկամուտների մակարդակը կազմում է տղամարդկանց եկամուտների 58,3%-ը: Չնայած գյուղաբնակ կանայք Հայաստանում բարձր կրթական մակարդակ ունեն, հաճախ պակասում են անհրաժեշտ ագրոնոմիական և մարքետինգային գիտելիքները ֆերմերային տնտեսությունն արդյունավետ կառավարելու համար, նրանք չեն տիրապետում հաշվապահական հաշվառման հմտություններին: Կանայք հաճախ տեղյակ չեն իրականացվող բարեփոխումներին, գյուղատնտեսական նորարարություններին և պետական աջակցման, ամենագլխավորը՝ իրենց ձեռնարկատիրական գործունեության սկզբնական փուլում զգայուն գենդերային հարկային քաղաքականության կարիք ունեն:

99. Հայաստանի կանայք և տղամարդիկ 2012. Վիճակագրական գրքույկ, Երևան, 2012: www.armstat.am/file/article/gender_2012.pdf
100. Նույն տեղում, էջ .64: www.armstat.am/file/article/gender_2012.pdf
101. Դա կազմում է ամսական մոտ 50 ԱՄՆ դոլար:
102. Հայաստանի կանայք և տղամարդիկ 2012. Վիճակագրական գրքույկ, Երևան, 2012:

Հանրակրթության համակարգի վերակազմավորման հետևանքով գյուղաբնակ կանանց կրթական մակարդակի նվազման վտանգ է առաջացել: Ոչ բոլոր գյուղերում են գործում ավագ դպրոցներ: Գյուղերի միջև կանոնավոր տրանսպորտային երթևեկության բացակայության պայմաններում աղջիկների ուսումն ավագ դպրոցում միշտ չէ, որ իրականանալի է, և դա կարող է հանգեցնել գյուղաբնակ աղջիկների կրթական մակարդակի անկման ոչ միայն միջնակարգ, այլև բարձրագույն դպրոցում: Աղջիկների կրթական մակարդակի բարձրացման խոչընդոտ է նաև բնակչության աղքատության բարձր մակարդակը, որի պայմաններում սովորողները կամ նրանց ծնողները չեն կարող վճարել բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսման համար:

Գյուղական վայրերում վատ են լուծվում մասնագիտական որակավորման բարձրացման խնդիրները: Հանրապետության որոշ մարզերում միջազգային կազմակերպությունների ուժերով (Heifer International, Save the Children, WorldVision, OXFAM և այլն) անցկացվում են սեմինարներ՝ ուղղված գյուղի բնակիչների իրավական իրազեկության բարձրացմանը, իրականացվում են ծրագրեր գյուղական կոոպերատիվներին գյուղտեխնիկա և այլ սարքավորում տրամադրելու ուղղությամբ: OXFAM կազմակերպությունը մարզային և համայնքային կառույցների հետ համագործակցությամբ կազմակերպում են դաշտային դպրոցներ, որոնց կանայք ակտիվորեն մասնակցում են: Սակայն ընդհանուր առմամբ հանրապետության գյուղական վայրերում ներդրված չեն կանանց մասնագիտական ուսուցման ծրագրեր, մշակված չեն կյանքի ողջ ընթացքում կանանց մասնագիտական որակավորման բարձրացման շարունակականությունն ապահովող մեխանիզմներ՝ աշխատաշուկայում նրանց մրցունակությունը բարձրացնելու նպատակով:

Գյուղատնտեսական ծառայությունները Հայաստանում աչքի չեն ընկնում լայն ընտրությամբ: Գյուղի բնակիչները գրեթե չեն օգտվում հանքային պարարտանյութերի մատակարարման, ագրոսպասարկման, գյուղմթերքը հատուկ սառնարանային խցիկներում պահպանելու ծառայություններից, առանձնապես սուր է դրված ոռոգման համակարգերի կառուցման կամ վերակառուցման հարցը: Համայնքային բյուջեների միջոցներով հնարավոր չէ լուծել նշված հիմնախնդիրները: Այդ ամենը զգալի չափով բարդացնում է գյուղի բնակիչների կյանքը, հատկապես՝ կանանց, որոնք կրկնակի՝ ընտանեկան և աշխատանքային ծանրաբեռնվածություն ունեն:

Ամուր ծածկով ճանապարհների բացակայությունը, ոռոգման համակարգի ոչ բավարար զարգացումը, իրացման շուկաների հեռավորությունը սահմանափակում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունից և իրացումից լրացուցիչ իրական եկամուտներ ստանալու հնարավորությունները: Փոքր մեխանիզացիայի բացակայության և տեխնիկական սպասարկման ծառայությունների թանկության պատճառով գյուղատնտեսական աշխատանքների մեծ մասը ձեռքով է կատարվում: Կանայք հաճախ ծանր ֆիզիկական աշխատանք են կատարում և աշխատում են այնպիսի պայմաններում, որոնք անդառնալի վնաս են հասցնում նրանց առողջությանը:

Ենթակառուցվածքի զարգացածության ցածր մակարդակը զգալի չափով դժվարացնում է գյուղաբնակ կանանց կյանքը: Գյուղական բնակավայրերի հեռավորությունը հիվանդանոցներից և անբավարար զարգացած տրանսպորտը էապես նվազեցնում են գյուղաբնակ կանանց համար որակյալ բժշկական սպասարկման մատչելիությունը: Գյուղական տնային տնտեսությունների միջին հեռավորությունը հիվանդանոցից կազմում է 12 կմ, դեղատնից՝ 8,1 կմ, գյուղապետարանից՝ 0,7 կմ, մանկապարտեզից՝ 4,9 կմ, միջնակարգ դպրոցից՝ 0,9 կմ,

գյուղմթերքների իրացման շուկաներից՝ 17,3 կմ և բանկերից/ֆինանսական ծառայություններից՝ 12,9 կմ[103]:

Գյուղի բնակիչները, այդ թվում կանայք, հիմնականում չեն օգտվում սոցիալական ապահովագրության ծրագրերից դրանց բացակայության կամ ցածր իրազեկության պատճառով: Իրենց հողակտորի վրա աշխատող կանայք չեն ստանում հղիության և ծննդաբերության նպաստներ, հիվանդ երեխաների խնամքի նպաստներ և չեն օգտվում այլ սոցիալական ծառայություններից ու երաշխիքներից:

Գյուղական տնային տնտեսությունների միայն 17,8%-ն ունի միաժամանակ խոհանոց, սառը ջուր, զուգարան կոյուղիով և լողասենյակ[104]: Խմելու ջրի ոչ բավարար մատչելիությունը լրջորեն բարդացնում է գյուղաբնակ կանանց կյանքը, տնային տնտեսությունը վարելու դժվարություններ ստեղծում:

Ստորև՝ աղյուսակում, ներկայացվում է 2011 թ. խմելու ջրի մատչելիությունը տնային տնտեսությունների համար՝ 2004 թ. համեմատությամբ[105]:

տոկոսներով

Ջրի հիմնական աղբյուրը	Ընդամենը հանրապետությունում		Քաղաքային բնակավայրերում		Գյուղական բնակավայրերում	
	2004 թ.	2011 թ.	2004 թ.	2011 թ.	2004 թ.	2011 թ.
Կենտրոնացված ջրամատակարարում	88.9	97.5	96.5	99.5	74.0	93.7
Ոչ ավելի քան 1 ժամ	1.6	0.1	1.6	0.1	1.6	0.1
1-5 ժամ	39.5	18.6	40.9	16.4	36.0	23.3
6-12 ժամ	21.5	22.6	22.5	24.0	19.0	19.6
13-23 ժամ	4.5	5.5	5.2	5.3	2.8	5.8
24 ժամ	32.9	53.2	29.8	54.2	40.6	51.2
Ջրամատակարարման սեփական համակարգ	2.6	1.1	0.2	0.4	7.3	2.5
Բերովի ջուր	4.5	0.0	2.3	0.0	9.0	0.0
Այլ աղբյուրներ	0.2	0.1	0.1	0.0	0.3	0.1

Ինչպես երևում է աղյուսակից, տնային տնտեսությունների համար խմելու ջրի մատչելիության աճի դրական շարժընթաց կա: Աճում է շուրջօրյա կենտրոնացված ջրամատակարարման մատչելիությունը, նվազում է ջրամատակարարման այլընտրանքային աղբյուրներից օգտվող տնային տնտեսությունների տոկոսը: Այսուհանդերձ կենտրոնացված ջրամատակարարումը դեռևս լիովին չի ապահովում բնակչության կարիքները:

Կանայք գործնականում ներգրավված չեն իրենց գյուղերի զարգացման պլանների մշակման և իրականացման գործընթացներում: Կանանց և տղամարդկանց միջև հավասարության

103. Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն, ԱՎԾ, 2012: http://www.armstat.am/am/?nid=82&id=1301
104. Տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտություն, ԱՎԾ , 2012:
105. Հայաստանի կանայք և տղամարդիկ 2012. Վիճակագրական գրքույկ. Երևան, 2012: www.armstat.am/file/article/gender_2012.pdf, էջ 44

հաստատմանը խանգարում է կանանց խիստ ցածր ներկայացվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում: 866 գյուղական համայնքներից միայն 20-ն են ղեկավարում կանայք: Գյուղական տեղական ինքնակառավարման մարմիններում ցածր ներկայացվածության պատճառով կանայք պատշաճ չափով ներգրավված չեն իրենց գյուղերի զարգացման պլանների մշակման և իրականացման գործընթացներում:

Հայաստանում գյուղատնտեսական կոոպերացիան կայացման փուլում է: Ֆերմերների նախաձեռնությամբ ստեղծվել են կաթնամթերք, միրգ և բանջարեղեն, ինչպես նաև այլ գյուղմթերք արտադրող 109 գյուղատնտեսական կոոպերատիվներ[106]:

Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ հանրապետության վեց մարզերում ստեղծվել են 67 սպառողական կոոպերատիվներ՝ «Համայնքի արոտօգտագործողների միավորում»: Չնայած կանայք կարևոր դեր են խաղում գյուղատնտեսական արտադրանքի արտադրության գործում, քիչ են ներկայացված կոոպերատիվների ղեկավարության կազմում:

Հայաստանում կոոպերացման զարգացմանը նպաստում են միջազգային կազմակերպությունների ծրագրերը, որոնց քաղաքականության կարևոր բաղադրիչն է գենդերային հավասարության սկզբունքների պահպանումը: Այդ ուղղությամբ ակտիվ աշխատանք է իրականացնում բրիտանական OXFAM կազմակերպությունը տեղական ինքնակառավարման մարմինների և մարզային կառույցների հետ գործընկերության պայմաններում: Այն նպաստում է գյուղատնտեսական կոոպերատիվների և ֆերմերների դպրոցների բացմանը Տավուշի և Վայոց ձորի մարզերում: OXFAM կազմակերպության աջակցությամբ Կապանի մանր ֆերմերների ասոցիացիան իրականացնում է ֆերմերային տնտեսությունների զարգացման ծրագիր, որտեղ կարևոր տեղ է զբաղեցնում գենդերային բաղադրիչը: Ասոցիացիան անցկացնում է գենդերային հիմնախնդիրներին նվիրված թրենինգներ, մշակում է կանանց հմտությունների զարգացման, ֆերմերային տնտեսության վարման ծրագրեր, նպաստում տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ընտրությանը: Վայոց ձորի մարզում ստեղծվել են կանանց առաջին կոոպերատիվները:

Ֆերմերային տնտեսությունների կենսական խնդիրների լուծմանն աջակցում են հասարակական կազմակերպությունները՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայկական կոմիտեն, Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ն (AWHHE), «Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության ՀԿ-ն, Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիան, «Շեն», «Հաղթանակի երիտասարդ ֆերմերներ», «Ֆերմերների կողքին» և այլ հասարակական կազմակերպություններ:

Գյուղատնտեսական միությունների դաշնությունը, Ֆերմերների ազգային միությունը, Միս արտադրողների միությունը, Կաթ արտադրողների միությունը, Ջերմոցային տնտեսությունների միությունը մասնագիտական և տեղեկատվական զգալի աջակցություն են ցուցաբերում ֆերմերներին: Իրականացվող ծրագրերի շրջանակներում հասարակական կազմակերպությունները նպաստում են նաև գենդերային հավասարության գաղափարների տարածմանը:

106. Եվրոպական Միության Հարևանության ծրագիր: Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ոլորտների գնահատումն Արևելյան գործընկերության երկրներում, ՊԳԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ, 2012, էջ 47:

Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

– *ձեռնարկել միջոցներ գյուղատնտեսության ոլորտում աշխատող կանանց համար սոցիալական երաշխիքների ընդլայնման ուղղությամբ,*

– *մշակել և իրականացնել հատուկ ծրագրեր՝ գյուղաբնակ կանանց արտոնյալ պայմաններով միկրովարկեր և գյուղտեխնիկա տրամադրելու ուղղությամբ,*

– *բարձրացնել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը գյուղական բնակավայրերում տրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման համար:*

ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը.

– *գյուղատնտեսական կոոպերացման զարգացման խթանումն իրականացնել գենդերային բաղադրիչի ապահովման հաշվառմամբ,*

– *անցկացնել գյուղատնտեսությանն առնչվող բոլոր փաստաթղթերի գենդերային վերլուծություն,*

– *ավելի լայն ներդնել գենդերային մոտեցումը բոլոր գյուղատնտեսական ծրագրերում:*

ՀՀ առողջապահության նախարարությանը.

- *ստեղծել շրջիկ ամբուլատորիաներ հեռավոր և դժվար հասանելի գյուղերում բժշկական օգնություն ցուցաբերելու համար,*

- *աշխատանք տանել աշխատանքի և առողջության պահպանման ոլորտում գյուղաբնակ կանանց իրավական իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ:*

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը.

- *պահպանել միջնակարգ դպրոցներն այն գյուղերում, որտեղ բացակայում է կանոնավոր տրանսպորտային երթևեկությունը գյուղերի միջև,*

- *գյուղատնտեսական արտադրությունում զբաղված տղաների և աղջիկների համար լրիվ միջնակարգ կրթություն ստանալու հնարավորություն ապահովելու նպատակով քննարկել գյուղաբնակ երիտասարդության սեզոնային դպրոցներ բացելու հարցը,*

- *ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ մշակել և իրականացնել հատուկ ծրագրեր՝ ուղղված գյուղաբնակ երիտասարդության գյուղատնտեսական գիտելիքների մակարդակի բարձրացմանը,*

- *գյուղական հանրակրթական դպրոցների բարձր դասարանների ծրագրերում ընդգրկել հատուկ առարկաներ ֆերմերային տնտեսության վարման հիմունքների մասին:*

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը.

- *ձեռնարկել միջոցներ ճանապարհների բարեկարգման և գյուղական բնակավայրերի միջև տրանսպորտային երթևեկության բարելավման ուղղությամբ:*

Հասարակական կազմակերպություններին.

– *իրականացնել ծրագրեր՝ ուղղված ֆերմերային տնտեսության վարման նոր տեխնոլոգիաների ոլորտում կանանց մասնագիտական որակավորման և իրազեկության բարձրացմանը, նրանց լիդերական որակների զարգացմանը: Անցում կատարել գյուղատնտեսության ոլորտում գենդերային տեսանկյունից չեզոք ծրագրերից զգայուն ծրագրերի, գյուղական բնակավայրերում իրականացվող բոլոր ծրագրերում ներառել գենդերային բաղադրիչը, որը հաշվի առնի գյուղաբնակ կանանց յուրահատուկ շահերը և ուղղված լինի նրանց իրավունքների պաշտպանությանը:*

Քաղաքական կուսակցություններին.

– *տեղերում կուսակցական կառույցների միջոցով անցկացնել միջոցառումներ՝ ուղղված կուսակցության անդամ գյուղաբնակ կանանց լիդերական որակների զարգացմանը և կանանց առաջմղմանը դեպի որոշումների կայացման մակարդակներ:*

Հոդված 15.

Տղամարդկանց և կանանց հավասարությունն օրենքի առջև

Հիմնախնդիրները

- *Էական տարբերություններ սեռերի իրավահավասարությունն ամրագրող օրենսդրության և գործնական կյանքում առկա գործելակերպի արդյունքում ստեղծված փաստացի իրավիճակի միջև:*
- *Կանանց ցածր իրազեկությունը օրենքի առջև տղամարդկանց և կանանց հավասարությունը երաշխավորող օրենսդրության վերաբերյալ:*
- *Պետական քաղաքականության մեջ և ծրագրերում գենդերային որոշակիության մոտեցման բացակայություն:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի ներկայացրած համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ[107]

- Կոմիտեն ափսոսանք է հայտնում, Կոնվենցիայի 1-ին հոդվածին համապատասխան, մասնակից պետության օրենսդրության մեջ կանանց նկատմամբ թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի խտրականության հստակ և համապարփակ սահմանման բացակայության առնչությամբ:
- Կոմիտեն մտահոգված է նաև, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի (ա) կետին համապատասխան՝ մասնակից պետության օրենսդրության մեջ իր հստակ ամրագրումը չի ստացել կանանց և տղամարդկանց միջև հավասարության սկզբունքը:
- Կոմիտեն անհանգստություն է հայտնում կանանց նկատմամբ խտրականությունն արգելող հստակ և համապարփակ օրենսդրական դրույթների բացակայության առնչությամբ, ինչպես նաև այն առթիվ, որ մասնակից պետությունը նախապատվություն է տալիս չեզոք գենդերային քաղաքականությանը և ծրագրերին, որը կարող է հանգեցնել ուղղակի, ինչպես նաև անուղղակի խտրականությունից կանանց ոչ բավարար պաշտպանության, խոչընդոտել կանանց և տղամարդկանց միջև իրավական և փաստացի հավասարության ձեռքբերում և կանանց՝ մարդու իրավունքների ճանաչման ու կիրարկման մոտեցումներում անհետևողականության հանգեցրել:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները խտրականության վերացման առնչությամբ Հայաստանի ներկայացրած համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ[108]

- Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանն ընդունել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող համապատասխան ազգային օրենսդրություն՝ Կոնվենցիայի 1-ին և 2-րդ (բ) հոդվածներին համապատասխան, որը կներառի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խտրականությունը:

107.Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները/ 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 7, կետ 12:
108. Նույն տեղում, կետ 13:

– Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանն արագացնել գենդերային հավասարության մասին օրենքի ընդունումը և տղամարդկանց ու կանանց հավասարության սկզբունքն ամրագրել գենդերային հավասարության մասին օրենքում՝ Կոնվենցիայի 2-րդ (ա) հոդվածին համապատասխան:

– Կոմիտեն նաև խրախուսում է մասնակից պետությանը բարձրացնել իրազեկությունն անուղղակի խտրականության բնույթի և փաստացի հավասարության հասկացության վերաբերյալ կառավարության պաշտոնյաների, դատական իշխանության և հասարակության շրջանում:

– Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանն իր քաղաքականության և ծրագրերի ոլորտում գենդերային առումով որոշակի ձևակերպումներ ընդունել:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

Օրենքի առջև տղամարդկանց և կանանց հավասարության սկզբունքը, ինչը Կոնվենցիայի առանցքային դրույթներից է, արտացոլված է ՀՀ Սահմանադրությունում (2005 թ.), ՀՀ քրեական օրենսգրքում (2005 թ.), ՀՀ ընտանեկան օրենսգրքում (1998 թ.) և մի շարք այլ իրավական ակտերում՝ հիմնականում սեռի հատկանիշով խտրականության արգելման պահանջով: ՀՀ օրենսդրության մեջ բացակայել են հստակ սահմանմանումները կանանց նկատմամբ թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի խտրականության վերացման վերաբերյալ:

Առկա օրենսդրության կիրարկումը չի նպաստել հատկապես անուղղակի խտրականությունից կանանց բավարար պաշտպանությանը, կանանց և տղամարդկանց միջև իրավական և փաստացի հավասարության ձեռքբերմանը: Օրենսդրական ակտերում, պետական քաղաքականության մեջ և ծրագրերում անուղղակի խտրականության բնույթի և փաստացի հավասարության վերաբերյալ հստակ սահմանումների բացակայությունը սահմանափակել է նաև կանանց՝ իրազեկվելու և սեփական իրավունքների պաշտպանության համար պայքարելու հնարավորությունները: Հանրապետությունում առայսօր դատական պրակտիկայում օրենքի առջև սեռերի հավասարության խախտման կապակցությամբ Կոնվենցիայի դրույթները կիրառելու նախադեպեր չեն արձանագրվել

2013 թ. մայիսին ՀՀ Ազգային ժողովի ընդունած «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը երաշխավորում է օրենքի առջև կանանց և տղամարդկանց իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության հավասարությունը՝ օրենքով սահմանված բացառությունների հաշվառմամբ: Սակայն այդ հարցում բնակչության զգալի մասի իրավագիտակցության ցածր մակարդակը, օրենքի դրույթների անբավարար և ոչ պրոֆեսիոնալ լուսաբանումը, առանձին գենդերային եզրույթների միտումնավոր մեկնաբանումները (սեռային այլասերման իմաստով) հասարակության որոշակի շերտերում ձևավորել են գենդերային հիմնախնդիրների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտ: Ուստի օրենքում որոշակի փոփոխություններ (հստակեցումներ) կատարելու խնդիր է ծագել:

Երաշխավորություններ

ՀՀ Ազգային ժողովին.

- *նախաձեռնել քննարկումներ և հանրային լսումներ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի փարընթերցումների տեղիք տվող դրույթների պարզաբանման համար:*

ՀՀ կառավարությանը.

- *մշակել և իրականացնել միջոցառումներ հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց նկատմամբ ուղղակի և անուղղակի խտրականության վերացման և տղամարդկանց հետ փաստացի իրավահավասարություն ու հավասար հնարավորություններ ապահովելու համար,*
- *պետական քաղաքականության մեջ և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում ներդնել գենդերային մոտեցումների որոշակի ձևակերպումներ,*
- *ձեռնարկել միջոցառումներ ՋԼՄ-երի միջոցով սեռերի իրավահավասարության հաստատման գործում երկրի ստանձնած պարտավորությունների քարոզչության և բնակչության իրավական լուսավորության ուղղությամբ:*

Հոդված 16.

Կանանց նկատմամբ խտրականության վերացումը ամուսնության և ընտանեկան հարաբերություններին վերաբերող հարցերում

Հիմնախնդիրները.

- *Ամուսնության նվազագույն տարիքը և դրա հետ կապված բացառությունների վերացումը:*
- *Պաշտոնապես չգրանցված ամուսնությունների հետևանքով առաջացող խտրականությունը կանանց նկատմամբ:*
- *Հասարակության մի մասի անբավարար իրավական գիտելիքները ամուսնության և ընտանեկան հարաբերություններում տղամարդկանց և կանանց հավասարության մասին:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի ներկայացրած համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ[109]

Կոմիտեն վերահաստատում իր նախորդ Եզրափակիչ դիտարկումներում և Երեխայի իրավունքների կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներում արտահայտված այն մտահոգությունը, որ ամուսնության համար սահմանված նվազագույն տարիքը տղամարդկանց համար 18, իսկ կանանց համար՝ 17 տարեկանը, կանանց նկատմամբ խտրականություն է:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները խտրականության վերացման առնչությամբ Հայաստանի ներկայացրած համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ[110]

Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանը.

- կանանց համար ամուսնության նվազագույն տարիքը բարձրացնել մինչև 18 տարեկանը,
- վերացնել նվազագույն տարիքի հետ կապված ցանկացած բացառություն՝ համաձայն Կոնվենցիայի 16-րդ հոդվածի և Կոմիտեի թիվ 21 Ընդհանուր հանձնարարականի:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման համատեքստում

ՀՀ ընտանեկան օրենսգրքում (2004), ընդհանուր առմամբ, արտացոլված են եղել Կոնվենցիայի դրույթները ամուսնության և ընտանեկան հարաբերություններին վերաբերող հարցերում տղամարդկանց և կանանց հավասարության մասին, բացառությամբ ամուսնության նվազագույն տարիքի տարբերակված մոտեցման, երբ տղամարդկանց համար այն սահմանված էր 18, իսկ կանանց համար՝ 17 տարեկանը:

109. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 14 :
110. Նույն տեղում, կետ 15:

2013 թ. ապրիլին ՀՀ Ազգային ժողովը, ի կատարումն Կոնվենցիայի 16-րդ հոդվածի պահանջի և Կոմիտեի թիվ 21 Ընդհանուր հանձնարարականի, օրենսդրական փոփոխություն մտցրեց ՀՀ ընտանեկան օրենսգրքում, որի համաձայն թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար սահմանվում է ամուսնության միևնույն տարիքը՝ 18 տարեկան: Կոնվենցիայի կոմիտեն հորդորել էր նաև վերացնել ամուսնության նվազագույն տարիքի հետ կապված ցանկացած բացառություն, սակայն ընտանեկան օրենսգրքում կատարված վերոնշյալ փոփոխությունը դեռևս ամբողջությամբ չի բավարարում Կոմիտեի հանձնարարականի պահանջները, քանի որ ամրագրում է հետևյալ բացառությունները. «Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է»[111]:

Հայաստանի Հանրապետությունում տիրապետող արժեհամակարգում տարածված չէ և մոտ ապագայում չի կարող լայն տարածում գտնել պայմանագրային ամուսնության ինստիտուտը: Պայմանագրային ամուսնությունները դեռևս հազվադեպ են և գրեթե բացարձակապես տեղի են ունենում օտարերկրյա քաղաքացիների հետ:

ՀՀ-ում ավանդաբար զգալիորեն տարածված են եղել փաստացի չգրանցված ամուսնությունները, որոնց մեծագույն մասն իր դրդապատճառներով, ներընտանեկան փոխհարաբերությունների բնույթով և հետևանքներով էապես տարբերվում է Արևմուտքի երկրներում գոյություն ունեցող քաղաքացիական ամուսնություններից: Հայ իրականության մեջ փաստացի ամուսնությունները չգրանցելու հիմնական պատճառներն են. 1) հասարակության որոշակի շերտերում ձևավորված կարծրատիպը՝ ընտանիքն ընկալել որպես ոչ իրավական ինստիտուտ, 2) ընտանեկան իրավունքի նորմերի վերաբերյալ ամուսինների, հատկապես՝ կանանց ցածր իրազեկությունը: Փաստորեն չգրանցված ամուսնական կյանքի ընթացքում, առավել ևս՝ ամուսնալուծվելիս հաճախ խախտվում են ամուսինների, հիմնականում՝ կանանց գույքային և այլ իրավունքները:

111. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 1:

Երաշխավորություններ

ՀՀ Ազգային ժողովին.

- *կազմակերպել քննարկումներ՝ նվիրված Կոնվենցիայի համապատասխան դրույթների և Կոմիտեի հանձնարարականների մեկնաբանմանը՝ նպատակ ունենալով օրենսդրորեն վերացնել ամուսնության նվազագույն տարիքի հետ կապված որևէ բացառություն:*

ՀՀ կառավարությանը.

– *ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ամուսնությունների գրանցումը պաշտոնական գրանցամատյաններում պարտադիր դարձնելու նպատակով:*

ՀՀ կառավարությանը և հասարակական կազմակերպություններին.

– *ձեռնարկել միջոցառումներ հանրակրթության ու ԶԼՄ-ների միջոցով Կոնվենցիայի համապատասխան դրույթների և Կոնվենցիայի կոմիտեի հանձնարարականների քարոզչության և ընտանեկան իրավունքի նորմերի լուսաբանման ուղղությամբ՝ այդ հարցերի շուրջ բնակչության իրավական գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով:*

ՄԱՍ 4

Բռնությունը կանանց նկատմամբ

Հիմնախնդիրները.

- *Հասարակության մեջ կանանց դեմ բռնության բոլոր ձևերի, հատկապես՝ ընտանեկան բռնության նկատմամբ ձևավորված անհանդուրժողականության բացակայությունը:*
- *Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի պետական միջոցների անբավարարությունը:*
- *Բռնության զոհերի իրավական, սոցիալական անպաշտպան դրությունը:*

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[112]

- Կոմիտեն վերահաստատում է իր մտահոգությունն այն փաստի կապակցությամբ, որ չկա այն ընկալումն ու ընդունումը, որ կանանց հանդեպ գենդերային բռնությունը, մասնավորապես՝ ընտանեկան բռնությունը, շարունակում է մասնակից պետության մեջ նշանակալից խնդիր լինել, ինչպես նշվել է նախորդ Եզրափակիչ դիտարկումներում (A/5738): Կոմիտեն նաև ափսոսանք է հայտնում, որ մասնակից պետության զեկույցում ոչինչ չի ասվում այդ երևույթի մասին:
- Կոմիտեն նաև անհանգստացած է կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի մասին հատուկ օրենսդրության բացակայությամբ, ինչպես նաև նրանով, որ քրեական օրենսգրքում ընտանեկան բռնությունը որպես առանձին հանցագործություն չի դիտարկվում և, որպես այդպիսին, չի քրեականացվում: Կոմիտեն նաև մտահոգված է, որ չկա կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեմ պայքարով զբաղվող հատուկ պետական մարմին կամ համակարգող հաստատություն:
- Կոմիտեն մտահոգություն է հայտնում բռնության զոհերի համար անհրաժեշտ ապաստարանների բացակայության կապակցությամբ:
- Կոմիտեն իր մտահոգությունն է արտահայտում ընտանեկան բռնությունների վերաբերյալ դատական կարգով քննված գործերի վերաբերյալ տվյալների բացակայությամբ, ինչպես նաև կանանց հանդեպ սեռական և բռնության այլ ձևերի վերաբերյալ դատական գործերի անբացատրելի քիչ քանակով:
- Կոմիտեն նաև մտահոգված է կանանց հանդեպ բռնության տարբեր ձևերի կիրառման դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայությամբ, այդ թվում նաև այն կանանց թվաքանակի վերաբերյալ, որոնք ընտանեկան բռնության հետևանքով սպանվել

112. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները / 43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /, կետ 22:

են իրենց ամուսնու, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, ինչպես նաև տուժածներին աջակցություն տրամադրող ծառայությունների առկայության վերաբերյալ:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ[113]

– Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանն առաջնային ուշադրություն դարձնել կանանց հանդեպ բռնության բոլոր ձևերի վերացման վրա, հատկապես՝ ընտանեկան բռնության, և այդ խնդրի վերացման համար ձեռնարկել համակողմանի միջոցառումներ՝ Կոմիտեի թիվ 19 Ընդհանուր հանձնարարականին համապատասխան:
– Կոմիտեն խնդրում է մասնակից պետությանն անհապաղ ընդունել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին ուղղված հատուկ օրենսդրություն: Այդպիսի օրենսդրությունը պետք է սահմանի, որ կանանց և աղջիկների հանդեպ բռնությունները քրեական հանցագործություն և քաղաքացիական իրավախախտում են, մեղավորները պետք է ենթարկվեն դատական հետապնդման և համապատասխան պատժի, և այն կանայք ու աղջիկները, որոնք բռնության զոհ են դարձել, պետք է հնարավորություն ունենան օգտվելու իրավական և այլ պաշտպանության արդյունավետ միջոցներից, ինչպես նաև ապահովի բոլոր շրջաններում պատշաճ ապաստարաններ՝ բավարար քանակով:
– Կոմիտեն այնուհետև առաջարկում է ուսուցում անցկացնել դատական իշխանության, պետական պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ իրավապահ մարմինների և առողջապահական հիմնարկների աշխատակիցների շրջանում, որպեսզի ծանոթացնեն կանանց հանդեպ բռնության տարբեր ձևերի նրբություններին, հատկապես՝ ընտանեկան բռնության, և որպեսզի նրանք կարողանան զոհերին անհրաժեշտ աջակցություն տրամադրել:
– Կոմիտեն նաև առաջարկում է անցկացնել կանանց հանդեպ բռնության հարցերով հասարակական իրազեկման բարձրացման և անհանդուրժողականության լրացուցիչ քարոզարշավներ:

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունը Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի երաշխավորությունների կատարման համատեքստում

Հաստատելով կողմնակցությունը գենդերային հատկանիշով բռնության կանխման և վերացման քաղաքականությանը, ճանաչելով բռնությունը որպես մարդու իրավունքների ամենակոպիտ խախտման ձև՝ ՀՀ կառավարությունը որոշակի աշխատանք է իրականացնում բռնության՝ որպես սոցիալական ապաադապտացման հանգեցնող խտրական երևույթի կանխարգելման ուղղությամբ: «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրում» նախատեսվել և իրականացվել են կանանց նկատմամբ բռնության վերացմանն ուղղված միջոցառումներ:

Համաձայն Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագրի հեռանկարային ռազմավարություններին և սկզբունքներին՝ ՀՀ կառավարությունն իրականացրել է ծրագրեր՝ ուղղված ըստ գենդերային հատկանիշի խտրականության բոլոր

113. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները /43-րդ նստաշրջան, 19 հունվարի-6 փետրվարի, 2009 թ. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 7, կետ 23:

ձևերի վերացմանը, բռնության այնպիսի ձևերի կանխմանը, ինչպիսիք են մարդկանց շահագործումը և առևտուրը, բռնության ենթարկված կանանց պաշտպանությունն ապահովող օրենսդրական դաշտի կատարելագործմանը, ինչպես նաև նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնման և սոցիալական ծառայությունների կողմից խորհրդատվական աջակցման համակարգի կատարելագործմանը:

2005 թ. ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում սահմանված են բռնության ձևերը և բռնության ենթարկված անձանց պետական աջակցության մեխանիզմները: Վերջին տարիների ընթացքում Ազգային վիճակագրական ծառայությունը, հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ, անցկացրել է չորս հետազոտություն ընտանիքում և աշխատավայրում կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալներ հավաքելու նպատակով:

Հայաստանի կառավարությունը միացել է 2006 թ. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված փաստաթղթին գենդերային բռնության դեմ պայքարին ուղղված արշավի անցկացման մասին, որի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել և իրականացրել է գործողությունների ծրագիր: Այն ներառում էր մի շարք միջոցառումներ՝ ուղղված հասարակական հատվածի և շահագրգիռ միջազգային կազմակերպությունների հետ կլոր սեղանների, հանդիպումների անցկացմանը, տպագիր նյութերի, թռուցիկների, պաստառների տարածմանը, համացանցում տեղեկատվության զետեղմանը:

Տարբեր միջոցառումների ընթացքում անցկացվել է կարիքների ուսումնասիրություն, վիճակագրական տվյալների հավաքում և իրավիճակի գնահատում: 2008 թ. մայիսին անցկացվել է խորհրդաժողով, որտեղ ուրվագծվել են կառավարության և քաղաքացիական հատվածի հետագա միջոցառումները բռնության բոլոր ձևերի հաղթահարման ոլորտում: Պետական կառույցները և հասարակական կազմակերպությունները մասնակցել են Եվրոպայի խորհրդի կազմակերպած ակցիային և միջոցառումներին, որոնք անցկացվել են Եվրոպայի խորհրդի կողմից հայտարարված Ընտանեկան բռնության դեմ պայքարի տարվա շրջանակներում:

2008-2012 թթ. կառավարության ծրագրում ներառվել էին բռնության կանխման և բռնության ենթարկված անձնանց ու նրանց ընտանիքների անդամների սոցիալական աջակցության հարցերը: Հաստատվել և իրականացվել է 2009-2011 թթ. միջնաժամկետ «Բռնության ենթարկված անձանց համար ճգնաժամային կենտրոնների ստեղծում» ծրագիրը: Սկսած 2008 թ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գործառույթներին ավելացել է բռնության ենթարկված անձանց սոցիալական պաշտպանությունը: ՀՀ պետական բյուջեում նախատեսվում է ֆինանսավորում բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցելու համար: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային կենտրոնի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերում ներառվել է գենդերային կրթության դասընթաց, որի շրջանակներում հաղորդվում են գիտելիքներ բռնության հիմնախնդիրների վերաբերյալ:

Հայաստանը միացել է մի շարք միջազգային փաստաթղթերի, որոնք ուղղված են մարդկանց առևտրի դեմ պայքարին, իսկ 2007 թ. ձևավորվել է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերի խորհուրդ ՀՀ փոխվարչապետի՝ տարածքային կառավարման նախարարի գլխավորությամբ:

2010 թ. կառավարության որոշմամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կից ստեղծվել է Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական պետական հանձնաժողով, որը պարբերաբար քննարկում է բռնության հաղթահարման հետ կապված հարցեր: 2011 թ. ՀՀ կառավարությունը հաստատել է հանձնաժողովի կողմից մշակված «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը», որտեղ նշված են պետության ընդհանուր ռազմավարությունը և քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, ինչպես նաև «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը»:

Ձեռնարկվել են որոշակի միջոցներ բռնության և թրաֆիքինգի դեմ պայքարի օրենսդրական կարգավորման ուղղությամբ: 2008 թ. ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: Նոր քրեական օրենսգիրքը լրացվել է հոդվածներով, որոնք նախատեսում են աշխատանքային և այլ ձևերի շահագործման նպատակով անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատժի խստացում:

Չնայած պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների կողմից ձեռնարկված միջոցներին՝ երկրի աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի առանձնահատկությունները, գործազրկությունը, հարկադրված աշխատանքային միգրացիան, կանանց տնտեսական կախվածությունն ընտանիքում, կենցաղային խնդիրների լուծման դժվարությունները նպաստել են գենդերային հատկանիշով բռնության աճին, առաջին հերթին՝ կանանց և աղջիկների նկատմամբ, որոնք դառնում են աշխատավայրում սեռական ոտնձգությունների և բռնի աշխատանքային շահագործման զոհ:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համատեղ 2008-2009 թթ. անցկացված համազգային հարցումը բացահայտել է, որ կանանց 25%-ը զուգընկերոջ կողմից ենթարկվում է հոգեբանական բռնության, 8,9%-ը՝ ֆիզիկական, 3,3%-ը՝ սեռական, 9,5%-ը՝ ֆիզիկական և սեռական: Վերահսկվող վարքագծի է ենթարկվում կանանց 61,0%-ը:

Բռնության երեք ձևերին (հոգեբանական, ֆիզիկական և սեռական) ենթարկված կանանց տարիքային կազմի համեմատական վերլուծությունը բացահայտել է, որ բռնության տոկոսն էապես ցածր է 20-24 և 25-34 տարիքային խմբում, իսկ առավել մեծ չափով բռնության են ենթարկվում 35-44 և 45-59 տարիքային խմբերի կանայք:

Հոգեբանական բռնության են ենթարկվում 20-24 տարեկան կանանց 7,9%-ը, 35-44 տարեկան կանանց 29,1%-ը և 45-59 տարեկան կանանց 27,4%-ը: Ֆիզիկական բռնության են ենթարկվում 20-24 տարեկան կանանց 2,3%-ը, 35-44 տարեկանների 10,5%-ը և 45-59 տարեկանների 9,9%-ը:

Սեռական բռնության են ենթարկվում 35-44 տարեկան կանանց 5,7%-ը, 25-35 տարեկան կանանց 2,3%-ը և 45-59 տարեկան կանանց 2,6%-ը:

Ըստ ոստիկանության տվյալների՝ 2012 թ. գրանցվել է բռնության 766 դեպք, որոնցից 621-ը կանանց նկատմամբ, 145-ը՝ տղամարդկանց: Գրանցվել է անչափահասների նկատմամբ բռնության 15 դեպք[114]:

Վերջին տարիներին ակտիվացել է քաղաքացիական հասարակության ինստիտուտների աշխատանքը բռնության արմատական վերացման ուղղությամբ: Երևանում, Գյումրիում և

114. Տվյալները հրապարակել է ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության երրորդ վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Նելլի Դուրյանը:

մի շարք մարզերում (Մարտունի, Եղեգնաձոր, Արմավիր) ստեղծված ճգնաժամային կենտրոնները՝ «Ընտանեկան կենտրոն», «Հույս», «Մոր և մանկան կենտրոն», «Կանանց ռեսուրս կենտրոն», «Տուն-Հայաստան», ինչպես նաև «Մայրական Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան, Թուֆենկյան հիմնադրամի Կանանց աջակցման կենտրոնը իրականացնում են բռնության զոհերի պաշտպանության ծրագրեր, կազմակերպում թեժ գծեր, վստահության հեռախոսներ, ապաստարաններ, մատուցում բժշկական, իրավաբանական և սոցիալական խորհրդատվություն, իրականացնում տեղեկատվական, վերլուծական և կրթական ծրագրեր:

Ընտանիքում բռնության ենթարկված կանանց համար Երևանում և երկրի մի շարք տարածքներում «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ստեղծված թեժ գծին յուրաքանչյուր ամիս 150 կին է դիմում օգնության խնդրանքով: Ընտանիքում առավել հաճախ բռնության ենթարկվող կանանց միջին տարիքը տատանվում է 26-ից մինչև 32 տարեկան: 2011 թ. ընթացքում ազգային թեժ գիծը ստացել է 2032 հեռախոսազանգ, որոնցից 1678-ը՝ ընտանեկան, 1042-ը՝ հոգեբանական, 612-ը՝ ֆիզիկական և 24-ը՝ սեռական բռնության վերաբերյալ: Երևանի ճգնաժամային կենտրոնում գրանցվել է 1325 այց, որոնցից 288-ը կապված են հոգեբանական, 160-ը՝ ֆիզիկական, 11-ը՝ սեռական բռնության հետ: Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի և Լոռու մարզերում գործող ճգնաժամային կենտրոնները ստացել են 1247 հեռախոսազանգ, որոնցից 806-ը կապված են ընտանեկան բռնության հետ[115]:

«Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպության կողմից ստեղծված արագ արձագանքման խումբը[116] տարվա ընթացքում բացահայտել է կանանց նկատմամբ բռնության 20 դեպք, որոնցից 14-ը՝ ֆիզիկական բռնության, այդ թվում 7-ը՝ մահացու ելքով:

Հասարակական կազմակերպությունները հանրապետական և մարզային մակարդակի կառավարման կառույցների աջակցությամբ իրականացնում են որոշակի աշխատանք կանանց նկատմամբ բռնության հիմնախնդիրների մասին հասարակայնության իրազեկության բարձրացման ուղղությամբ՝ հասարակության մեջ բռնության բոլոր ձևերի նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտ ձևավորելու նպատակով:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան, Հայաստանի բժիշկ ուսանողների ասոցիացիան ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասի երկրներում» ծրագրի շրջանակներում իրականացրել են եռամյա ծրագիր, որը նպատակաուղղված էր գենդերային հատկանիշով բռնության հաղթահարմանը և երկրում գենդերային խտրականության արմատական վերացմանը, գենդերային բռնության կանխման ուղղությամբ պետության ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Ծրագիրը, որը ներառում էր 5 հիմնական բաղադրիչ՝ գենդերային բռնության հիմնախնդրի ուսումնասիրություն, հասարակության իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, աջակցություն օրենսդրության և քաղաքականության կատարելագործմանը, գործուն ազգային մեխանիզմի ստեղծում, տարածքային համագործակցության զարգացում և համակարգում, հնարավորություն տվեց հանրապետության բոլոր մարզերում անցկացնելու սեմինարներ և հանդիպումներ՝ ուղղված գենդերային խտրականության և գենդերային բռնության, ընտանե-

115. Տվյալները ներկայացրել է «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության հասարակայնության հետ կապերի պատասխանատու Դիանա Սարգսյանը 2012 թ. մարտի 6-ի մամուլի ասուլիսում:
116. swv.am

կան բռնության սոցիալական հետևանքների մասին բնակչության տարբեր խմբերի՝ կանանց և տղամարդկանց, դպրոցական ուսուցիչների և բուհերի դասախոսների, լրագրողների, բժիշկների, հանրակրթական դպրոցների սովորողների, ուսանողների իրազեկության բարձրացմանը:

Վերջին տարիներին հայ հասարակությունն ավելի ակտիվ է քննարկում բռնության հիմնախնդիրը, ընտանեկան բռնության փաստերն ավելի լայնորեն են հրապարակվում զանգվածային լրատվության միջոցներում, թեման այլևս արգելված և զուտ ընտանեկան հարց չէ:

Ընտանեկան բռնության հիմնախնդրին հասարակայնության ուշադրությունը հրավիրելու նպատակով հասարակական կազմակերպություններն անցկացնում են տարբեր ակցիաներ, կազմակերպում ֆոտոցուցահանդեսներ, տարածում բուկլետներ, թռուցիկներ, նկարահանում տեսանյութեր («Ո՛չ ընտանեկան բռնությանը», «Ուժեղ տղամարդը չի բռնանում կնոջ վրա», «Լռության գոտի»): Կանանց հասարակական կազմակերպություններն ակտիվ մասնակցություն են ունենում կանանց նկատմամբ բռնության վերացմանն ուղղված պայքարի միջազգային օրվա առթիվ միջոցառումների անցկացմանը: ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ հասարակական հատվածը պետական կառույցների հետ համատեղ անցկացնում է ամենամյա տեղեկատվական-լուսավորական «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավը:

Չնայած պետության կողմից ձեռնարկվող միջոցներին և հասարակական կազմակերպությունների աշխատանքներին՝ բռնության հիմնախնդիրը, հատկապես՝ գենդերային հատկանիշով, կանանց նկատմամբ, Հայաստանում դեռևս սուր բնույթ է կրում: Միաժամանակ ցածր է բնակչության իրազեկության մակարդակը գենդերային հատկանիշով բռնության վերաբերյալ, հասարակությունը համապատասխան վերաբերմունք չի ցուցաբերում բռնության և թրաֆիքինգի զոհերի նկատմամբ: Դեռևս առկա է հասարակական կյանքի բոլոր ոլորտների, հայ հասարակության բարոյական և արժեքային համակարգի վրա բռնության և թրաֆիքինգի ազդեցության թերագնահատումը հասարակության կողմից, աճում է մարմնավաճառության մեջ ներգրավվող կանանց թիվը:

2013 թ. հունիսին «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան, որը միավորում է 7 հասարակական կազմակերպություններ, բողոքի ցույց անցկացրեց ՀՀ կառավարության շենքի առջև՝ պահաջելով ընդունել ընտանեկան բռնության մասին օրենքը:

Հայաստանի օրենսդրությունը չի նախատեսում գենդերային հատկանիշով բռնության ձևերի տարբերակում: Մինչև օրս չի ընդունվել ընտանեկան բռնության մասին օրենքը, որը կարող էր դառնալ ընտանիքում և հասարակության մեջ կանանց և երեխաների անվտանգության երաշխիքը: Բացակայում են գոյություն ունեցող նորմատիվ-իրավական ակտերի կատարման և բռնության որևէ ձևից կանանց պաշտպանության համար իրավական, քաղաքական, վարչական և մշակութային բնույթի կանխարգելիչ միջոցների մշտադիտարկման մեխանիզմները:

Հայ հասարակության զարգացման ներկա փուլի իրողությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին ձեռնարկված միջոցները՝ ուղղված հասարակության ուշադրությունն ընտանեկան բռնության գոյություն ունեցող հիմնախնդրի վրա կենտրոնացմանը և հասարակության մեջ ընտանեկան բռնության նկատմամբ անհանդուրժողականության ձևավորմանը, դեռևս բավականաչափ արդյունավետ չեն: 2013 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին սոցիալական ցանցերում և որոշ ԶԼՄ-ներով տարածվող հոդվածները, որոնք ուղղված

էին «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենքի ընդունման դեմ և վարկաբեկում էին գենդերային գաղափարախոսությունը, բացահայտում են հակազդեցությունը նաև ընտանեկան բռնության մասին օրենքին:

Հասարակության մեջ դեռևս ուժեղ են հայրիշխանական կարծրատիպերը, հատկապես՝ ընտանիքում կնոջ դերի վերաբերյալ: Ակտիվ կերպով քարոզվում է այն վարկածը, թե գենդերային հավասարությունը հանգեցնում է ազգային արժեքների և հայ ավանդական ընտանիքի քայքայման, կարծիք է արտահայտվում ներընտանեկան փոխհարաբերություններին պետության միջամտության անթույլատրելիության մասին:

Հոգեբանական, ֆիզիկական, տնտեսական, կենցաղային բռնության և թրաֆիքինգի հաղթահարման հիմնախնդիրների լուծումն անհրաժեշտություն է առաջացնում կատարելագործելու նորմատիվ-իրավական դաշտը, համակարգելու բնակչության լայն շերտերի իրազեկության բարձրացման ուղղությամբ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ջանքերը:

Երաշխավորություններ

ՀՀ Ազգային ժողովին.

– *Ընդունել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին ուղղված հատուկ օրենք և օրենսդրական ակտեր, որոնց մեջ կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը պետք է սահմանվի որպես քրեական հանցագործություն և քաղաքացիական իրավախախտում, որը ենթակա է դատական հետապնդման և պատժի:*

ՀՀ կառավարությանը.

– *ՀՀ Ազգային ժողով ներկայացնել «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը,*
– *ավելացնել ապաստարանների և բռնության զոհերի վերականգնման և վերասոցիալականացման կենտրոնների ցանցի ընդլայնմանն ուղղված պետական ֆինանսավորման ծավալը,*
– *ուժեղացնել Ընդդեմ գենդերային բռնության ռազմավարական ծրագրի իրականացման վերահսկողությունը, պլանավորել ամենամյա հաշվետվություններ ծրագրի իրականացման վերաբերյալ վարչապետին կից կանանց խորհրդի նիստերում:*

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական պետական հանձնաժողովին.

– *հանձնաժողովի նիստերում պարբերաբար լսել նախարարությունների և գերատեսչությունների հաշվետվությունները պլանով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ:*

Հասարակական կազմակերպություններին.

- *ակտիվացնել աշխատանքը հասարակության իրազեկության բարձրացման և կանանց ու երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի հանդեպ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորման ուղղությամբ,*
- *զարգացնել սերտ համագործակցություն ԶԼՄ-ների, իրավապահ մարմինների և դատական իշխանության հետ՝ ապահովելով հասարակայնության իրազեկությունը կանանց և երեխաների նկատմամբ բռնության դեպքերի մասին, աջակցել հասարակական գիտակցության մեջ պաշտպանվածության զգացողության և անձի դեմ բռնության համար պատժի անխուսափելիության հարցում վստահության ձևավորմանը:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետությունում որոշակի դրական տեղաշարժ է դիտվում կանանց վիճակի բարելավման, իրավունքների պաշտպանության և հնարավորությունների ընդլայնմանն առնչվող հարցերի ողջ սպեկտրով: 2009-2012 թթ. ընթացքում ՀՀ կառավարությունը նախաձեռնել է մի շարք միջոցառումներ Հայաստանի երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականների կատարման, գենդերային քաղաքականության իրականացման և հանրապետությունում գենդերային իրավիճակի բարելավման ուղղությամբ:

   Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ երկրում ստեղծվել են որոշակի նախադրյալներ կանանց նկատմամբ խտրականության վերացման և գենդերային հավասարության հասնելու համար: Այսուհանդերձ Հայաստանի կառավարությունը պատշաճ չի կատարել երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները որոշ կարևոր հոդվածների և գործունեության ոլորտների վերաբերյալ:

   Մի շարք հիմնախնդիրների առնչությամբ իրավիճակը գրեթե չի փոխվել: Կանանց քաղաքական մասնակցության, իշխանության ղեկավար մարմիններում և տնտեսական, քաղաքական և այլ որոշումների ընդունման մակարդակում նրանց ներկայացվածության տեսանկյունից նկատվում է աննշան դրական տեղաշարժ, այնուհանդեձ օրենսդիր և գործադիր իշխանության բարձր մակարդակներում և տեղական ինքնակառավարման մարմիններում պահպանվում է գենդերային անհավասարակշռությունը:

2. 2010 թ. փետրվարին ՀՀ կառավարության կողմից Գենդերային քաղաքականության հայեցակարգի հաստատումը և 2011 թ. մայիսին «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» որոշման ընդունումը և իրականացումը լուրջ նախադրյալներ են ստեղծել կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու և գենդերային հավասարության ու արդարության հասնելու, պետության ծրագրերում և քաղաքականության մեջ գենդերային մոտեցումը ներդնելու ուղղությամբ թե՛ կառավարական, թե՛ ոչ կառավարական կառույցների ջանքերի ակտիվացման, ավելի նպատակամետ և արդյունավետ գործողությունների համար: Հայեցակարգի արդյունավետ իրագործումը կնպաստի «ժողովրդավարության ճեղքվածքի» հաղթահարմանը և կայուն, դինամիկ ու հաստատապես զարգացող հասարակության կայացմանը, որը արժանապատիվ կյանք է ապահովում բոլոր քաղաքացիների համար՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց:

3. Մեծ աշխատանք է տարվել ազգային օրենսդրությունը կոնվենցիային և միջազգային-իրավական այլ փաստաթղթերին համապատասխանեցնելու ուղղությամբ: Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի հանձնարարականների համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովը 2013 թ. մայիսին ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը ուժի մեջ է մտել:

   ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություն է կատարվել, և գենդերային քվոտան ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների ցուցակներում ավելացել է 15%-ից մինչև 20%: 20-տոկոսանոց քվոտա է ամրագրվել նաև Երևան քաղաքի ավագանու ընտրություններում քաղաքական կուսակցությունների ցուցակների համար:

   Սակայն իրավաբանական նորմերի և գործնականում դրանց փաստացի իրականացման միջև առկա է զգալի տարբերություն:

4. Անհրաժեշտ են ՀՀ կառավարության հետևողական, կանոնավոր և արդյունավետ ջանքեր, ինչպես նաև սոցիալական գործընկերություն նրա և հասարակական կազմակերպությունների միջև՝ հայրիշխանական կարծրատիպերը հաղթահարելու, նոր իրավահավասար, ժողովրդավարական գենդերային մշակույթ ձևավորելու համար: Հասարակական կազմակերպությունները պետք է ստանձնեն առաջանցիկ ակտիվ դեր գենդերային գրագիտության տարածման և բնակչության իրազեկության մակարդակի բարձրացման քարոզարշավների անցկացման գործում, պետք է հետևողականորեն պարզաբանեն, որ պաշտպանվածությունը խտրականությունից՝ որպես Կոնվենցիայում և ազգային օրենսդրությունում ամրագրված համընդհանուր իրավունք, և գենդերային հավասարության սկզբունքը համամարդկային արժեքներ են:

5. Սույն այլընտրանքային զեկույցը ոչ միայն Կոնվենցիայի իրականացման ընթացքի, այլև, հիմնվելով Կոնվենցիայի կոմիտեի հանձնարարականների վրա, նրա մի շարք առանցքային դրույթների հետ կապված իրավիճակի գնահատման փորձ է: Ուսումնասիրված տվյալների և նյութերի վերլուծությունը, դրա հիման վրա մշակված երաշխավորությունները, որոնք հասցեագրված են առաջին հերթին ՀՀ կառավարությանը, քաղաքացիական հասարակության ինստիտուտներին և բոլոր շահագրգիռ հաստատություններին, կարող են օգտագործվել առաջնահերթությունների և խնդիրների հստակեցման, գործողությունների օպտիմալացման, ավելի արդյունավետ համադասման և համագործակցության նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Աշխատանքի եզրափակիչ փուլում զեկույցը քննարկվել է հասարակական կազմակերպությունների լիդերների ու ակտիվիստների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Զեկույցի ներկայացումն անցկացվել է զեկույցի մեթոդաբանության, Կոնվենցիայի հոդվածների վերլուծության արդյունքում վեր հանված հիմնախնդիրների ծանոթացման ձևաչափով, մասնակիցների ուշադրությունն հրավիրվել է դրանց հաղթահարման երաշխավորությունների վրա:

Կանանց ՀԿ-ների լիդերները և քաղաքական կուսակցությունների կին ներկայացուցիչները ընդհանուր առմամբ հավանություն են տվել զեկույցի բովանդակությանը, նրանում արված եզրակացություններին և երաշխավորություններին: Զեկույցի քննարկման ընթացքում արվել են առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել հեղինակների կողմից և ընդգրկվել զեկույցի վերջնական շարադրանքում:

Մասնավորապես, քննարկման ընթացքում մի շարք առաջարկություններ են արվել՝ կապված գենդերային հավասարության ազգային մեխանիզմի՝ որպես կանանց նկատմամբ խտրականության հաղթահարման գործիքի, և կանանց իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծման, հանրապետությունում կանանց իրավունքների գծով օմբուդսմանի ինստիտուտի հիմնադրման անհրաժեշտության հետ:

Մասնակիցները նշել են նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու անհրաժեշտությունը, որոնք կընդգրկեն իրավունքների իրականացման գործիքներն ու մեխանիզմները:

Հատուկ ուշադրություն է հատկացվել «գենդեր» եզրույթի պարզաբանման և գենդերային քաղաքականության իրականացման ուղղությամբ պետական մարմինների կողմից տարվող աշխատանքների ակտիվացմանը:

Ընդգծվել է աշխատանքային իրավունքների, կրթության և որակյալ առողջապահության մատչելիության վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման անհրաժեշտությունը:

Կրթության և առողջապահության ոլորտներում խտրական գործելակերպի քննարկման ընթացքում տարածաշրջանների ներկայացուցիչները շեշտադրել են դրա սրությունը գյուղական վայրերում: Հավանության է արժանացել այլընտրանքային զեկույցում արված երաշխավորությունները կրթության, առողջապահության ոլորտների զարգացման պետական ծրագրերում հաշվի առնելու անհրաժեշտությունը, որպեսզի կանխվեն զեկույցում վեր հանված բացասական միտումները:

Առաջարկություններ են արվել հայաստանյան ՀԿ-ների գործունեության համակարգում միջազգային ասպարեզում փորձարկված հասարակական վերահսկողության մեխանիզմների ներդրման վերաբերյալ:

Մասնակիցներն առանձնապես ընդգծել են կանանց հասարակական սեկտորի հզորացմանը, նաև խտրական գործելակերպի հաղթահարման գործում ՋԼՄ-ների և քաղաքացիական հասարակության մյուս ինստիտուտների հետ շփումների ընդլայնմանն աջակցելու անհրաժեշտությունը:

Արծարծվել է խտրականության հաղթահարման գործում կանանց համերաշխության հիմնախնդիրը կուսակցությունների հետ համագործակցության համատեքստում, ինչպես նաև Կոնվենցիայի դրույթների իրականացման վերահսկողության և անհրաժեշտ օրենսդրական նախաձեռնությունների առաջմղման հիմնախնդիրը:

Մի շարք առաջարկություններ, որոնք արվել են քննարկման ընթացքում, անմիջականորեն չէին առնչվում ՄԱԿ-ի Կոնվենցիայի դրույթներին, սակայն վկայում էին, որ լսարանը բավական շահագրգիռ է հասարակության լիարժեք զարգացումը խոչընդոտող գենդերային հիմնախնդիրների լուծման հարցում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Տեղեկատվություն Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի մասին

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան հիմնադրվել է 1995 թ. դեկտեմբերի 13-ին:

Ասոցիացիան ոչ կառավարական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է:

Ասոցիացիան ունի 35 մասնաճյուղ Երևանում և հանրապետության մարզերում: Ասոցիացիան Համալսարանական կանանց միջազգային ֆեդերացիայի (IFUW) անդամ է:

Ասոցիացիայի առաքելությունն է.

- *նպաստել Հայաստանում ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության ձևավորմանը,*
- *աջակցել մարդու իրավունքների պաշտպանության նախաձեռնություններին, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը,*
- *աջակցել հասարակության մեջ կանանց կարգավիճակի բարձրացմանը, կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցության ակտիվացմանը, գենդերային խտրականության և գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը,*
- *աջակցել քաղաքացիական նախաձեռնությունների խթանմանը, «խաղաղության մշակույթի» քարոզչությանը և խաղաղասիրական գործընթացների իրականացմանը:*

Ասոցիացիան 2000 թ. հունվարին մասնակցել է Ժնևում կայացած «Պեկին+5» ՀԿ-ների ֆորումին և 2000 թ. հունիսի 5-9-ը՝ Նյու Յորքում ՄԱԿ-ի Ընդհանուր վեհաժողովի «Կանայք 2000. գենդերային հավասարություն, զարգացում և խաղաղություն XXI դարում» հատուկ նստաշրջանին:

2004 թ. դեկտեմբերին Ասոցիացիան մասնակցել է «Պեկին+10» գործընթացների շրջանակներում Ժնևում կայացած նախապատրաստական խորհրդաժողովին և 2005 թ. փետրվար-մարտ ամիսներին Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 49-րդ նստաշրջանին:

2010 թ. մարտին Ասոցիացիան մասնակցել է «Պեկին+15» գործընթացների շրջանակներում Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի աշխատանքներին:

Ասոցիացիայի գործունեությունը

Ասոցիացիան գործում է որպես մի կառույց, որը զբաղվում է ազգային ու միջազգային մակարդակներով քաղաքացիների իրավունքների պաշտպանությամբ, սոցիալական լոբինգով, գիտական և կրթական, տեղեկատվական և վերլուծական ու խորհրդատվական գործունեությամբ:

Ասոցիացիան իրականացրել է «Կանայք և զարգացումը. իրավունքներ և հնարավորություններ», «Խաղաղության մշակույթ հանուն զարգացման», «Կինը և հասարակությունը: Գենդերային հավասարությունը ժողովրդավարության զարգացման հեռանկարում», «Կանանց նախաձեռնություններ. աջակցություն ժողովրդավարությանը և քաղաքացիական հասարակությանը», «Աջակցություն Պեկինի գործողությունների ծրագրին, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և Հազարամյակի զարգացման նպատակների գնահատում», «Գենդերային գիտելիքները՝ որպես ժողովրդավարական մշակույթի և իրավագիտակցության նախադրյալ», «Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում», «Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն», «ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ որպես օրենսդիր իշխանությունում և տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային հավասարակշռության հասնելու գործիք», «Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում համայնքային և տնտեսական զարգացման գենդերային տեսանկյունները», «Կանանց քաղաքական մասնակցությունը 2012 թվականի խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին», «Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում կանանց արդյունավետ մասնակցության կարողությունների հզորացում», «Կանանց քաղաքական լիդերություն. գենդերային հավասարության և մասնակցային ժողովրդավարության զարգացման հեռանկարները Հայաստանում» ծրագրերը:

1997-2014 թթ. Ասոցիացիան անց է կացրել 18 միջազգային և ազգային խորհրդաժողովներ.

- *Փոխակերպվող հասարակության կանանց հիմնախնդիրները և իրավունքները. իրականություն և հեռանկարներ*
- *Կանայք և զարգացումը. իրավունքներ և հնարավորություններ*
- *Կինը և հասարակությունը: Գենդերային իրավահավասարությունը ժողովրդավարության զարգացման հեռանկարում*
- *Հայաստանի կանայք 21-րդ դարում: Գենդերային հավասարություն. կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցություն*
- *Խաղաղության մշակույթ. ժողովրդավարություն և մշակույթների երկխոսություն*
- *Կանանց շարժումը Հայաստանում. նախապատվություններ և զարգացման ռազմավարություններ*
- *Քաղաքակրթությունների երկխոսություն. ժողովրդավարություն և խաղաղություն*
- *Ժողովրդավարության կոնսոլիդացում. քաղաքացիական հասարակությունը գլոբալացման հեռանկարում*
- *Մասնակցության ժողովրդավարություն. քաղաքացիական նախաձեռնություններ և պատասխանատվություն*
- *Անցումային շրջան. քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարության կառուցման հարցերը*
- *Գենդերային հավասարության հասնելու հեռանկարները Հայաստանում. քաղաքական և իրավական հայեցակետերը*
- *Կանանց նկատմամբ խտրականության հաղթահարումը՝ որպես քաղաքական հիմնախնդիր*

- *Կանանց մտավոր ներուժն ի նպաստ ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման*
- *Մարդու իրավունքները՝ որպես համամարդկային և բարոյական արժեք*
- *Մասնակցային ժողովրդավարությունը՝ որպես քաղաքացիական հասարակության կայացման գործոն*
- *Կանայք և մասնակցային ժողովրդավարությունը: Տեղական ինքնակառավարման համակարգը կայուն զարգացման հեռանկարում*
- *Կանայք տեղական ինքնակառավարման համակարգում. մասնակցային ժողովրդավարության զարգացման ուղիները Հայաստանում*
- *Հասարակական շարժումը Հայաստանում արդի փուլում. նոր մարտահրավերներ և հեռանկարներ*

Կանանց լիդերության դպրոց

2000 թ. հիմնադրված Կանանց լիդերության դպրոցի «Բարձրագույն քաղաքական դասընթացներ» ծրագրով 34 հոսքերում սովորել և ավարտել են քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների 1210 կին լիդերներ և ակտիվիստներ:

Ասոցիացիայի կենտրոնները

Գենդերային հետազոտությունների կենտրոնը և Տեղեկատվական ու Վերլուծական կենտրոնները ստեղծվել են 1996 թ., Խաղաղության և ժողովրդավարության կենտրոնը՝ 2000թ.: Կենտրոնները իրականացնում են հետազոտական ու կրթական ծրագրեր և հանդես են գալիս որպես մտավոր ներուժի կառույցներ՝ աջակցելով Ասոցիացիայի բազմաբնույթ գործունեությանը:

Գենդերային հետազոտությունների կենտրոն

Ասոցիացիան նախաձեռնել է Հայաստանի 11 համալսարաններում և 35 միջնակարգ հանրակրթական դպրոցներում գենդերային կրթության ինստիտուցիոնալացման գործընթացը. մշակվել են գենդերային կրթության պետական չափորոշիչները, ուսումնական ծրագրերը և ձեռնարկները, պատրաստվել է դասախոսական և ուսուցչական կազմը:

Ժողովրդավարության և խաղաղության կենտրոն

2000-2014 թվականներին ավելի քան 110 կլոր սեղանների բանավեճերին և երկխոսություններին մասնակցել են գրեթե 3300 կանայք և տղամարդիկ՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Արտաշատում, Իջևանում, Դիլիջանում, Գորիսում, Աշտարակում, Կապանում, Էջմիածնում, Աբովյանում և Ստեփանավանում:

Ժողովրդավարության և խաղաղության կենտրոնը դարձել է յուրօրինակ «հանրային համաժողով», որտեղ հասարակայնորեն ակտիվ կանանց և տղամարդկանց հնարավորություն է տրված մասնակցելու բանավեճերի՝ նվիրված հասարակական զարգացման այնպիսի հրատապ հիմնահարցերի, ինչպիսիք են ժողովրդավարության մշակույթը, քաղաքացիական և քաղաքական երկխոսությունը, քաղաքացիական համաձայնությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, խաղաղարար գործունեությունը, ժողովրդավարական ինստիտուտների կայացումը, ընտրական գործընթացների կատարելագործումը, քաղաքացիական մասնակցության և քաղաքացիական պատասխանատվության բարձրացումը, ինչպես նաև տեսակետ ձևավորելու հնարավորություն է ընձեռվել հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացների վերաբերյալ:

Ժողովրդավարության և խաղաղության ու Գենդերային հետազոտությունների կենտրոնները 2002-2006 թթ. կատարել են սոցիոլոգիական հետազոտություններ հետևյալ հիմնախնդիրների վերաբերյալ.

- *փոխակերպվող հասարակության պայմաններում Հայաստանում կանանց դրության և սոցիալական կարգավիճակի ուսումնասիրում,*
- *դարաբաղյան կոնֆլիկտի քաղաքական չկարգավորվածության պայմաններում պատերազմի և խաղաղության նկատմամբ կանանց և տղամարդկանց վերաբերմունքի բացահայտում,*
- *կանանց ակտիվության աստիճանի, քաղաքացիական հասարակության ինստիտուտներից և իշխանական կառույցներից տղամարդկանց և կանանց սոցիալական սպասումների ուսումնասիրում,*
- *նախընտրական իրավիճակի օբյեկտիվ պատկերի, կանանց և տղամարդկանց էլեկտորալ նախապատվությունների, ընտրական գործընթացներում հասարակական կազմակերպությունների տեղի և դերի ուսումնասիրում,*
- *Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման և ժողովրդավարացման գործընթացների միտումների և դինամիկայի ուսումնասիրում:*

Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները հրատարակվել են հետևյալ վեց ժողովածուներում.

- *«Կանայք զարգացման մեջ: Ժամանակակից հասարակության գենդերային հիմնահարցեր» (1999)*
- *«Ընտրությունները և ժողովրդավարությունը՝ քաղաքացիական հասարակության գործոն» (2003),*
- *«Ընտրական ժողովրդավարություն: Ունի՞ արդյոք Հայաստանը այլընտրանք» (2003, ռուսերեն և հայերեն),*
- *Հայ հասարակության ժողովրդավարացում. գենդերային հեռանկարներ (2004, ռուսերեն)*
- *«Հայ հասարակության ժողովրդավարացումը. իրողություններ և միտումներ» (2004, հայերեն),*
- *«Քաղաքական մասնակցությունը անցումային հասարակությունում. գենդերային հավասարության չափումը» (2006, ռուսերեն, հայերեն և անգլերեն):*

Լրատվական-վերլուծական կենտրոն

Ասոցիացիայի լրատվական-վերլուծական կենտրոնը 1997-2014 թթ. հրատարակել է 92 անուն ժողովածուներ՝ նվիրված քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության, քաղաքակրթությունների երկխոսության, գլոբալացման, օրենսդրության գենդերային փորձաքննության հիմնախնդիրներին և «Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի 55 թողարկում՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն

Ասոցիացիայի հրատարակած գրքերն ու ժողովածուները

- 13 միջազգային և ազգային խորհրդաժողովների նյութերի ժողովածուներ:
- «Գենդերային հետազոտություններ» մատենաշարի 38 ժողովածուներ և ուսումնամեթոդական նյութեր:
- «Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի 55 թողարկումներ՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:
- «Փոփոխությունների պլանավորում» մեթոդական ձեռնարկ:
- Պեկինի 4-րդ համաշխարհային խորհրդաժողովի գործողությունների ծրագիր:
- Սիսիլիա Անդերսեն «Գենդերը և զարգացումը» գործնական ձեռնարկ:
- Կանանց անվտանգությունը հասարակությունում, ընտանիքուն, ամենուր. բռնության հաղթահարման ուղիներ:
- «Կանանց քաղաքացիական մասնակցություն» մարզերում անցկացված սեմինարների նյութերի ժողովածու:
- Ուսանողների, երիտասարդ դասախոսների և հետազոտողների խորհրդաժողովների նյութերի 6 ժողովածուներ:
- «Ընտրական ժողովրդավարություն. ունի՞ արդյոք Հայաստանը այլընտրանք»:
- «Պեկինն իմ կյանքում. 10 տարի անց»:
- «Գենդերային կրթությունը բարձրագույն դպրոցում» պետական կրթական չափորոշիչների նախագիծ:
- «Գենդերային իրավիճակը Հայաստանում: Փոխակերպման գործընթացների հետևանքները և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը Հազարամյակի նպատակների համատեքստում». (մոնիտորինգի արդյունքներ):
- «ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի գենդերային վերլուծություն»:
- «Քաղաքական մասնակցությունը անցումային հասարակությունում. գենդերային հավասարության չափումը»:
- «Հայաստանի Հանրապետությունում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ»:
- «Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն» միջազգային իրավական փաստաթղթերի և ՀՀ օրենքների ժողովածու:
- «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007 թթ.» Այլընտրանքային զեկույց:
- «Կին քաղաքական գործիչներից կին քաղաքական գործիչներին: Ձեռնարկ»
- «Գենդեր և լրագրություն: Ուսումնական ձեռնարկ»
- «Գենդեր և լրագրություն: Մեթոդական ձեռնարկ»
- «Նոր սերնդի լիդերները հազարամյակների խաչմերուկում: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի 15 տարին քաղաքացիական հասարակության ասպարեզում»
- «Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին: Վերլուծական տեսություն»:
- «Կանայք քաղաքականության մեջ և քաղաքականության մասին: Հայաստանում 2012 թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին և ավարտից հետո անցկացված հարցազրույցների ժողովածու»
- «Կանանց մասնակցությունը Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների 2012-2013 թվականների ընտրություններին: Վերլուծական տեսություն»
- «Մասնակցային ժողովրդավարությունը տեղական ինքնակառավարման համակարգում: Ձեռնարկ»

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2009-2012 ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

Այլընտրանքային զեկույց

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ
Գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար
Ջեմմա Հասրաթյան

Խմբագրական կազմ՝ **Ջեմմա Հասրաթյան** (գլխ. խմբագիր), **Անահիտ Հարությունյան, Լիլիթ Զաքարյան, Գայանե Արմաղանովա, Թամարա Հովնաթանյան, Գայանե Մերոյան**

Տեքստի խմբագրում՝ **Անահիտ Հարությունյան**

Համակարգչային ապահովում՝ **Գայանե Մերոյան**

Մակետավորումը՝ **Անուշ Մեսրոպյան**

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
0002, Երևան, Սարյան, 22, 12-րդ հարկ
Հեռախոս՝ (374 10) 53 68 02
Ֆաքս՝ (374 10) 53 67 92
Էլ.փոստ awue.armenia@gmail.com

Տարածվում է անվճար

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am